

551

n-88


551

Բ-88

Ն. Ա. ՐՈՒԲԱԿԻՆ

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԿՐԱԿ

Ո՞րտեղից, ե՞րբ եւ ի՞նչպէս յայտնուեց նա եւկրի տակ:



Ռուսերէնից թարգմ. Մ. Պ.

Բազմաթիւ նկարներով

Թ ի Ֆ Լ ի Ս
Էջմիածն. Օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7

1912

24 AUG 2013

11544

05 JUL 2010

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն № 8

551

Բ-88

ԱՄ

Ն. Ա. ՌՈՒԲԱԿԻՆ

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԿՐԱԿ

Ո՞րտեղից, ե՞րբ եւ ի՞նչպէս յայտնուեց նա երկրի տակ:

100/
322526

Ոռուսերէնից թարգմ. Մ. Պ.

Բազմաթիւ նկարներով


2



Թ. Ի. Յ. Լ. Ի. Ա.

Էլեկտրաս. Օր. Ն. Աղանեանի, Պօլից. 7

1912



ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՐՍՑԱՐԻՒՐԱՄԵԱՅ

ՅՈԲԵԼԵԱՆԻ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

1512—1912

Գ Հ Ո Ւ Խ Ա.

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ՌՅԺԵՐ

Ի՞նչպէս է բացւում ծովի յատակը, եւ ի՞նչպէս են ծովի յատակից վեր բարձրանում կղզիներ:

1831 թուի յուկիսի 10-ին մի զարմանալի անցք պատահեց Միջերկրական ծովի շատ խոր տեղում, իտալական Սիկիլիա մեծ կղզու ափերից ոչ հեռու։ Յանկարծ այնտեղ պատռուեց ծովի յատակը, և դոյացաւ խոր և մեծ բացուածք։ Բացուածքի երկայնութիւնն էր մի քանի հարիւր և լայնութիւնը մի քանի տասնեակ սաժէն։ Այդբացուածքից սկզբում գոլորշի գուրս խուժեց, ապա սկս ծուխ, յետոյ երեաց ինչ որ սկ, ջրալի և եռուն բան. վեր նետուեցին ծանր քարեր, ցիրուցան փոռուեց ինչ որ մոխրագոյն բան, որ ոչ աւագ էր, ոչ մոխիր. այդ աւազը և քարերը կոյտ-կոյտ հաւաքուեցին բացուածքի եզերքին և նրանից մի ամբողջ լեռ կազմուեց ծովի յատակում։ Այդ լեռը սկսաւ աճել և բարձրանալ ծովի յատակից և վերջապէս լոյս աշխարհ գուրս եկաւ ջրի տակից։ Մի խօսքով ծովի յատակից մի կղզեակ բուսաւ, իսկ կղզեակի վրայ բարձրացաւ մի լեռ։ Այդ լեռան նոյն իսկ կատարում բացուեց մի լայն փոս, որ իշնում էր խոր ներքեւ։ Այդ փոսի մէջ ղըլթղըլթոցով եփ էր գալիս և աղմկւում հրահա-

լուած քարն այնպէս, ինչպէս հրահալուած թուջը հալոցային հնոցի մէջ։ Նրանից սիւնաձև գոլորշի էր բարձրանում։ Գոլորշու հետ միասին վեր էին նետում մեծամեծ քարեայ բեկորներ և հրահալուած քարի ցայտումներ։ Քարերը վեր էին թռչում մի քանի հարիւր սաժէն, իսկ շուգեսիւնը նրանցից էլ աւելի էր բարձր սլանում։ Ցայտումները սառչում էին օդի մէջ։ Շոգին նրանց վեր էր տանում շատ բարձր, և դրանից նրա գոյնը սպիտակի փոխանակ մոխրագոյն էր երեսում։

Այդ զարմանալի դէպքը խիստ արագ կատարուեց՝ մի քանի օրում կղզին վեր ելաւ ջրի տակից։ Նոյն ժամանակին, երբ անցքը դեռ նոր էր սկսում, ծովի այդ տեղով անցնում էր մի խտալական առեւտրական նաւ։ Նաւորդները լսեցին այդ նաւից ծովի յատակի սլատուելը, ըստորում պատահեց սա սարսափելի աղմուկով ու գոռոցով, որից ծովն էլ դողաց և ցնցուեց, և նրա վրայով վազեցին բարձրաբերձ ալիքներ, իսկ նաւը սաստիկ երերաց։ Ծովագնացները շատ վախեցան, նրանք չէին հասկանում, ինչ է կատարւում ջրի տակ, ուստի կարծում էին, թէ դա մի հրաշք է։ Նրանք բարձրացրին բոլոր առագաստները և շտապեցին հեռանալ այդ վտանգաւոր վայրից։ Հեռուից նրանք նկատեցին, որ մի ահազին ոյժ միանգամից վեր նետեց ծովի ջուրը, որ բարձրացաւ ինչպէս մի սիւն՝ տառը սաժէն բարձրութեամբ և հարիւր սաժէն շրջապատով։ Յետոյ ծովը բաժանուեց, և ջրի տակից վեր նետուեց մի թանձր ու կէծացած շոգի։ Նա գալիս էր ծովի յատակից, երկրի խորքից, կարծես, մի ահազին շոգեկաթսայից։ Նա խորտակեց ծովի յատակը, դէս ու դէն մղեց ծովը և այնպէս սաստիկ տաքացրեց ծովային ջուրը, որ մօտակայքի բոլոր ձկները սատկեցին։ Ծովն այդ տեղում աղմկւում էր թշում, իսկ ջրի տակից անդադար գոռում-գոչիւն էր

լսում, ինչպէս որոտմունք։ Նաւն այդ տեղից արդէն շատ էր հեռացել, բայց ստորջրեայ գոռոցը դեռ լսում էր։


Հէնց նոյն նաւը մի շաբաթից նորից պէտք է անցնէր այդ տեղի մօտով։ Նաւապետը շատ տարիներ արդէն նաւում էր ծովի վրայ և գիտէր, որ այդտեղ ծովը խոր է։ Սաստիկ զարմացաւ նա, երբ տեսաւ այդտեղ մի փոքրիկ կղզեակ, որ արագ բարձրացել էր ծովի յատակից։ Կղզեակի վրայ նա տեսաւ մի հրաքուղին լեռ, այլապէս ասած՝ վուլկան։

Ի՞նչ է հրաբուղին լեռը կամ վուլկանը։

Ի՞նչ է հրաբուղին լեռ։ Այսպէս կոչւում են այն լեռները, որոնց միջից գուրս են թափւում դէպի երկրի մակերեսոյթը հրահալուած քարեր, գուրս է գալիս խիստ կէծացած ջրային գոլորշի, վեր են թռչում քարեր և մանր ու սկ փոշի կամ աւազ։ Հրահալուած քարերը կոչւում են լաւա, իսկ սկ փոշին՝ վուլկանական մոխիր։ Նրանց՝ երկրի խորքից լոյս աշխարհ ենելը կոչւում է հրաքուղին լեռան արտավիժում կամ ժայթքում, որովհետեւ լեռն իսկ որ ժայթքում-փախում է նրանց իր կոկորդից։ Այդ կոկորդը կոչւում է խառնարան։ Նա թափ անցնելով ամբողջ հրաբուղին միջով գնում հասնում է մինչև երկրի թանձրութեան ստորին բացուածքը։

Այդ եղանակով է յայտնուում երկրի մակերեսոյթի վըրայ ստորերկրեայ ոյժը։ Հեռու անցեալ ժամանակներում մարդիկ կարծում էին, թէ այդ ոյժի կառավարողը մի առանձին աստուած է, որն այլևայլ ազգերի մէջ զանազան անուններով էր յայտնի։ Իտալացիները երկու հազար տարի առաջ նրան կոչում էին վուլկան, իսկ ստորերկրեայ ոյժերը համարում էին իրեն նրա ոյժեր։ Այն ժամանակուանից հրաբուղին լեռներն էլ սկսան կոչուել վուլկանի

լեռներ։ Այն օրից անցաւ շատ ժամանակ, և շատ բան փոխուեց երկրի վրայ, մարդիկ թողին վուլկան անունով առանձին աստծուն հաւատալը, որովհետև նրանք մի քանի բան իմացան ստորերկրեայ ոյժերի մասին, սկսեցին մօտից նայել նրանց, և այդ ոյժերն առանց վուլկանի էլ հասկանալի դարձան նրանց։ Բայց այդ անունն այնպէս էլ մնաց հրաբուղի լեռների վրայ։ Նրանց մինչև հիմա էլ վուլկան անունն են տալիս, իսկ ստորերկրեայ



վուլկան հրաբուղի սարը Միջնրկրական ծովում։ Այս սարը աւազակոյտի նըմանութիւն ունի։ Սարի կատարին բացւում է նրա կոկորդը կամ խառնարանը։ Կոկորդից գոլորշի է բարձրանում։

ոյժերին ասում են վուլկանական ոյժեր։ Բառը մնաց, իսկ այդ բառի վաղեմի մեկնութիւնը չմնաց, — անհետացաւ, չքացաւ, մարեց։ Նրան յաջորդեց մի բոլորովին ուրիշ հակացողութիւն և մեկնութիւն։ Վաղեմի մեկնութիւնը մոլորութիւն էր ու անհաւատառութիւն։ Նրան յաջորդեց ճիշտ և արժանահաւատ ճշմարտութիւնը։ Գիտութիւնն, այլապէս ասած գիտնական մարդիկ սառյդ պատասխաններ գտան հետեւալ մեծ և հետաքրքիր հարցերի համար՝ ի՞նչ են ստորերկրեայ, վուլկանական ոյժերը։ Ո՞րչափ է նրանց մեծու-

թիւնը։ Ո՞րքան ուժեղ են նրանք։ Ո՞րտեղից են ծագել։ Ի՞նչ են անում նրանք։ Ի՞նչ են արել անցեալ ժամանակներում։ Ի՞նչ կանեն ապագայում։ Ի՞նչ անցքեր են անցել երկրի գլուխ, որի վրայ մենք ապրում ենք։ Ի՞նչ կը պատահի նրան յետոյ։

Այդ բոլոր հարցերի դէմ կան ճիշտ և արժանահաւատ պատասխաններ, որոնք գտնուած են բազմահազար գիտուն մարդկանց ճիգերով։ Այդ մարդիկ ծնուել, ապրել և ուսել են զանազան երկրներում։ Նրանց մէջ կան և գերմանացիներ, և ֆրանսիացիներ, և ռուսներ, և անգլիացիներ, և ճապոնացիներ և շատ ուրիշները։ Նրանք ամենքը միաբան որոնում էին ճշմարտութիւնը, ամենքն ուսումնասիրում էին, զննում, վերլուծում, մտածում, համակերպում։ Թէ ի՞նչ բանի նրանք հասան, — ահա այդ մասին կը պատմուի այս գրքոյկում։ Սրա մէջ պատմուած է այն, ինչ ժողովուած և իմացուած է շատ ու շատ մարդկանց աշխատանքներով և ջննքերով։ Փառք և պատիւ այդ մարդկանց։

Ի՞նչպէս են անհետանում կղզիները երկրի երեսից։

Նոր կղզեակի համբաւը շուտով տարածուեց։ Զանազան մարդիկ, և գիտնական, և ոչ-գիտնական, գնացին նրան նայելու և ամեն մանրամասնութեամբ զննեցին նրան։ Նրանք շուտով նկատեցին, որ կղզեակը հետզհետէ աճում է ու աճում. օգստոսի 4-ին հրաբուղիսը եօթանասուն սաժէն բարձրութեան էր հասել, իսկ կղզու շրջապատը հաւասար էր վեց վերսարի։ Մի շաբաթից յետոյ նաւելի մեծացաւ, լեռն էլ աւելի բարձրացաւ։ Իսկ դրանից յետոյ լեռը, կարծես, լւեց, — դաշտեց գործելուց։ Լեռան կոկորդից այլևս գոլորշի չէր բարձրանում, և գոռոց չէր լսում ծովի յատակից։ Միայն ծովի ալիքներն էին անդադար զարկւում կղզու ափերին և սաստիկ ու

արագ ողողում նրանց. ափերը մոխրից բոլորովին փուխր էին դարձել: Կղզու վրայ մոխրը դեռ ևս տաք էր, և տեղ-տեղ քարեր էին ընկած, որոնցից մի քանիսը շատ խոշոր էին և ծանր: Նրանք բոլորը լեռան ներսից էին դուրսնետուած: Այդտեղ էլ ընկած կային շատ չեշաքարեր *):

Անցաւ երկու շաբաթ,—և ծովն արդէն սաստիկ ողողել էր կղզին, որից նա առաջուանցից կրկնապատիկ փոքրացել էր. մի շաբաթից յետոյ աւելի փոքրացաւ, իսկ հոկտեմբեր ամսին միանգամայն չքացաւ կղզին. նա ծովի ալիքներից ողողուելով անհետացաւ ջրի տակ: Ծովի յատակում կղզու փոխարէն մնացին միայն ստորջրեայ ժայռեր:

Դարձեալ մի այսպիսի դէպք պատահեց Միջերկրական ծովում, նոյնպէս Սիկիլիա կղզուց ոչ հեռու: Լողում էր ծովի վրայ մի անգիտական առևտրական շոգենաւ: Այդտեղ ծովը խիստ խոր է՝ մօտ երկու վերստ: Լաւ եղանակ էր. բայց, կարծես, հեռուից որոտմունքներ էին լսւում: Յանկարծ շոգենաւը սաստիկ ցնցուեց, որպէս թէ ստորջրեայ ժայռի դիպաւ: Ինչ որ բան ուժգին զարկուեց նրա տակին, և ջուրն առատութեամբ ներս խուժեց նաւը:

Նաւորդները շատ վախեցան: Նրանք մի կերպ փակեցին բացուածքը և շուտով դիմեցին նաւահանգիստ՝ վընասուած տեղը կարկատելու:

Ի՞նչ էր պատահել: Ահա ինչ. ծովի յատակի ահարկու խորքից, կարծես պայթիւնով, վեր էր նետուել մի շատ մեծ քար: Այդ քարը ջրի միջից անցնելով զարկուել էր շոգենաւի ողնափայտին և պոկել տարել էր տախ-

*) Չեշաքարը լաւայի պաղած փրփուրն է: Նրանով կահագործները կարասիքին փայլ են տալիս: Նա ծախւում է ամեն դեղագամառանոցներում:

տակի մէկ ու կէս սաժէն՝ մեծութեամբ մի կտորը:

Շոգենաւի նաւապետը հասկացաւ բանն ինչումն է. Նրանց շոգենաւը դիպուածով անցել էր ծովի հէնց այն տեղով, ուր նոյնպէս բացուել էր ծովի յատակը և պատահել ստորջրեայ արտավիժուամ: Բայց որովհետև այդ պատահել էր սարսափելի խորութեան մէջ, ուստի ծովը կարողացել էր մեղմացնել ստորջրեայ ոյժը և չէր թոյլ տուել նրան անցնել դէպի ծովի մակերեսոյթը, դէպի լոյս աշխարհ:

Ահա այդ որոտմունքն էր, որ նաւորդները լսել էին, թէպէտ չէին հասկացել, թէ որտեղից է գալիս:

Կէծացած կղզի սառը ծովում:

Հարիւր տարի առաջ պատահեց նաև մի ապշեցնող անցք սառը ծովում, Հիւսիսային Ամերիկայի ափերից ոչ հեռու: Այդ ծովում գտնւում են Ալէուտեան կղզիները, որոնց բնակիչներն ալէուտներ են: Այդ խեղճ ժողովուրդը տգէտ է և ընկճուած, իսկ երկիրն—աղքատ: Նրանց ապրուստի միակ միջոցն է փոկ և ձուկ որսալը, որի համար նրանք իրանց թեթև նաւակներով գնում են ծովի հեռաւոր կողմերը: Ալէուտեան կղզիների մէկից 45 վերստ հեռու, ծովի մէջ, կայ մի ժայռ Ունալաշկի անունով, որը միայնակ երևում է ծովից: Նրա վրայ ոչ ոք չի բնակւում, միայն փոկերը ջրից դուրս գալով՝ ամբողջ խմբերով տաքանում են այդտեղ: Ահա այստեղ են գալիս ալէուտները փոկ որսալու: 1795 թուին այդ ժայռի մօտակայքում յանկարծ մի առանձին մշուշ յայտնուեց: Մշուշը թանձր էր ու խիտ և կանգնած էր մշտապէս ծովի միենոյն տեղում: Նրան հեռուից, Ունալաշկի կղզուց կարելի էր տեսնել, իսկ թէ ինչ էր կատարում մշուշի մէջ, անկարելի էր նըշմարել: Ալէուտները շատ էին զարմացած այդ մշուշի վը-

բայ և չէին հասկանում, թէ ինչ է նշանակում դա, շուրջն ամեն տեղ երկինքը պարզ է, իսկ ծովի միայն մի տեղի վրայ մշուշ է, և կանգնած է խիստ յամառ կերպով։ Այդ մշուշով բոլորովին ծածկուել էր և այն ժայռը, ուր գընում էին ալէուտները փոկային շահաւէտ որսի։ Իսկ մըշուշի ժամանակ որս անելը խիստ վտանգաւոր է։ Անցաւ մի տարի, — մշուշը դեռևս միենոյն տեղումն է կանգնած։ անցաւ երկրորդը, — մշուշը չի անհետանում։ Երկար սպասեցին ալէուտները մշուշի անցնելուն, վերջապէս սպասելուց ձանձրացան։ Նրանց մէջ քաջասիրտ մէկը գտնուեց և վճռեց բաղդ փորձել, — անցնել մշուշի միջով մինչև ժայռը։ Նստեց նաւակ և գնաց։

Սի քանի օր անցած—չանցած՝ վերադարձաւ մեր
քաջասիրտն այնտեղից վախեցած և սարսափով պատմեց
ինչ տեսել էր։ Նա տեսել էր, որ ծովը ժայռի շուրջը եփ
է գալիս ինչպէս եռացող ջուր, իսկ մշուշի մէջ, կարծես
բոց է փայլում։ Նա հազիւ էր ազատուել կախարդուած
տեղից և ոչնչով չէր համոզւում կրկին գնալ այնտեղ։ Ա-
լէուտները լսելով այդ պատմութիւնը՝ տիսուր կախեցին
գլուխները, որովհետև այժմ նրանց համար ընդ միշտ կո-
րած էր որարդութիւնն այդ ժայռի վրայ։ Այդ ժայռը
«չար ոգիների բնակարան» է դարձել,—բնակատեղ այն
սատանայի, որի մասին խօսում են նրանց քահանաները։

Այլես մի քանի տարի անցաւ, —յանկարծ մշուշն ինք-
նիրան անհետ կորաւ։ Հիմա ալէուտները տեսան, որ նոյն
տեղում, ուր գտնւում էր փոքրիկ ժայռը, մի մեծ կղզի
է բարձրացել, կղզու վրայ մի լեռ է կանգնած, իսկ լե-
ռան կատարից դուրս է գալիս ծուխ և շոգի, գիշերներն
էլ նրա վրայ հրացուք է երեւում։ Պարզ է որ ստորերկ-
րեայ ոյժերը — չար ոգիներն են բարձրացրել կղզին ծովի
յատակից։

Բարձրացաւ խոր ծովից ակղզին, և նրա վրայ հրաբուղի
լեռը շատ տարիներ անընդհատ գործում էր: Նա դուրս էր
ժայթքում շոգի և մոխիր. նրա կոկորդից կատարի վրա-
յով վայր էր հոսում կարմիր հրաշէկ լաւա,—ուրիշ խօս-
քով ասած,—երկրի խորքի մեծագօր տաքութիւնից հա-
լուած քար: Լեռան կոկորդից այլևս թոշում էին քարեր,
իսկ երկիրն այդ ժամանակ ուժգին ցնցւում էր: Այդ երկ-
րաշարժից շատ վնասուեցին խեղճ ալէուտները: Նա շատ
անգամ քարուքանդ արեց նրանց խղճուկ գիւղերը:

Անցաւ դարձեալ մի քանի տարի. ալէուտները քիչ-
քիչ ընտելացան հրաբռուղիս լեռանը։ 1806 թուին մի քա-
նի վայրենիներ միասին նստեցին իրանց նաւակները և գը-
նացին նոր կղզին։ Նրանք ափ դուրս եկան և պտտեցին
նրա շուրջը։ Կղզու շրջապատը երեսուն վերստ էր, իսկ
լեռան բարձրութիւնը կէս վերստից աւելի։ Լեռան գագա-
թից լաւա էր հոսում դէպի ծով, և կղզու գետինը տաք
էր։ Ալէուտները փորձեցին բարձրանալ լեռան գագաթը,
բայց չկարողացան. ժայռերը շատ սեպ էին և կէծացած,
իսկ նրանց տակից անդադար մի ինչ որ խեղդող շոգի էր
դուրս գալիս։ Վաստակաբեկ ուղերութիւնից ալէուտները
քաղց զգացին. մօտները փոկի միս կար. Նրանք այդ մի-
ուր թաղեցին կէծացած հողի մէջ, ուր նա շատ շուտով
խորովուեց, այնպէս որ կրակ վառելու կարիք չեղաւ.

Այդ ժամանակուանից ալէուտները նորից սկսեցին յաճախել նոր կղզին և առաջուան պէս փոկեր որսալ:

Այնուհետև շատ ճանապարհորդներ եղան այդ կըդ-
գում, նրան առանձին անուն էլ տուին, որ որոշուի միւս
կղզիներից, —կոչեցին նրան Ս. Յովիհաննէս Աստուածա-
բանի կղզի։ Այդ կղզին մինչև այսօր էլ գոյութիւն ունի.
Նա զարմանալի է՝ մերթ մեծանում է, մերթ փոքրանում։
Երբեմն նա ամբողջ տարիներով աճում է ու աճում, բայց

Ամսում են տարիներ, երբ նա անդադար փոքրանում է, կարծես, հալում ծովի մէջ: Նա այն ժամանակ է աճում, երբ հրարուղիսը գործում է. սա դուրս է ձգում լաւ, մոխիր, չեշաքար, և դրանցից կղզին մեծանում է: Իսկ այն ժամանակ է նա հալում, երբ հրարուղիսն անգործ է, այն ժամանակ ալիքներն անդադար ողողում են նրան: Այնպէս էլ է պատահել, որ այդ կղզու մօտակայքում յանկարծ ջրի տակից բարձրացել են ուրիշ կղզեակներ: Բարձրանում է մի այդպիսի կղզեակ, աճում է, աճում և վերջապէս միանում Պ. Յովհաննէս Աստուածաբանի կղզու հետ:

Սուրեկրեայ մեծ ոյժերը:

Այս կերպով են յայտնում ծովի յատակից կղզիներ երկրի այլ և այլ վայրերում: Այսօր այստեղ խոր ծով է, իսկ մի քանի շաբաթից կամ օրից յետոյ նոյն տեղում արդէն կղզի է: Այսպիսի կղզիներ ծովերի և ովկիանոսների շատ խոր տեղերից անգամ բարձրացել են: Զուրը նրանց առջև դէպի ամեն կողմ ընկրկել է, և ծովը չի կարողացել յաղթել ստորերկրեայ ոյժերին:

Յայտնի է որ ջուրը թեթև չէ. նրա իւրաքանչիւր վեդրօն երեսուն ֆունտ է կշռում: Ծովը ճեղքել-բաժանելու համար մեծ ոյժ է պէտք՝ մի քանի միլեարդ փութ վերցնելու ոյժ: Իւրաքանչիւր միլեարդը հազար միլիոն է, այսքան փութ հաշուելն անգամ հեշտ չէ. եթէ մի ըուպէում 100 փութ կարողանաս հաշուել, մի միլեարդ հաշուելու համար 20 տարի է հարկաւոր, եթէ գիշեր-ցերեկ հաշուելու լինես. ուրիշն ստորերկրեայ ոյժն այնքան մեծ է, որ այսքան փութ ջուր վեր է բարձրացնում: Նա մինչև անգամ 10 սաժէն բարձրութեամբ սիւնածե վեր է

նետում ջուրը: Նաև մեծ ոյժ է պէտք ծովի յատակը խորտակելու համար:

Մի խօսքով ասած, ստորերկրեայ ոյժն այնչափ մեծ է, որ մարդ երևակայել կը դժուարանայ:

Այդ ոյժը ծովիցն էլ աւելի ուժեղ է. նա ինքը ծովը ճեղքելով անցնում է, բայց չի թողնում, որ երկրի ներսը ջուր անցնի: Ծովային ալիքների տակ ջուրն ուժգին կը-ուիւ է մղում հրահալուած լաւայի և երկրի տակից բըդիսած գոլորշու հետ, կռւում է, բայց յաղթել չի կարողանում:

Սուրեկրեայ ոյժերը ո՞րչափ են վեր բարձրացնում լաւան:

Մեծ ոյժ է հարկաւոր ծովային ալիքները դէս ու դէս մղելու համար, բայց և աւելի ևս մեծ ոյժ է հարկաւոր քարը ջարդելու և քարի, լեռների ու ժայռերի միշտով ճանապարհ բանալու համար, քանի որ ժայռերը դըժւարութեամբ են ջարդում վասուդով: Իսկ ստորերկրեայ ոյժը, կարծես, առանց մի առանձին դժուարութեան յաղթում է թէ քարերին և թէ լեռներին:

Այսարհում այնպիսի լեռներ կան, որոնց բարձրութիւնը մի քանի վերստ է, եթէ նրանց բարձրութիւնը ներքեցից վերև հաշուես ծովի մակերեսոյթից: Այդ լեռներն ամբողջ տարի ծածկուած են ձիւնով, որը ձմեռ-ամառ չի հալւում, որովհետեւ մի քանի վերստ մեզնից բարձր մըշտապէս ցուրտ է և սառնամանիք: Այդպիսի բարձր լեռներ տաք կողմերում էլ կան, ուր ամենաբարձր լեռների գագաթները նոյնպէս ամբողջ տարի ծածկուած են ձիւնով: Այսպիսի լեռան գագաթը հասնել շատ դժուար է, բայց ստորերկրեայ ոյժն այնոեղ էլ է հասնում: Այդ ոյժը, այնպիսի ահարկու բարձրութեան հասնելու համար, ճանա-

պարհ է բաց անում իրան, այն էլ լեռան ներսում, քարի մէջ:


Անա ինչ են պատմում ճանապարհորդներն այդ գարմանալի լեռների մասին: Տաք երկրում, Հարաւային ամերիկայի մէջ, մի բարձր լեռ կայ Կոտոպախի անունով, որի բարձրութիւնը հինգ վերստից աւելի է: Այդ լեռան գագաթը սպիտակ է, որովհետև ամբողջ տարի ծածկուած է լինում ձիւնով: Լեռան նոյն իսկ գագաթում կայ մի մեծ ու լայն փոս կամ խառնարան: Այդ փոսը լցուած է պաղած լաւայով, որը նոյն ծանր ու ամուր քարն է:

Այդպիսի քարից մի փոքրիկ կտոր անգամ կոտրելը հեշտ չէ, ուր մնաց թէ խորտակել խառնարանի ամբողջ յատակը: Գագաթից սկսած ամբողջ լեռան միջով մինչև երկրի խորքն անցնում է մի ահագին խողովակ, որ նրա կոկորդն է: Այդ ամբողջ կոկորդը պաղած լաւայով է լցուած մինչև գագաթը, ուրիշ խօսքով ասած, հինգ վերստից աւելի մի բարձրութիւն: Եւ ստորերկրեայ ոյժն այդ բոլոր լաւան կոտրատում է շատ արագ և առանց մի առանձին դժուարութեան: Ստորերկրեայ ոյժը կտոր-կտոր ջարդում է նըրան, և այդ կտորները վեր են թռչում, ինչպէս ուռմբերը վիթխարի թնդանօթից: Երկրի խորքից նոյն բարձրութեամբ վեր է նետուած և հրահալուած լաւան և թափում խառնարանի կամ կոկորդի եզերքից դուրս: Դա կոչում է, հրաբուային լեռան արտավիժում:

Անա ինչպէս պատահեց Կոտոպախիի արտավիժումը 1876 թուին: Ամենից առաջ լեռան կոկորդից երեաց ջրաշողի, որ սկիզբը քիչ էր: Հեռուից այնպէս էր երեսում, որպէս թէ լեռը մի քիչ ծխում է: Այսպէս շարունակուեց մօտ չորս ամիս, մինչև ապրիլի 21-ը, իսկ այդ օրը կոկորդը բացուեց: Ստորերկրեայ ահոելի ոյժը լեռան միշտից խորտակեց պաղած լաւայի խցանը և կտորտանքը

գէս ու գէն ցրուեց: Գետնի տակից լսուեց խուլ ձայն և գոռգոռոց, կասես, այնտեղ վառօդարաններ էին պայմեցնում: Երկիրը ցնցուեց, նա մշտապէս ցնցուում է հրաբուղիների այսպիսի ժայթքումների ժամանակ: Երկրի խորքից բարձրանալով հասաւ մինչև գագաթը հրահալու ած լաւան: Այդ լաւայից, ինչպէս եռացող ջրից, բարձրանում էին գոլորշու թանձը քուլաներ: Շողին իր հետ առած վեր էր տանում լաւայի ցայտումներ, որոնք սև էին և օդում սառչելով կարծրանում էին: Անա դրանց են անուանում վուկանական մոխիր: Շողին այդպիսի մոխիրի ահապին մեծութեան թխակեր էր վեր հանում, այնպէս որ լեռան վրայ բարձրացաւ մի բարձր, սև, որպէս թէ ծխի սիւն: Գիշերը նա հրեղէն էր երեսում, որովհետև նրանում խաղում էր հրահալուած լաւալի շողքը: Այնտեղից մոխիրը դարձեալ ներքե էր թափում գետնի վրայ. լեռան շուրջը, կարծես, կէծացած մոխիրի անձրկ էր գալիս: Նա ծածկեց բոլոր շրջակայքը ինչ որ չոր, սև ձիւնով: Այս ինչ վուկանի կոկորդում լաւան գետնի տակից անդադար վեր էր բարձրանում: Վերջապէս նա հասաւ կոկորդի նոյն իսկ եղերքին և վայր հոսեց լեռան զառիվայրերով: Այդ զառիվայրերում, գագաթին մօտ, ինչպէս ասացինք, ամբողջ տարի ձիւն է լինում: Նա ընկած է լինում հասաւ խառնարին որովհետև տարիներով հաւաքւում է այդտեղ: Եւ ահա շիկացած, հրային-լոյժ լաւան հոսեց այդ ձիւնի վրայով: Այդ ժամանակ ձիւնն արգէն մոխրով էր ծածկուած, ուստի լաւան մոխրի վրայով հոսեց: Մոխիրը սաստիկ տաքացաւ և ձիւնը սկսեց հալուել: Սառը ձիւնից լաւան տակից պաղեց և ամրացաւ, այս պատճառով ձիւնը չկարողացաւ միանգամից հալուել: Այսպիսով առաջ եկաւ ահա ինչ լեռան մէջ կրակ է և տաքութիւն, իսկ բարձրում, լեռան շուրջը—ցուրտ օդ, և լեռան վրայ—ձիւն. ձիւնի

վրայ մոխիր է, իսկ նրա վրայ պաղած, կարծրացած, բայց դեռևս տաք լաւա, դրա վրայով էլ գետի նման հոսում է հրահալուած շիկակարմիր լաւա. հոսում է նա ինչպէս ջուր և խառնարանից միանգամից թափուում է դէպի ամեն կողմ: Նրա տակի ձիւնը քիչ-քիչ հալուում է, ջուրը ժողով- ւում ու կազմում առուներ, և հեղեղատներ ու լեռան վր- բայով ներքե հոսում: Այնպէս է թւում, թէ ջուրը և լա-



1 և 2 Վուլկանական ռումբեր. 3. Վուլկանական շլակէ բեկոր. 4. Շլակէ կոն կամ բումարօլա լաւայի հեղեղատի վրայ:

ւան կողք կողքի են հոսում սարից: Լաւան յանկարծ դուրս թափուեց լեռնից մեծ քանակութեամբ և ահարկու դըլթ- դըլթոցով դիմեց ներքե. նա լցրեց լեռան ճեղքուածքներն ու փոսերը: Սկիզբը նա արագ հոսեց, ապա քիչ-քիչ պա- ղելով հանդարտեցրեց ընթացքը: Սկիզբը նա մի բոպէում 15—20 սաժէն էր ընթանում, իսկ յետոյ—միայն մի քա- նի մատնաչափ: Սկզբում նա հրադոյն էր և փայլուն, իսկ

յետոյ թխացաւ, սեացաւ և դրսից ծածկուեց կարծր կե- ղևով, որովհետև լաւան ցուրտ օդում կարծրանում է: Այդ կեղեր շուտ-շուտ աղմկով ու գոռոցով կոտրատում էր, կտորտանքն իրար վրայ էին բարձրանում, կպչում իրար և դէպի ա- ռաջ լողում, իսկ նրանց տակի լաւան նորից սառ- չում էր, և նրա կեղեր նորից ճաք- ճքքում: Այս- պիսով լա- ւան մինչև լեռան սառ- բռար չկա- րողացաւ հասնել, ա- ւելի վաղ սառաւ: Նա ոչ մի փոր- ձանք չըե- րեց մարդ- կանց գլխին.



Լաւայի հեղեղ, որը լցրել է լեռների միջի կերճը:

դրա փոխա- րէն հալուած ձիւնի շուրջը շատ փորձանքներ բերեց: Մի ժամուայ մէջ այդ ջուրը բոլոր շրջակայ հովիտները հեղեղեց: Զուրն ի- րան հետ ներքե էր տանում ժայռերի, սառցի և չեչաքա- րի մեծ-մեծ բեկորներ, մոխիր: Կոտոպախի լեռան վրայ

կան կիրճեր՝ 50 սաժէն լայնութեամբ և 30 սաժէն խորութեամբ։ Այդպիսի կիրճեր ութը կամ իննը հատ են։ Տղմի և քարերի հեղեղներն արագ լցրին այդ բոլոր կիրճերը, ապա եղերքներից դուրս թափուելով քիչ-քիչ ծածկեցին 50—60 քառակուսի սաժէն տարածութեամբ ահազին հարթութիւնը։ Այդ հարթավայրի վրայ ջուզն իրար վրայ դիզելով քար ու ցեխ՝ հինգ սաժէն բարձրութեամբ մի կոյտ կազմեց։ Այստեղ ուր հարթավայրն էր, այժմ մի մեծ տղմի լիճ յայտնուեց, որ աղմկում էր և ալէկոծւում, իսկ վերևից, լեռան վրայից, շուտ-շուտ նրա մէջ նորմոր հեղեղներ էին թափւում։ Այդ լճից տիղմն արագապէս առաջ հոսելով՝ ծածկեց հարիւր վերստ տարածութեամբ տեղ, աւերեց կամուրջներ և հեղեղեց գիւղեր։ Տղմի հեղեղներն այդ հարիւր վերստ տարածութիւնը երեք ժամի մէջ անցան։ Մարդիկ ազատուելու միջոց չգտան։ Երեք հարիւր հոգի զոհ գնացին։


«Ես իմ կեանքում շատ եմ տեսել հրաբուխային լեռների արտավիժումներ, ասում է ականատեսը, բայց այսպիսին դեռ չեմ տեսել։ Առանձնապէս ահարեկ էր անում ինձ ստորերկրեայ ոյժերի հզօրութիւնը։ Հէ որ այդ ոյժերը ծովի մակերեսոյթից հինգ վերստ բարձր վեր հանեցին հրահալուած լաւան՝ մի այնպիսի բարձրութիւն, ուր յաւիտենական սառնամանիք է թագաւորում։ Շատ են եղել երկրի վրայ ահեղ և աւերիչ արտավիժումներ, բայց նրանցից քչերն են եղել այսպէս փառահեղ և ապշեցնող։

Երկրիս այլ վայրերում էլ գտնուում են շատ բարձր հրաբուխային լեռներ, աւելի բարձր քան Կոտոպախին։ Օրինակ, Հարաւային Ամերիկայում կայ Գվալատիերի վուկանը։ Նրա բարձրութիւնը եօթը վերստ է, այլապէս ասած՝ նա մի վերստից մի քիչ պակասով բարձր է Կոտոպախիից։ Հեռաւոր Միբիրում, կամ չատկայում կայ Կլի-

չեվեան սօպկան (մարած վուլկան)։ Նա կանգնած է հէնց ծովափում, և ծովի մակերեսոյթից մինչև նրա դագաթը ուղղահայեաց չորս վերստից աւելի է։ Այդպիսի բարձրութիւններում ձիւնը չի հալւում։ Ահա ինչպիսի ահաւոր բարձրութեան են հասցնում ստորերկրեայ ոյժերը լաւան։ Նրանք մղում են նրան երկրի խորքից և քշում դէպի վեր։

Նա՞ կան հրաբուխներ երկրի վրայ։

Այսպէս է ստորերկրեայ ոյժը։ Նա աւելի պարզ է երեան գալիս զանազան հրաբուղիների մեծ արտավիժումների ժամանակ։ Այդ արտավիժումների մասին քիչ չի գրուած զանազան հին գրքերում։ Նաև քիչ չեն պատմում նրանց մասին այլ և այլ երկրների ճանապարհորդներ։ Նրանք եղել են շատ հրաբուղիների վրայ, և իրանց աշքով տեսել են նրանց արտավիժումները։ Նրանք մանրամասն և հանգամանօրէն քննել ու զննել են այդ լեռները։ Գիտնականներից ոմանք իրանց ամբողջ կեանքը նուիրել են, որ ուսումնասիրեն հրաբուղիները և հետեւն նրանց գործողութեանը։ Այժմ երկրի վրայի բոլոր հրաբուղիները հաշուի առնուած, զննուած և նկարուած են։




Վեղուկ լեռան տեսքը Նէապոլից:
Գ. Ռ. Ի. Խ. Բ.

ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵՇ ՀՐԱՄԱՆԱՅԻՆ ԼԵՇՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՎԻԺՈՒՄՆԵՐԸ

Վ. Ե զ ո ւ կ

Իտալիայում, ծովափից ոչ հեռու, կայ մի հրաբրդ-խային լեռ, Վեղուկ անունով: Նրա բարձրութիւնը մի վերստից աւելի չէ: Հեռուից նա թխագոյն է երկում,— ոչ ճիշտ մոխրագոյն, ոչ էլ ճիշտ սև, և նման է մի ահազին աւազակոյտի, շատ թեք զառիվայրերով: Նրա գագաթն անդադար ծխում է: Վեղուկի շրջակայքը հարուստ է և արգաւանդ. կան շատ մշակուած դաշտեր, այդիներ և բազմամարդ գիւղեր: Վեղուկից հեռու չէ Նէապոլիս մեծ և վաճառաշահ քաղաքը: Երկիրն ունի ջերմ և առողջարար օդ, իսկ երկինքը համարեա մշտապէս կապուտակ է: Առաջին հայեացքից մտածել անգամ չես կարող, թէ Վեղուկն ամենաահարկու հրաբուղին է ամբողջ Եւրոպա-

յում, բայց իրօք այդպէս է, նա քիչ չարիք չի հասցրել մարդկանց վերջին հազար ութը հարիւր տարուայ մէջ: Ի՞նչպէս Վեգուվը զարքից 79 թ. Քրիստով ծննդից յետոյ: Անյիշելի ժամանակներից սկսած մինչև Քրիստոսի ծնունդը, կարծես, Վեգուվը քնած էր, նա բնաւ չէր գոր-



Հ ը բ ո ւ դ ի ւ եռան արտավիժումը
Լեռնից բարձրանում է գոլորշու սիւն, Գոլորշին վեր է հանում մախիր, որը
ցած է թափում անձնելի հետ միասին: Ճուկ-
ծում: Արդէն նրան հրաբուղիս էլ չէին համարում: Ճուկ-
մայեցոց ներոն կայսրի օրով նա, կարծես, զարթնեց, եր-
կիրը նրա շուրջը սկսաւ դողալ և ցնցուել: Մի քանի ան-

գամ սաստիկ երկրաշարժներ եղան՝ աւերուեցին քաղաք-ներ և գիւղեր։ Այն ժամանակները վեզուվի շուրջը մի քանի ծաղկափթիթ քաղաքներ կային, որոնցից ամենամեծերն ու ամենափարթամներն էին Պօմպէան և Հերքուլանումը։ Պօմպէում կային շատ հազարաւոր բնակիչներ, բազմաթիւ տաճարներ, պալատներ, ճոխ ամարանոցներ։ Կար և մի մեծ կրկէս ու թատրոն, ուր միանդամից երեսուն հազար հանդիսական կարող էր զետեղուել։ Պօմպէի բնակիչները չէին մտածում ու գուշակում, թէ ինչ վտանգ է պատրաստում իրանց համար վեզուվ լեռան կողմից։ Քրիստոսի 79 թուականին մի սարսափելի անցք պատահեց. Վեզուվը զարթնեց և մի քանի օրում կորստի մատնեց երեք քաղաք և շատ գիւղեր։ Սա պատահեց օգոստոս ամսին։ Այդ ժամանակ Պօմպէյի մօտ կանգնած էր հոռվմէական մեծ նաւատորմիղը, որի հրամանատարն էր մի խելացի և գիտնական մարդ, Պլինիոս ազգանունով, որին Պլինիոս աւագ էին կոչում։ Նրա հետ էր և նրա եղբօրորդին, նոյնպէս Պլինիոս, որին անուանում էին Պլինիոս կրտսեր։ Սա նմանապէս ուսումնական և խելացի մարդ էր, և մանրամասն նկարագրեց Վեզուվի այդ արտավիժումը։ Նախ և առաջ երկիրը սկսեց շատ ուժգին ցնցուել, զետնի տակ, կարծես, ահաւոր որոտմունք էր թնդում, ներքեց նրան մի ինչոր բան հարուածում էր ու վեր բարձրացնում և այդ հարուածները հետզինտէ աւելի էին սաստկանում։ Յանկարծ մի ահուելի հարուած եղաւ, գետինը ցնցուեց, Վեզուվի գագաթից շատ առատ ջրային շոգի բարձրացաւ, վերացաւ շատ բարձր և այնտեղ լայնարձակ թխալի նման տարածուեց։ Լեռան գագաթը պատռուեց, դուրս նետուեցին գէպի վեր բարեր, կոկորդում երեաց լաւա ու վեր բարձրացաւ սև մոխիր։ Նա շատ առատ էր, որովհետեւ ջրաշոգուց և գանազան գա-

գերից գոյացած թխալերը սարսափելի ոյժով թափ անցնելով լաւայի միջով՝ ամեն կողմ ցայտեցնում էին նրան և նրա ցայտումները տանում էին բարձր գէպի եղերը։ Այդ ցայտումները սառչելով կարծրանում էին։ Նրանք լինում են և փոշու պէս մանր, և խոշոր, և մինչեւ անգամ շատ մեծ։ Ամենամանը ցայտումները կոչւում են վուլկանական մոխիր *), մի քիչ խոշորները՝ վուլկանական աւագ, իսկ ամենախոշորները՝ «ոռումբեր»։ Լեռան վրայ բարձրացած ջրաշոգու սիւնը մոխիրի և աւագի պատճառով սկսեց մոխրագոյն և մինչեւ անգամ սև երեալ ինչպէս ծուխ, մինչդեռ իրօք ոչ մի ծուխ չկար այդտեղ և հրաբուղիներից երբէք ծուխ չի ելում։ Բայց սպիտակ ջրաշոգին, որ իր հետ մոխիր է վեր տանում, տեսքով իսկապէս խիստ նման է իսկական ծխի։ Ջրաշոգու սիւնը երկրի խորքից Վեզուվի կոկորդի միջով դուրս նետուեց ինչպէս գոլորշին շոգեկաթսայից, մի այնպիսի ոյժով, որ մինչեւ անգամ քամին չկարողացաւ մի կողմ թեքել նրան։ Այդ սիւնը շուտով բոլորովին սեացաւ։ Ահարկու սև թուխալը կախուած էր երկրի և ծովի վրայ և իրանով ծածկում էր մի քանի հարիւր քառակուսի սաժէն տարածութիւն։ Այդ թուխալը մթնեցրեց արևի լոյսը և խաւար տարածեց շուրջը։ Թխալից սաստիկ անձրեւ տեղաց, և անձրեւ հետ սկսեցին թափուել գետնի վրայ մոխիր և քարեր, վայլակներ շողացին և որոտմունք գըզրդաց։ Բայց երկնքի որոտմունքը շատ թոյլ էր համեմատելով գետնի տակի որոտի հետ։ Այդ միջոցին երկիրը սաստիկ երեաց, իսկ ծովը յետ նահանջեց ափերից։ Մարդիկ և գաղաններ դողում էին երկիւղից և ջանք էին

*) Այդ մոխիրը բնաւ վառարանի մոխիրը չէ։ Վառարանի մոխիրն այրուած փայտերի մնացորդ է, իսկ հրաբղխային մոխիրը լաւայի սառած ցայտումները։

անում հեռու փախչել սարից, առանց իրանց հաշիւ տալու թէ ուր, որովհետև Վեզուի ահաւոր արտավիժումը միագամայն անսպասելի կերպով պատահեց: Պօմպէյի ընակիչներից շատերն այդ միջոցին թատրոնումն էին, իսկ տանը մնացածները հանգիստ զբաղուած էին իրանց




Պեղուածքներ Պօմպէում, քաղաքային
պարսպի մօտ:

Ապա Մարդիկ փախչում էին և աղօթում իրանց աստուածներին, մարդու փորձանքի և կարիքի ըռալէներին միշտ աղօթում է Աստծոն:

Պլինիոս աւագն իրեւ զիտութեան նահատակ.

Այդ միջոցին Պլինիոս աւագն իր նաւով կանգնած էր Միցենում հրուանդանի առջև, որ մի քանի վերստ հեռու է Վեզուվից: Աև թուխալն այդ տեղի վրայ էլ էր



կախուած և վերեկից թափում էր մոխիր և անձրեւ։ Պլինիոսը չվախեցաւ։ Նա շատ էր լսել հրաբուղիների արտավիժումների մասին, ուստի խիստ ցանկացաւ իր աշքովը տեսնել Վեզուվի արթնանալը։ Նա հրամայեց իր նաւաստիներին նաւել Վեզուվի մօտ, և այնտեղ ցամաք դուրս եկաւ։ Նաւաստիներն ակամայ հնագանդեցին նրան։ Պլինիոսը և նրա հետ մի քանի մարդ գնացին ափի ուղղութեամբ։

Գիշերուայ պէս մութ էր։ Վերեկից մոխիր էր թափում, իսկ ոտքերի տակ գետինն էր դողդողում, երկրի խորքում, կարծես, ամպեր էին որոտում։ Վերը փայլակն էր շողողում, իսկ օդում այրուած ծծումքի սաստիկ հոտ էր փչում։

Հրաբուղիների շուրջը յաճախ է այրուած ծծումքի հոտ փչում։ Դա նրանից է պատհառում, որ վուկանի կոկորդից և լաւայից մի առանձին գազ է դուրս գալիս, որ կոչում է ծծմբային գազ այն պատճառով, որ այրուած ծծումքը միշտ այսպիսի գազ է դառնում։ օրինակ, հրավառ լուցկիների վրայ։ Գետնի տակ շատ քարերի մէջ ծծումք կայ։ Երբ քարը սաստիկ տաքից հալւում է, ծծումքն այրուելով դառնում է ծծմբային գազ և ցնդում օդի մէջ։ Մարդուս շատ վնասակար է այսպիսի գազով շնչելը։ այդ գազից մեռնում են և մարդիկ, և գազաններ, և թռչուններ։ Այդ գազը մշուշի պէս տարածւում է գետնի վրայ, թէև չի երևում։ Եթէ մարդ նրա մէջ ընկնի, իսկոյն կմեռնի։

Ահա հէսց այդպիսի գազի մէջ էլ ընկաւ Պլինիոս աւագը. շունչ քաշելը հետզհետէ դժուարանում էր։ «Յետ դառնանք, — ասացին Պլինիոսին ուղեկիցները։ — Յետ դառնանք, որովհետև մէնք անխուսափելի մահի դէմ ենք գնում»։ Բայց Պլինիոսն ականջ չարեց նրան և գնում էր

առաջ ու առաջ։ Յանկարծ նրա շուրջը, կարծես, միանգամայն օդը սպառուեց։ Միւս մարդիկ ընկան։ Պլինիոսը դեռ կանգուն էր ոտքի վրայ և անդադար առաջ էր գնում։ Վերջապէս նա էլ ուժասպառ եղաւ՝ շնչելու օդ չկար, իսկ ծծմբային խեղդող օդը, կարծես, անսպառ էր։ Պլինիոսն այլևս չկարողացաւ դիմանալ՝ շնչակտուր եղած, փռուեց գետնին։

Այսպէս կորաւ ի սէր գիտութեան այն ժամանակուայ խելացի և գիտնական մարդը։ Նա մեռաւ այն պատճառով, որ կամենում էր լաւ զննել և ուսումնասիրել, թէ ինչպէս են գործում ստորերկրեայ ահեղ ոյժերն արտավիժման ժամանակ։

Պօմպէյ եւ Հերքուլանում հաղաքների կործանումը։

Պլինիոսից զատ այլևս քիչ մարդիկ չմեռան։ Մեռան նրանք, որոնք միջոց չունեցան փախչելու։ Բայց և այնպէս շատ շատերն էլ ազատուեցին՝ ոմանք նաւերի վրայ, ոմանք այլ կերպ։ Ոմանք վերեկից ընկնող քարերով սպանւեցին։ Ոմանց երկրաշարժից աւերուած տաճարներն ու պալատներն իրանց տակովն արին։ Իսկ աւելի շատ մարդիկ կորան այն պատճառով, որ Վեզուվի կատարից վայր հոսեցին դէպի ամեն կողմի տղմի ահոելի և խորունկ հեղեղներ։

Այդ հեղեղները կոչւում են տղմային լաւա։ Նրանք արտավիժման միջոցին ոչ թէ լեռան խորքից են բղիում, այլ նրա զառիվայրերից Նրանք գոյանում են անձրեկից և մոխրից։ անձրեաջուրը խառնուելով մոխրի հետ՝ դառնում է տիղմ։ Մեծամեծ արտավիժումների ժամանակ հեղեղաբեր անձրեներ են տեղում, որովհետեւ երկրի միջից շատ առատ շոգի է դուրս գալիս, և այդ շոգին բարձրանալով հասնում է այնտեղ, ուր մշտական ցրտութիւն է տիրում։

Այնուեղ նա ջրի է փոխարկւում, և ջուրն ինչպէս անձրև թափւում է գետնի վրայ: Նա մոխրի հետ միասին է թափւում և լեռան զառիվայրերում ժողովուելով, կազմում է առուներ և հեղեղատներ, որոնք ողողելով լեռան զառիվայրերը՝ հոսում են ներքեւ: Արտավիժումների ժամանակ այսպիսի հեղեղատներից իսկական հեղեղութներ են առաջ գալիս: Հրաբուղիսի խրաքանչիւր արտավիժման միջոցին ջրաշոգի է բարձրանում գետնից, ուստի այդպիսի գէպքերում տղմային հեղեղներ են երևան գալիս: Անա դրանք են, որ ամենից շատ մնաս են պատճառում մարդկանց, դրանք էին ուղիւր հեղեղեցին Պօմպէյ, Հերքուլանում և Ստաբիա քաղաքները և շատ գիւղեր ու դաշտեր: Տղմով լցուեցին թէ փողոցները, թէ աները, թէ տաճարները և թէ պալատները: Տղմի մէջ խեղզուեցին հարիւրաւոր մարդիկ:

Ութ օր և ութը գիշեր տևեց ահեղ արտավիժումը: Այդ միջոցին սարից այնքան շատ մոխրի դուրս ժայթքեց, որ նրանով ծածկուեցին հարիւրաւոր քառակուսի վերստեր, իսկ տղմային հեղեղներն անընդհատ թափւում էին սարից: Մոխրն ու աւազը ծածկել էին գետինը ամենաբարձր տներից էլ մի քանի սաժէն աւելի բարձրութեամբ: Այս կերպ թէ Պօմպէյը և թէ ուրիշ քաղաքներ ջնջուեցին երկրի երեսից և երկար ժամանակ թաղուած մնացին:

Քիչ-քիչ Վեղուվի արտավիժումը վերջացաւ և լեռը հանգստացաւ: Մարդիկ փորձեցին պեղումների միջոցով յայտնագործել թաղուած քաղաքները, բայց չկարողացան, որովհետեւ նրանց վրայ մոխրի ամբողջ բլուրներ էին կանգնած, ուստի թողին նրանց այնպէս գետնի տակ, իսկ երկար ժամանակ անցնելուց յետոյ իսպառ մոռացան:

Հազար ութը հարիւր տարի այդ մոխրածածկ քա-


ղաքները մնացին գետնի տակ. այդ ժամանակի ընթացքում տիղմը չորացաւ, իսկ մոխրը հետզհետէ խտանալով պնդացաւ: Անհետացած քաղաքների վրայ նոր մարդիկ բնակութիւն հաստատեցին, իրանց համար նոր քաղաքներ և գիւղեր շինեցին, նոր այգիներ տնկեցին, նոր-նոր դաշտերում վարուցանք արին, իսկ 79 թուի Վեղուվի ահաւոր արտավիժումն իսպառ մոռացուեց. միայն հին գրքե-



Պեղումներ Պօմպէյը: Փանից հանում են չորացած հացեր, սրանից հազար ութ հարիւր տարուց աւելի առաջ թխուած:

ըում էր յիշատակւում նրա մասին, որովհետև Պլինիոս կրտսերը մանրամասն նկարագրել էր իր հօրեղբօր կորուստը: Մարդիկ յիշեցին Պօմպէյը և Հերքուլանումը միայն 1713 թուին, այն էլ պատահմամբ, ըստորում մշակները ջրհոր փորելիս յանկարծ հանդիպեցին Հերքուլանումի թատրոնին: Այդ ժամանակուանից սկսած իտա-

լական գանձարանը սկսաւ քիչ-քիչ պեղումներ անել Պօմպէյում: Մինչև այսօր արդէն կարողացել են քաղաքի երրորդ մասը լոյս աշխարհ հանել: Պօմպէյը պեղելով իտալացիք շատ բան իմացան այն մասին, թէ ինչպէս են ապրել իրանց նախնիքները հազար ութ հարիւր տարի առաջ: Մոխրի տակ պահպանուելով՝ բոլոր տներն այնպէս են մնացել, ինչպէս էին առաջ: Պահպանուել են ան-



Մրանից հազար ութ հարիւր տարուց աւելի առաջ Պօմպէում ոչնչացած մարդկանց գաջէ ծնկուածքները:

գամ պատերի նկարները, տների բոլոր իրեղէնները, հացեր փուան մէջ և շատ ուրիշ իրեր՝ ցանցեր, կտաւներ, հացանատիկներ, նուշ, շագանակ, չորացած ձկնիթ: Պահպանուել են անդամ այն ժամանակուայ գրքերը, որոնք տպագիր չեն, այլ ձեռագիր^{*)}: Հազար ութը հարիւր տարի մեղնից առաջ մարդիկ գիրք տպագրել չգիտէին: Պօմպէյում, մի գօրանոցի մէջ շղթայակալ դինորների երկու

^{*)} Այն ժամանակները թղթի վրայ չեն գրում, այլ մաքրած կաշու կամ մագաղաթի վրայ. գրքերը չեն կաղմում, այլ փաթաթելով փաթոյթներ շինուած:

կմախք գտնուեցին, իսկ մի տան նկուղում տասնեօթը մարդու կմախքներ, որոնք ամենքը շրջապատուած էին կարծրացած մոխրով: Մոխրային տիղմն ամենքին այստեղ խիտ ծածկել էր: Մարդկանց մարմինները և զգեստները փտել էին, իսկ ոսկիները մնացել: Մարմինների գտնուած տեղերում դատարկութիւն էր գոյացել, կարծես, ձուլելու համար կաղապար լինէր: Երբ գուրս պեղեցին մի տուն, պնդացած մոխրի մէջ ինչոր տարօրինակ դատարկութիւններ գտան, իսկ նրանց մէջ—մարդկային ոսկիներ: Այդ նկատելով պեղում կատարողները գլխի ընկան. վերցրին դաջը, նրան ջրով խառնելով ջրալի խիւս կազմեցին և այդ խիւսով լցրին դատարկութիւնը: Խիւսը շուտով պաղեց դատարկութեան մէջ, իբրև ձուլուածք կաղապարի մէջ, և կարծրացաւ: Ապա զգուշութեամբ մոխրը վրայից մաքրեցին և դատարկութեան փոխարէն ստացան արձանի նըման մի բան, այլապէս ասած, մեռած մարդու իսկական պատկերը կամ քանդակը: Այդ հնարքով զանազան մարդկանց շատ քանդակներ գտնուեցին, որոնք մահացել էին Պօմպէյում: Նրանց մէջ կային և կանայք երեխանները գրկին, և շղթայած սարուկներ, և երեխաններ, և մի մանուկ շան հետ, և ձի: Այսպիսի քանդակներ մինչև այսօր էլ պահւում են Պօմպէյում, մի առանձին թանգարանի մէջ:

Իտալիայում ճանապարհորդողը մինչև հիմա էլ կարող է տեսնել, թէ ինչ է հանուած Հերքուլանումի և Պօմպէյի մէջ մոխրի տակից, նա կարող է իր աչքով տեսնել, թէ ինչպէս էին ապրում մարդիկ հին ժամանակ: Մինչև այսօր էլ Պօմպէյան պահպանուած է նոյն տեսքով, ինչպէս հանուած է եղել մոխրի տակից: Կարծես նրա աւերակները պատմում են վեղուվի այն սարսափելի արտավիժու-

մը, որ տեղի ունեցաւ հազար ութը հարիւր տարուց աւելի առաջ:

Այն արտավիժման օրից վեզուվս արթնացաւ և մինչ այսօր չի քննել: Եղել են արտավիժումներ երկար ընդհատումներից յետոյ: Պատահել է անգամ, որ վեզուվը հինգ հարիւր տարի շարունակ անգործ է մնացել: Այդ միջոցին նրա խառնարանը վիթխարի կաղնիների և լաստենիների թանձր անտառիկով է ծածկուած եղել:

Բայց երբ այսպիսի երկարատև քնից յետոյ նա նորից զարթնել է, այն ժամանակ ցոյց է տուել իր ոյժը մարդկանց: Նորից նա զարթնեց 1631 թուին: Այդտարին վեզուվի ամենասաստիկ արտավիժումը պատահեց, որն աւելի ուժեղ էր, քան առաջինը: Ահա ինչ են պատմում ականատեսներն այդ ահաւոր անցքի մասին:

Վեզուվի երկրորդ մեծ արտավիժումը:

Արտավիժումից մի քանի օր առաջ գետնի տակից մի առանձին աղմուկ էր լսում և նրա հետ միասին երկիրը ցնցւում: Թէ ի՞նչից պատահեց այդ, շուտով իմացան, որ լեռան մի տեղը ճաքել է, և մի երկայն, խոր և լայն ճեղքուածք է գոյացել: Հէնց այդ ճեղքուածքից էլ սկսեց շոգի ելնել, իսկ նրա մի ուրիշ տեղում իսկական փոքրիկ խառնարան բացուեց, այդտեղ լաւա յայտնուեց, նրանից շոգի և մոխիր բարձրացաւ, իսկ լաւայից և մոխիրից այդ ճեղքուածքի վրայ գոյացաւ մի փոքրիկ հրաբուղիս: Մարդիկ այդ բոլորը տեսան և զարմացան, բայց և այնպէս նրանց համար երկիւղալի չէր, որովհետև վեզուվի գլխաւոր խառնարանն առաջուայ պէս, կարծես, քնած էր: Յանկարծ 1631 թուականի դեկտեմբերի 15-ի երեկոյեան վեզուվի շուրջը շատ վերստեր տարածութեամբ, ցնցուեց, — սկզբում ցնցուում էր թոյլ, յետոյ հե-


տըզնետէ աւելի սաստիկ: Գետնի տակ իրար յաջորդեցին ուժգին հարուածներ, այնպէս որ մի գիշերում քսան հարուած եղաւ: Արկը դեռ մայր չէր մտել, որ յանկարծ ահարկու գուգուոց ու ճայթիւն լսուեց: Դա նշան էր, որ մի նոր ահարկին ճեղքուածք էլ է յայտնուել վեզուվի վրայ: Նրանից խսկական արտավիժումը սկսուեց, վեր բարձրացան գոլորշի, մոխիր, քարեր, այնպէս որ մի քանի րոպէում լեռան մի մասն օդը վերացաւ կարծես, նրա տակը մի ահարկին վառօդարան պայմանական վայմանը: Օձապտոյտ երկինք բարձրացաւ մոխրախառն ջրաշոգումի բարձր սիւն, այնտեղ լայն տարածուեց և մթնացը արկի լոյսը: Ամբողջ հարիւրաւոր վերստերի տարածու-



Վեզուվի խառնարանը:
Կոկորդից գոլորշի է բարձրանում: Լաւա չէ վիժում:

թեամբ խաւար տիրեց։ Մոլսիրը վեղուվից չորս հարիւր վերստ հեռու անդամ թափւում էր։ Հեռու-հեռու թոշում էին և քարեղէն բեկորներ, որոնցից մէկն ընկաւ վեղուվից 84 վերստ հեռու և ծակեց մի տան տանիք։ Վեղուվից զանազան կողմեր հոսեցին հրաշիկացած լաւայի ահագին հեղեղներ։ Դրանից սկսեցին այրուել շատ գիւղեր և քաղաքներ, և շատ մարդիկ կորան։

Անցան երեք ծանը օրեր։ Մարդիկ աղօթում էին և սպասում վտանգի վերջանալուն, բայց նա դեռ նոր էր սկսում։ Վրայ հասաւ դեկտեմբերի 18-ը։ Այդ օրը վեղուվի խառնարանից յանկարծ դուրս պրծաւ լաւայի մի մեծ հեղեղ։ Լաւան այնպէս հրաշէկ էր, որ մինչև անդամ շուտով չպաղեց, այդ պատճառով խիստ արագ էր հոսում։ Այսպիսի առատ լաւա վեղուվը դեռևս դուրս չէր ձգել։ Լաւայի հեղեղը մի քանի ճիւղերի բաժանուեց, և նրանք արագ հոսեցին դէպի ծով։ Մի երկու ժամում լաւան մի քանի վերստ տեղ վագեց և հասաւ ծովին, ճանապարհին



Վեղուվի գագաթի տեսքը 1774 թուին

մի քանի քաղաքներ և գիւղեր աւերելով։ Լաւայի ճանա-

պարհին կանգնած էր մի փոքրիկ քաղաք Տօրբէ-դէլ-Գրէ-կօ անունով։ Լաւան ուղղակի մտաւ այդ քաղաքը և հոսուց փողոցներով. գրանից մի քանի տներ այրուեցին, միւսներն այրուելու ժամանակ էլ չունեցան, այլ ուղղակի հեղեղուեցին լաւայով։ Բնակիչները փախչելու տեղ չգտան, ըստորում լաւայի հեղեղը խիստ լայն էր և խոր։ Ամենակարծ միջոցում երեք հազար մարդ կորաւ և չորս քաղաք աւերուեց, որոնք գտնում էին նոյն խիլ ծովափում։ Այդ քաղաքներից մէկը կանգնած էր հէնց այն տեղում, ուր երբեմն եղել էր Հերքուլանումը։ Լաւան հոսեց քաղաքների միջով և թափուեց ծովը։ Ծովը թշաց, աղմկուեց, սաստիկ տաքացաւ, բայց և այնպէս ստիպեց լաւային կանգ առնել։ Վերջինս ափից մի քանի սաժէն առաջ անցնելով՝ պաղեց։


Մարսափ էր տիրել ամբողջ երկրին, իսկ արտավիժմանը, կարծես, վերջ չկար, դեռ բոլորովին չէր թափուել վիզուվից լաւան, մինչդեռ յանկարծ հոսեց նրանից կէծացած ջուր։ Նա անձրկից չէր առաջացել, ինչպէս անցեալ անդամ, այլ ուղղակի խառնարանից էր հոսում։ Նա խական ծովաջուր էր։ Նրա մէջ մեծ բազմութեամբ լողում էին ծովային խոտ, խեցիներ և սատկած ձկներ։ Զուրը հեղեղի պէս էր հոսում շարունակ մի քանի օր՝ ընդհատումներով, իսկ այդ միջոցին ամբողջ ժամանակ գետինն անդադար ցնցւում էր, ամպը որոտում, մոխիրը թափում անձրկի պէս, տղմային հեղեղները ողողում ամբողջ վայրը։ Միայն Ծննդեան տօնին մօտ խաւարը փարատուեց, մոխրային թիսպի միջից երևաց վեղուվը։

Մարդիկ նայեցին նրան և չճանաչեցին, առաջուան լեռը չէր՝ ամբողջ վաթսուն հինգ սաժէնով ցածրացել էր,

Վեզուվի ամենասաստիկ արտավիճումը:

Վեզուվի ամենասաստիկ արտավիժումը պատահեց 1794 թուին: Ահա ինչ է պատմում նրա մասին ականատեսը:

«Այդ արտավիժումը սկսուեց յունիսի 12-ի գիշերը, ժամի 11^½-ին: Երկիրը ցնցուեց: Նա առաւօտից մինչև երեկոյ ծովային ալիքների նման տատանուում էր: Արտավիժումը զրաւել էր ամբողջ Կամպանիան *), Նէապոլիս քաղաքի բնակիչները խաւարի մէջ իրանց տներից դուրս փախան դէպի հրավարակ: Նրանք կարծում էին, թէ իրանց բնակարաններն արդէն աւերուած են, և ահ ու գողով սպասում էին լուսանալուն: Այս անգամ ամեն բան բարեյաջող վերջացաւ: Բայց երեք օրից յետոյ նոյն պէս գիշերուայ ժամի 11-ին նորից երկիրը ցնցուեց, զարհուրելի սառերկրեայ հարուած տեղի ունեցաւ, շինութիւններում ճեղքուածքներ առաջացան, լուսամուտները զբնգոցով կոտրատուեցին, կարասիքները տապալուեցին: Յանկարծ ամբողջ երկինքը փայլեց կարմրագոյն բոցով, զրա պատճառն այն էր, որ Վեզուվի կատարից ոչ հեռու ճեղքուածք առաջացաւ, և նրանից սկսան դուրս թռչել լաւայի ցայտումներ. այդ ցայտումները խիստ հրաշէկ լինելով լուսաւորւում էին: Լսում էր մի խուլ, բայց սաստիկ աղմուկ, ինչպէս բարձրից խոր ձորի մէջ հոսող ջրվէժի թնդիւն: Լեռն ամբողջապէս գողում էր անընդհատ: Քառորդ ժամ անցած՝ այն գետինն էլ սկսաւ ցնցուել, որի վրայ կանգնած էր Նէապոլիս քաղաքը: Լաւան գեռերեք այսպիսի ոյժով դուրս չէր խուժել երկրի միջից այդ կողմերում: Մարդիկ իրանց ոտքերի տակ հաստատ հող չէին զգում: Օդը, լաւայից, կարծես բոցավառուած էր և հրա-



*) Կամպանիան իտալիայի նահանգ է:

Միկացած: Ամեն կողմից լսւում էին զարուհուրելի, երբեք չլսուած ձայներ: Ահարեկուած ժողովուրդը վազում էր եկեղեցիները, սրբերի ոտքնէր դիմում, պատկերներին, խաչերին էր ապաւինում: Նա մտածում էր այդ կերպով խափանել բնութեան սպառնացող երեսյթը: Շատերը վայրենի իրարանցումով դէս ու դէն էին ընկնում քաղաքի մէջ և իրանց լաց ու կոծով օղը թնդացնում: Բայց բնութիւնն ականջ չէր դնում նրանց աղաչանքներին: Նա միշտ իր կանոններին համեմատ է գործում: Արտավիժումն իր կարգով անընդհատ առաջ էր ընթանում: Լեռան զառիվայրերում նոր կոկորդներ բացուեցին: Նրանցից սարսափելի ոյժով և գոռոցով դուրս էին թափում լաւայի նոր հեղեղներ:

«Կէս գիշերից անց՝ գետնի տակի խուլ աղմուկը հանդարտեց, գետինը դադարեց ցնցուելուց, խսկ լեռը տատանուելուց, բայց լաւան, կարծես, մղումներով էր դուրս հոսում խառնարանից: Այդ միջոցին լեռան միջից ամպի գոռագոռոցի ձայներ էին լսւում: Մեծամեծ քարերի բազմութիւն էր դուրս թռչում կոկորդից և բարձրանում շատ բարձր:

«Մի քիչ ժամանակ անցած՝ ստորերկրեայ հարուածները սկսան ուշ-ուշ լսուել, բայց նրանց ոյժը կրկնապատիկ սաստկացաւ: Կէս գիշերից յետոյ Վեզուվի միւս կողմում երկինքը յանկարծ փայլեց պայծառ լոյսով: Այնտեղ այդ միջոցին նոյնպէս լաւայի հեղեղներ դուրս հոսեցին կոկորդից և լեռան զառիվայրերով արագ ներքն վազեցին, խսկ վերեից Վեզուվ^Թ անդադար նոր-նոր հեղեղներ էր վիժում: Լեռան այդ կողմում կանգնած են Պօրտիչի, Ռէզինա և Տօրբէ դէլ Գրէկօ քաղաքները, որոնց բնակիչները սարսափով էին նայում հրային գետերին, որոնք ուղղակի նրանց վրայ էին վազում: Շատ մարդիկ եկեղեցիների

սեղանների առջև տարածուած՝ փրկութիւն էին հայցում: Յանկանծ լաւան դիմեց Ռէզինայի և Պօրտիչի կողմը, այն ժամանակ Տօրբէ դէլ Գրէկօի բոլոր բնակիչները վազեցին եկեղեցիները, որ շնորհակալ լինեն Աստծուց իրանց ազատութեան համար: Բայց լաւան ճանապարհին խոր վիհի պատահելով՝ շեղուեց և վազեց Տօրբէ դէլ Գրէկօի կողմը: Այն ժամանակ Ռէզինայի և Պօրտիչի բնակիչները վազեցին իրանց եկեղեցիները և սկսան շնորհակալութիւնն մատուցանել Աստծուն իրանց փրկութեան համար: Բայց լեռան արտավիժումն իր կարգով առաջ էր գնում: Հրաշէկ լաւան հրեղէն էր թւում, նա սեպ զառիվայրերով իջնում էր, ինչպէս հրեղէն գետ: Այդ հեղեղը լայնութեամբ երեք հարիւր սաժէն էր, նա վերջապէս հասաւ Տօրբէ դէլ Գրէկօին: Այդ քաղաքում նոյն ժամանակները տասնութ հազար բնակիչ կար: Նրանք ամենքը վազեցին գէպի ծով և ջանք էին անում փրկութիւն գտնել նաւերի և մակոյկների վրայ: Լաւան կանգ առաւ քաղաքի պարիսպի մօտ, բարձրացաւ պարիսպներից վեր և ջրի պէս թափուեց քաղաքի մէջ: Նա հոսեց փողոցներով, վեր ելաւ տանիքները և վերջապէս շրջապատեց տները: Նա շատ թանձը լինելու պատճառով տների մէջ չկարողացաւ մտնել: Ափից երեսում էր տների այրուելը, լաւայից սև ծխի սիւներ էին բարձրանում երկինք: Երկացին ահազին բոցեղէն լեզուներ և քաղաքը սկսաւ այրուել: Աղմկով փլչում էին պալատներն ու եկեղեցիները և այրում միւս բնակարանների նման: Լեռն ահոելի կերպով որոտում էր: Տօրբէ դէլ Գրէկօում այդ օրն ամենից աւելի բախտաւորները եղան նաւակավարները: Դրանք այնպիսի չքաւորներն են, որ ոչ տուն ունին, ոչ կտուր: Նրանք կորցնելու ոչինչ չունէին, ուստի ոչ մի բանի համար էլ ափսոսալու չէին:

Նրանք մակոյկներ կառավարել լաւ գիտէին, այդ էլ նրանց հիմա հարկաւոր եղաւ:

«Վրայ հասաւ առաւօտը: Արեգակը լուսաւորեց մի սարսափելի տեսարան: Տօրբէ դէլ Գրէկօ փոքրիկ քաղաքը ջնջուած էր երկրի երեսից: Երբէք լաւան վուլկանի կոկորդից այնպէս արագ չէր հոսել, ինչպէս այս անգամ: Վեց ժամում նա տասնմէկ վերստ անցաւ: Ծովս անգամ արգելք չեղաւ լաւային: Հրեղէն գետն ընկղմուեց ծովի մէջ, ծովը թշշաց, լաւան արագ պաղեց երեսից, բայց և այնպէս հոսում էր: Պաղած լաւայի վրայով հոսում էր չպաղածը, երբ այդ լաւան էլ ընկղմում էր ծովի մէջ, նրա վրայով դարձեալ հոսում էին թարմհեղեղներ: Ծովի ջուրը եռացող ջրի նման եփ էր զալիս, դրանից բոլոր ձկները եփուեցին ու նրանց դիակները հէնց այդտեղ ջրի երեսին լողում էին:

«Արեւ բարձրացաւ երկինք և լուսաւորեց երկիրը: Վեզուվը չէր երևում: Մի թանձը սև ամպ ծածկել էր թէ նրան, թէ ծովը: Նէապօլսի և նրա շրջակայքի վրայ մոխիր էր թափւում և ծածկում խոտը, ծառերը, տները և փողոցները: Արեգակն աղօտ էր լուսաւորում: Ցերեկ էր, բայց նման էր ոչ թէ ցերեկի, այլ առաւօտեան արշալոյսից առաջ տիրող մթնշաղի: Ահարեկութիւնն անտանելի էր: Նէապօլսեցիք տարակուսանքի մէջ, փորձեցին թափորներ կատարել: Դուրս եկաւ ամբոխը խաչ ու խաչվառով և պտտեց փողոցներում: Սակայն այդ էլ չօգնեց, ըստորում արտավիժմանը դեռ վերջ չէր եղել: Եթէ այդպիսի թափորներ կատարուէին արտավիժման վերջանալուն մօտ, այն ժամանակ մարդիկ կը կարծէին, թէ իրանք ստիպեցին լեռանը լոել: Տօրբէ դէլ Գրէկօի բնակիչները մտածեցին, քանի որ ցերեկ է, վերադառնալ իրանց քաղաքը և ինչ հնարաւոր է ազատել: Նրանց բնակարանները ծածկող լա-

ւան նախընթաց գիշերն արդէն պաղել էր. նրա վրայ կարելի էր մանգալ. թէպէտ դեռ տաք էր, բայց չէր ծալւում: Նրա երեսին քափ էր կապել, նման այն քափին, որ կապում է հալուած թուջի երեսին:

«Լաւայի այլ և այլ տեղերում օդանցքներ էին գոյացած, որոնցով լաւայից բարձրանում էր գանազան գազեր, օրինակ, ծծմբային գազ, ածխաթթու և այլն: Օդանցքի շուրջը հաւաքւում է լաւայի կղղանքների և մոխրի մի ամբողջ կոյտ, որ նման է փոքրիկ լեռան: Այսպիսի լեռնակները ֆումարոլ են կոչւում: Լաւայի իռաքանչիւր հեղեղեղի վրայ միշտ շատ փումարօներ են գոյանում: Քանի որ լաւան դեռ չի պաղել, գազերն ու շոգիներն ամբողջ հեղեղից են բարձրանում. իսկ երբ հեղեղն արդէն կեղեւ կապել, այն ժամանակ գազերն ու շոգիները միմիայն փումարօներից են արձակւում: Այսպիսի փումարօները երբեմն իրանցից դուրս են թողնում և վուլկանական մոխրի, և վուլկանական աւազ, և մինչև անգամ լաւայի խոշոր ցայտումներ, որոնք «ռումբեր» են կոչւում: Յաճախ փուրմարօները մի քանի սաժէն բարձրութիւն են ունենում: Կան և այնպիսի փումարօներ, որոնցից ածխաթթու գազ է դուրս գալիս, որը խիստ վնասակար է մարդուս և անսասունների համար, ըստորում մարդիկ նրանից շընչասպառ եղած ընկում են և շուտով մեռնում: Այդ գազն այն պատճառով է կոչւում ածխաթթու կամ ածխաթթուային գազ, որ վառուող ածխից է գոյանում, այսինքն երբ ածուին այրուում է, ածխաթթու է դառնում: Ածխաթթուն վեր չի բարձրանում, այլ տարածւում է գետնի վրայ, նրան չես տեսնում, այլ զգում ես միայն նրա ներկայութիւնը, ըստորում նա նոյնպէս թափանցիկ է, ինչպէս օդը: Բայց վայ նրան, ով կընկնի այդ գազի մէջ, այնպիսին շատ հեշտ շնչասպառ կը լինի: Ուր որ մեծ-մեծ փումարօլ-

ներ կան,որոնք ածխաթթու են արձակում, լաւայի վրայ մանգալը շատ վտանգաւոր է:

«Սակայն համարձակ մարդիկ բարձրացան լաւայի վրայ և ման եկան: Մի քանի տներ քաղաքում անվսաս մնացին, չայրուեցին, ըստորում քարից էին շինուած: Մի քանի տներում մարդիկ ողջ էին մնացել, աղաղակում և օգնութիւն էին խնդրում: Նրանց մօտենալ և ազատել կարելի էր միմիայն տանիքից, որովհետեւ բոլոր մուտքերը գոցուած էին լաւայով, այնպէս որ խեղճ մարդիկը կարծում էին, թէ իրանց վերջը հասել է: Սակայն շատերին նրանցից հնարաւոր եղաւ ազատել: Օրինակ, քարեայ ամուր պատերով մի հին վանքից աջողուեց մի քանի տասնեակ մարդիկ ազատել: Խեղճերը, կարծես, խելացնոր էին եղել, կարծում էին իրանց ազատուած ոչ թէ վանքի ամուր պատերի շնորհիւ, այլ մի գերբնական ոյժով: Կային և այսպիսի տներ, որոնք միանգամայն փակուած էին լաւայով: Շատ տեղերում լաւան ճաքճել էր, և այդ ճեղքերից դուրս էր գալիս շոգի և ծծմբային գազ, որ շնչասպառ անելով մահացնում էր մարդկանց: Իսկ մոխիրն ու անձրել վերեկց անդադար թափւում էին, և սև թուխալը կախուած էր վուլկանի վրայ: Այդ թխպից փայլակներ էին արձակուում: Մանր քարեր անդադար վեր էին թռչում վուլկանի կոկորդից և կրկին ընկնում նրա մէջ: Թամին մանր մոխիրն առած փռում էր ամբողջ շրջակայքով, մանր մոխիրը ցիրուցան էր լինում հեռուները, իսկ խոշորը մնում վուլկանի զառիվայրերում»:

Մի օր էլ անցաւ: Հասաւ գիշերը: Դարձեալ սաստիկ հարուածներ էին որոտում գետնի տակ: Առաւոտը վուլկանի վրայի թուխալը մի քիչ ցիրուցան եղաւ, և մարդիկ տեսան, որ Վեզուվի կատարը փլել է իր կոկորդի մէջ: Իսկ սև թուխան աւելի էր փռուել գետնի վրայով, այն-

պէս որ հարիւրաւոր վերստեր հեռում չէր երևում արեկ լոյսը: Մոխիրը քամու ոյժով շատ հեռու տեղեր էր տարւում ու թափթփւում, և նրա ծանրութեան տակ կոտրատւում էին ծառերի ճիւղեր, փշանում այգիներ ու պըտղատու ծառեր, փլչում տանիքներ: Ահաբեկ եղած բնակիչները փախչում էին առանց յետ նայելու:

«Հետևեալ օրը նոր աղէտներ սկսան տեղի ունենալ, յայտնուեցին ցեխոտ ջրի հեղեղներ և նոյնպէս լեռան զառիվայրերով ներքե իջան: Այդ անձրեաջուրը խառնուեց մոխրի հետ և տղմի փոխարկուեց, տղմի հեղեղները վազում էին կատաղի ոյժով, խորտակում ժայռերն, արմատահան անում ծառերը: Յունիսի լոյս 20-ի գիշերը հինգ այսպիսի հեղեղներ արշաւեցին, իսկ ցերեկը—երեք, որոնցից Վեզուվի բոլոր շրջակայքն աւերուեց: Դժուար է ասել թէ այդ արտավիժման միջոցին որքան մշակուած դաշտեր, պարտէզներ և այգիներ փչացան:

«Օրերն անցնում էին, բայց, կարծես, արտավիժմանը վերջ չկար: Անցաւ այլիս մի շաբաթ: Միայն յունիսի 26-ի առաւօտը Նէապոլսի բնակիչներն ուրախութեամբ նկատեցին, որ Վեզուվի վրայի թուխալը, կարծես, փոքրացել է: Եւ իրաւ, արտավիժումն իր վիրջին էր մօտենում: Մոխիրն այլիս չէր թափւում: Վերջապէս յուլիսի 8-ին նէապոլսի երկինքը բոլորովին մաքրուեց»:

Այսպէս վերջացաւ Վեզուվի սարսափելի արտավիժումը
1794.ին


Իտալիան այն ժամանակ^o հարուստ երկիր էր: Իտալացի շինականներն աշխատասէր ժողովուրդ են: Թէպէտ արտավիժումը քիչ մնաս չհասցրեց նրանց, բայց նրանք շուտով կարգի եկան՝ այգիներ տնկեցին, նոր վարուցանք սկսեցին: Վուլկանական մոխիրը չի փչացնում դաշտերը,

այլ ընդհակառակը բարւոքում է նրանց։ Միայն առաջին տարին էր գժուար զիւղացիների համար, բայց նրանց օգնեց գանձարանը, բարի մարդիկ փող և զանազան իրեղներ ժողովեցին, և այսպէս ընդհանուր ոյժով մաքառեցին աղետի դէմ։ Վերջի վերջոյ երևաց, որ նա ընաւ այնպէս ահարկու չէ, և այսպէս երևաց այն պատճառով, որ այն ժամանակ իտալիայում զիւղական կեանքի կազմակերպութիւնն ու կարգերը շատ լաւ էին։

1779 թուականից մինչև այսօր երեսուն երկու անգամ վիզուվեան սաստիկ արտավիժումներ են պատահել, փոքր արտավիժումներ շատ աւելի յաճախ են եղել, քան մեծեր։ Մեծ արտավիժումներից շատերը պատահել են մանաւանդ վերջին հարիւր տարին։

Էտուա—Եւրոպայի ամենամեծ նրաբոխը։

Իտալիայի ափերից ոչ հեռու գտնւում է մեծ և բարգաւաճ Սիկիլիա կղզին։ Հենց այդ կղզումն է գտնվում Եւրոպայի ամենամեծ վուլկանը, որի անունն է Էտուա։ Եթէ ուղղահայեաց գծով հաշուես, նրա բարձրութիւնը երեք վերստ է։ Նրա ստորոտը հարիւր քսան քառակուսի վերստից աւելի տեղ է բռնում, ուր կան մշակուած հացաւէտ դաշտեր, ձիթենիների և մրգաբեր ծառերի պարտէզներ և խաղողի այգիներ։ Գաղաթը ծածկուած է ձիւնով, որ բուլոր տարին չի հալուամ և երբեմն խիստ առատ է լինում։ Էտուան ստորին զառիվայրերը ծածկուած են անտառով, որ օղակաձև շրջապատում է լեռը։ Անտառը, որի լայնութիւնը տասը վերստ է, բաղկացած է կաղնիներից, շագանակի և մայրի ծառերից։ Անտառում բազմաթիւ հօտեր են արածում, բայց եթէ անտառն անցնես և լեռան զառիվայրով վեր բարձրանաս, լոկ ամայի անապատ կը տեսնես։ Այդ անապատն ամբողջապէս ծածկուած է պաղած




Էտուա հրաբուղին սառը Միջինա կղզում։ Մարդ վրայի անսարքնել կատանալու բաղադրից։

սև լաւայով, նրա փշրանքներով և մոխրով։ Այդտեղ համարեա ոչինչ չի բունում, ըստորում ջուրը սակաւ է, իսկ հողը ծակոտիէն ու փուխր, և անձրմի ու հալուած ձիւնի ջուրը գետնի մէջ է անցնում։

Կողմնակի խառնարաններ։

Էտնայի ամենաբարձր գագաթին բացւում է նրա գլխաւոր կոկորդը, որ լայն է և խոր։ Նրանում առանձնապէս զարմանալին այն է, որ նրանից այժմ համարեա երբէք լաւա չի ժայթքում, այլ դուրս է գալիս միայն շոգի և մոխիր. այդ նրանից է լինում, որ կոկորդի պատերը լաւայի թափին չեն կարողանում դիմանալ, ստորերկրեայ ոյժը թափով վեր է մղում լաւան, և նա ճնշում է լեռան պատերը, լաւան դեռ ևս բերանին չհասած՝ լեռը ճաքճքում ու պատառուում է։ Պատահել է մինչև անգամ, որ միանգամից մի քանի ճեղքուածքներ են գոյացել լեռան վրայ և տարածուել զանազան կողմեր։ Ճեղքուածքները եղել են խոր, լայն և երկար. եղել են տասներկու վերստ երկայնք ունեցող ճեղքեր։ Հէնց որ յայտնը ու է մի այսպիսի ճեղքուածք, իսկոյն լաւան յարձակում է դէպի նա, լեռան զառիվայրում մի կողմնակի տեղով իրան համար ելքի ճանապարհ բանալով։ Այդ ելքի շուրջը բանում է մի փոքրիկ վուլկան։ Պատահել է, որ միենոյն ճեղքուածքի վրայ մի քանի այդպիսի վուլկաններ են յայտնուել, կարգով նստուած մի գծի վրայ։ Երբ լաւան այդպիսի վուլկաններից ելք չի դանում, այն ժամանակ ճեղքուածքները գոցւում են աւագով ու ցեխով, իսկ այդ վուլկանները մնում։ Այսպիսի փոքրիկ վուլկաններ խիտ ընկած են էտնայի բոլոր զառիվայրերում։ որոնց թիւը իննհարիւրից աւելի են հաշուում։ Կան, որոնք հարիւր սաժէն բարձրութիւն ունեն, բայց այդպիսիները քիչ են։

Կան շատ փոքրերը, որոնց նշմարելն անգամ դժուար է։ Այդ վուլկաններից մի քանիսն էլ բացւել են անտառի մէջ, մի քանի ժամանակ գործել են, յետոյ դադարել ու ծածկուել անտառուով։ Կատարին մօտենալիս այդպիսի վուլկաններ աւելի յաճախ են հանդիպում. նրանց անուանում են կողմնակի կոկորդներ, որովհետև նրանք գլխաւոր լեռան կողքերում են նստուած։ Յաճախ այսպէս է լինում. բըսնում է որևէ կողմնակի վուլկան, մի քանի տասնեակ սաժէն վեր բարձրանում և մի քանի ժամանակ գործում, ժայթքելով լաւա և մոխիր. նոյնն անում են և միւս կողմնակի վուլկանները, որոնք նրանից բարձր են նստած լեռան զառիվայրերում, այդ բոլոր արտավիժումներից յաճախ այնքան շատ լաւա է ժողովւում, որ հեղեղում է կողմնակի վուլկանը մինչև կոկորդ, այնպէս որ վուլկանը



Կողմնակի խառնարաններ հրաբուղին լեռան զառիվայրերին։ Նրանք նստած են լեռան ճեղքուածքի երկայնութեամբ։

միանգամայն ծածկւում է լաւայի տակ: Եղել են և այնպիսի դէպքեր, որ լաւան մէկ վուկանի կոկորդից թափուել է միւսի կոկորդը և լցրել նրան: Այս կերպով կողմնակի վուկանները բոլորովին անհետանում են լեռան վրայից, և նրանց փոխարէն նորերը բանում: այդ պատահում է էտնայի իւրաքանչիւր արտավիժման ժամանակ, իսկ արտավիժումները լինում են ընդհանուր հաշուով տասը տարին մի անգամ: Էտնան իննը տարի որպէս թէ հանգստանում է, իսկ տասներորդին զարթնում: անյիշելի ժամանակներից այդպէս է հաշուած: Հին գրքերում գրուած է, թէ էտնան Քրիստոսի ծննդից հազարաւոր տարիներ առաջ գործել է: Այդ երկարատև ժամանակում կարողացել է աճել այնքան, որ ստացել է այսպիսի բարձրութիւն:

Յա՞ս տարուայ լեռ է էտնան:

Ամեն մի հրաբուղի աճում է, քանի որ գործում է, դուրս արձակելով մոխիր և լաւա, որոնք ընկած են մնում նրա զառիվայրերում: Սրանից է որ լեռը բարձրանում է անդադար: Երբեմն լեռան նոյն իսկ գագաթն արտավիժման ժամանակ փլչում է, բայց զառիվայրերն աճում են ու աճում արտավիժումից, որից մշտապէս մի առանձին խաւ է մնում: Այդ խաւերը հաշուելով կարելի է իմանալ, թէ քանի անգամ է գործել լեռը: Յարմար է հաշուել այն տեղերում, ուր լեռը ճաքել է, որովհետեւ այդ ճեղքուածքի ներսը պարզ երևում են խաւերը: Դրանով իմացան գիտնականները, թէ էտնան շատ հին լեռ է և գործում է շատ հարիւր հազար տարիներ, և իմացան այդ ճիշտ և հաւաստի կերպով:

Ի՞նչպէս մի բարձր բլուր լաւայի մէջ հալուեց:

Էտնայից երբեմն սաստիկ տաք լաւա է բղիսում: Օ-

րինակ, մի այսպիսի դէպք պատահեց: 1766 թուին էտնայի արտավիժում տեղի ունեցաւ: Մի իտալացի գիտնական գնաց նայելու արտավիժմանը, հետը տանելով տեղային բնակիչներից մի շինականի: Նրանք անտառն անցնելով՝ դուրս եկան մի ամայի հարթավայր, որի վրայ հոսում էր այն միջոցին լաւայի մի մեծ հեղեղ: Գիտնականը շատ ցանկացաւ, տեսնել, թէ ինչպէս է նա հոսում, ուստի շինականի հետ միասին բարձրացաւ առաջին պատահած փոքրիկ բլուրը, որը եօթը սաժէն բարձրութիւն ունէր: Այդ բլրակն ամբողջապէս կազմուած էր հին լաւայից, մոխրից, չեչաքարից, որոնք շատ հարիւր տարիներ առաջ գուրս էին նետուել կոկորդից: Բլրի վրայից շատ լաւ էր երևում հրեղէն հեղեղի հոսելը, որի լայնութիւնը չորս վերստ էր: Յանկարծ նրանից երկու հրեղէն ճիւղեր բաժանուեցին և արագ հոսեցին ուղղակի դէպի բլուրը, որի վրայ նստած էր գիտնականը: Նա շուտով իր առաջնորդի հետ փախաւ ներքեւ: Հազիւ նրանք հեռացան, և ահա լաւան ամեն կողմից շըջապատեց բլուրը: Բլուրը տաքացաւ և սկսաւ հալուել, և գիտնականի աչքի առաջ մի քառորդ ժամում ամբողջապէս հալուեց, լաւա գարձաւ և հոսեց նրա հետ միասին:

Չինն ու սառուցը կէծացած լաւայի տակ:

Գիտնականներից ոմանք բարձրացան էտնայի նոյն խակ կատարը և լաւ զննեցին նրան: Նրանք տեսան այնտեղ ձիւն ու սառուց, որոնք հալուելով կազմում են լեռան զառիվայրերում առուներ: Սկիզբը նրանք շատ են լինում: բայց որքան ներքեւ, այնքան քչանում են, և վերջապէս անհետանում, որովհետեւ ջուրը ծծուում է փուխը հողի մէջ:

Էտնայի գագաթի մի կողմում, մոխրի և կէծացած

լաւայի տակ, գտան ձիւն ու սառուց. ահա դրա պատճառը:



Էտնայի խառնաբանը:
Խառնաբանի յատակի երկու տեղից դուրսի է բարձրանում: Նա մոխրախան
լինելուց սկսէ երկում:

1828 թուի ամառը և աշնանը Սիկիլիայում սաստիկ տօթ էր: Սիկիլիան տաք երկիր է. այնտեղ սառուցը շատ հարկաւոր լինելով՝ խիստ թանգ է գնահատում: Այնպէս պատահեց, որ Սիկիլիայի Կատանիա քաղաքի բնակիչների ձիւնի և սառցի պաշարը հատաւ, և ոչ մի տեղից սառուց ճարելու հնար չկար: Սովորական տարիները Սիկիլիայի վաճառականներն էտնայից են սառցի պաշար վերցնում և շահաւէտ գնով ծախում նրան Մալտա կղզում և ուրիշ տեղեր. իսկ այդ տարի տօթի պատճառով ծախելու բան էլ չունեցան: Որոնեցին սառուց էտնայի վրայ, բայց չըգտան, այնտեղ էլ նա սաստիկ տաքից հալուել էր: Ի՞նչ պէտք էր անել: Քաղաքի իշխանները վճռեցին մի լաւ զարձատրութիւն նշանակել նրան, ով որ հնար կը գտնի մի տեղից սառուց ստանալու: Եղան մարդիկ, որոնք ըսկեցին որոնել լեռան վրայ սառուց, բայց դարձեալ չըգտան, ամեն տեղ լաւա էր և մոխիր, իսկ սառուց չկար.

ուստի դատարկ ձեռքով վերադարձան: Ահա այն ժամանակ հասկացաւ մի գիտնական, որ սառուցը պէտք է որոնել ոչ թէ գետնի վրայ, այլ գետնի, այսինքն լաւայի տակ: Նա վերցրեց իր հետ բանւորներ, բարձրացաւ լեռան գագաթը և հրամայեց կոտրել լաւայի պաղած հեղեղը: Աշխատանքը թէպէտ ծանր էր, այնուամենայնիւ բանւորները յաղթեցին գիտուարութեանը: Երբ կոտրեցին լաւան, գիտնականը նկատեց, որ նրա ներսը գեռես տաք է: Լաւայի միջով ծակ բաց արին, հասան յատակին, այն էլ ծակեցին և գտան լաւայի տակ մոխիր: Մոխիրը փորելով՝ տեսան նրա տակը թարմ ընտիր սառուց:


Ի՞նչպէս էր նա կարողացել այնտեղ մնալ: Ի՞նչունա չէր հալուել, երբ նրա վրայով հոսում էր հրահալուած լաւան: Սառուցը չէր հալուել, որովհետեւ նրա վրայ գըտնուում էր մոխիրը, որ սան էր, իսկ լաւան մոխիրի վրայով հոսելով՝ շուտով սառչում էր: Որովհետեւ մոխիրից տաքութիւնը շատ վատ է անցնում, այս պատճառով լաւան չէր կարողանում շուտով տաքացնել մոխիրը, այնպէս որ մինչեւ մոխիրի տաքանալը լաւան սառչում էր: Մոխիրը տաքանում էր միայն այն ժամանակ, երբ լաւան արդէն սառել էր, դրանից էր ահա, որ սառուցը լաւայի տակ չըկարողացաւ հալուել. իսկ պաղած լաւան վահանի նման ծածկում էր նրան արկից: Սառուցն այնպէս մինչեւ այսօր էլ մնում է և կը մնայ երկար ժամանակ առանց հալուելու:

Պատահեց և այսպիսի գէպք: 1775 թուին լաւան հրաբուղիքի կոկորդից ուղղակի սառցի վրայ թափուեց, որի վրայ մոխիր բնաւ չկար: Սառուցն իսկոյն սկսեց հալուել, և առուներ գոյացան: Զուրն այնքան շատ էր, որ սարսափելի հեղեղում առաջացաւ:

Էտնայի արտավիճումը 1669 քուին:

Էտնան իր խորքից խիստ շատ լաւա էր ժայթքում։ Ահա, օրինակ, ինչ պատահեց 1669 թուին, երբ Էտնայի ամենասաստիկ արտավիժումը տեղի ունեցաւ։ Նախ և առաջ ամենաուժգին կերպով գետինը ցնցուեց, այնպէս որ Էտնայի կատարից 30 վերստ հեռու գտնուող՝ Նիկոլիտափ քաղաքի բոլոր տները քարուքանդ եղան։ Յանկարծ նրանից ոչ հեռու երկու նոր կոկորդներ բացուեցին, որոնցից սկսաւ շոգի և մոխիր վեր ժայթքել հետզհետէ սաստկանալով։ Երեք-չորս ամսից յետոյ նրանցից 70 սաժէն բարձրութեամբ մի լեռ գոյացաւ։ Իսկ այդ միջոցին Էտնայի միւս կողմի զառիվայրում ահսելի որոտմունքով և դղրդոցով մի ճեղքուածք բացուեց գետնի մէջ։ Ճեղքուածքը գալարումներով վեր բարձրացաւ լեռան զառիվայրերով ուղղակի Էտնայի գագաթը, միայն երկու վերստ մնաց, որ համար նրան։ Երկայնութեամբ նա քսան վերստ էր, իսկ որքան էր խորութիւնը—յայտնի չէ։ Ճեղքուածքի խորքից պայծառ լոյս էր երկում, որովհետեւ այստեղ հրաշիկացած լաւա էր եփ գալիս։ Այդ ճեղքուածքի յետեկից հետզհետէ յայտնուեցին այլևս հինգ ճեղքուածք, որոնք ծուխ էին ժայթքում, և նրանց խորքում մոնչում էր ու դրվթղը թում։ Բայց լաւան այդ ճեղքուածքից չէր դուրս գալիս, այլ մի ուրիշ տեղից և հոսում էր դէպի կատանիա քաղաքը։ Ճանապարհին նա աասնչորս գիւղ ու շէն հեղեղեց, շատ մարդիկ կոտորեց և վերջապէս հասաւ կատանիային։ Այդ քաղաքի մօտ դիտմամբ շինուած էր իննը սաժէն բարձրութեամբ մի պարիսպ։ Շինուած էր նա այն պատճառով, որ պաշտպանէ քաղաքն Էտնայից արտավիժման դէպում։ Լաւան հոսելով անտառում ծառերի միջով հասաւ այդ պարսպին, կանգ առաւ և սկսեց կամաց-կամաց

վեր բարձրանալ։ Շուտով հրային հեղեղը հաւասարուեց պարսպի վերին եղերքի հետ, աւելի բարձրացաւ և հրային ջրվէժի պէս պարսպի միւս կողմը թափուեց ուղղակի քաղաքի մէջ։ Թէպէտ լաւան փողոցների միջով հոսելով հեղեղեց մի քանի թաղեր, բայց և այնպէս չկարողացաւ կործանել քաղաքի պարիսպը։ Այդ պարիսպը մինչ այսօր էլ մնում է այնպէս լաւայի տակ։ Մի ուրիշ տեղ էլ լաւան բարձրացաւ պարսպից վեր, միւս կողմն անցաւ, բայց այնտեղ սառած մնաց։ Մինչև հիմա էլ կարելի է նրան նոյն դրութեան մէջ տեմնել։




Էտնա հրաբուղի սարը։ Նրա տեսքը հարթակույրից։

Էտնայի կատարից մինչև կատանիա քաղաքը, որ քսանմէկ վերստ են հաշում, լաւայի հոսանքը քսան օրում հասաւ։ Սկիզբը լաւան շատ արագ էր հոսում, իսկ վերջին երկու օրը—շատ հանգարտ՝ մի ժամում երեք սաժէնից ոչ աւելի կատանիայի մի քանի փողոցներից անցնելով լաւան ծովը թափուեց, այդ միջոցին վերեկից դիմում էր քաղաքի վրայ լաւայի մի այլ հոսանք և սպառնում հե-

զեղել քաղաքի մնացեալ մասը։ Ժողովուեցին քաղաքացիներից մի յիսուն մարդ, ջերմութիւնից պաշտպանուելու համար փաթաթուեցին խոնաւ կաշիների մէջ, ձեռքերն առան երկաթէ նիգեր և բրիչներ և հանդէպ վազեցին հրային հոսան-

Քին,որ նրա
ճանապար-
հը քաղա-
քից մի այլ
կողմ դարձ-
նեն: Այդ
միջոցին լա-
ւայի հո-
սանքը դան-
դաղ էր

վակի մէջ,
հոսում էր փ
տեցան լաւա
անել կողքից
ազատեն իր
այնպիսի տե




Անտառով հսկող լաւայի հեղեղ:

թափուէր մի խորափիտի մէջ, որ անցնում էր ծովի կողմը: Այդ խորափիտը գնալով միանում էր հովտի հետ, որի մէջ կային մի քանի գիւղեր: Այդ գիւղերից մէկի ընակիչները նկատեցին, որ քաղաքացիները կամենում էին լաւան ուղղակի նրանց վրայ արձակել, ուստի առան ձեռքները գաւազաններ, հոսելիներ և երկաթէ ճանկեր ու յարձակուեցին քաղաքացիների վրայ: Նրանք ուզում էին իրանց քաղաքն ազատել, իսկ դրանք իրանց գիւղը: Սկսաւ տուրուգմիոց, բայց և այնպէս քաղաքացիները կարողացան մի փոքրիկ ծակ բանալ լաւայի կեղևապատի մէջ: Թէկ լաւայի մի փոքրիկ հոսանք թափուեց խորափիտի մէջ, բայց գիւղին չհասած պաղեց: Այսպիսով քաղաքացիներին չաջողուեց հրային հոսանքը կանգնեցնել. գիւղացիները հալածեցին նրանց: Բարեբախտաբար հոսանքն իրան դաղարեց քաղաքի պարիսպների մօտ:

Առօմբոջի վուլկան-փարոսը:

Կայ այլես իտալիայում մի գարմանալի հրաբուղիս լեռ, որ կոչում է Ստրօմբոլի: Այդ լեռը գտնվում է ծովի մէջտեղը, մի փոքրիկ կղզեակի վրայ: Ստրօմբոլիի բարձրութիւնը վերսատից մի քիչ պակաս է, իսկ խառնարանը յիսուն սաժէն խորութիւն ունի: Այդ խառնարանի խորքում մշտապէս եփ է գալիս հրահալուած լաւա, և նրանից բարձրանում են ջրաշոգիներ և գանազան գագեր: Ամեն մի 10 կամ 20 ըսպէից խառնարանի յատակը, կարծես, ցնցւում է. նա փամփշտի նման ուռչում է, փամփուշտը պայթում և վեր ենթուչում քարեր և լաւայի ցայտումներ: Նրանք կոկորդից բարձրանալով, լեռան զառիվայրերով չեն տարածւում, այլ յետ դառնալով ընկնում են խառնարանի մէջ: Վերջացաւ մի պայթիւնը, այնտեղ պատրաստւում է միւսը,

ապա երբորդը և ուրիշները: Այդ պայմիւնները խիստ կանոնաւոր կերպով են տեղի ունենում, կարծես, ժամերով են որոշուած: Զանազան երկրներից ճանապարհորդներ են գալիս Ստրօմբոլի կղզին և բարձրանում լեռը: Նրանք նըստուամ են կոկորդի նոյն խակ եղերքում և հանգիստ դիտում, թէ ինչ է կատարւում ներսում: Այդտեղ կարելի է միանգամայն հանգիստ նստել, որովհետեւ կոկորդից վերթուչող քարերն այդտեղ երբէք չեն հասնում, իսկ



Ստրօմբոլի վուկանը:

աւելի զարմանալին այն է, որ երկու հազար, գուցէ և աւելի, տարի շարունակ Ստրօմբոլին այս կերպով է գործում, իսկական արտավիժումներ նա երբէք չի ունեցել *), բայց և լաւան նրա կոկորդում բնաւ

*) Շատ սակաւ են պատահել փոքրիկ արտավիժումներ:

չի պաղել: Նա անընդհատ, գիշեր-ցերեկ, ամառ թէ ձմեռ, եռ է գալիս ու զրլթղըլթում: Կղզու բնակիչները շատ լաւ են ձանաչում իրանց հրաբուղիսը և նրա միջոցով եղանակ են գուշակում, իսկ ծովագնացներին Ստրօմբոլին փարոսի տեղ է ծառայում և ահա ինչու: Գիշերները վուկանի վըրայով անդադար պայծառ հրացոլք է խաղում, որը հեռուից իսկական կրակի է նման, կարծես, վուկանից բոց է վեր բարձրանում, բայց իրօք այդտեղ ոչ մի բոց չկայ, ըստորում հրաբուղիները երբէք կրակ չեն արտաշնչում: Հինց այդ հրացոլքն անտեղեակ մարդիկ անուանում են կրակ, իսկ այդ հրացոլքն առաջ է գալիս նրանից, որ կոկորդի մէջ եռում ու բորբոքում է հրաշէկ լաւա: Հրաբուղիների խառնարանների մօտ պատահած ճանապարհորդները պատմում են, թէ հրաշէկ լաւան արևի նման լուսաւորում է, բայց չի այրւում: Նա այնպէս է լուսաւորում, ինչպէս հրաշէկ երկաթը: Ահա այդ փայլուն լաւայի ցոլքերն են, որ լուսաւորում են կոկորդից վեր բարձրացող ջրաշողին, որից ջրաշողու սիւնը հրեղէն է երերացող ջրաշողին, որից ջրաշողու սիւնը հրեղէն է երեւում: Ստրօմբոլիի վրայ կանգնած հրացոլքը մերթ սաստկանում է, մերթ թուլանում, կարծես, վուկանն աչքը բաց ու խուփ է անում: Ստրօմբոլիի այդ հրացոլքը, նրա շրջակայքում հարիւր եօթանասուն հինգ վերստ հեռաւորութեան վրայ երևում է: Նաւերը նրանով են գտնում իրանց ճանապարհը:

Այս կերպով Ստրօմբոլի հրաբուխն արդէն քանի հազար տարի է, որ մի լաւ ծառայութիւն է անում մարդկանց:

Գ Լ ՈՒԽ Գ.

ԱՍԻԱՅԻ ՄԵՇ ՀՐԱՄՈՒՂԽՆԵՐԸ

Արարատ լեռը:

Կովկասեան լեռների յետեր կայ մի վայր, ուր երեք պետութիւն՝ Ռուսաստանը, Թիւրքիան և Պարսկաստանը մօտենալով մի անկիւն են կազմում։ Այդուեղ են բաժանւում նրանց սահմանները, ուր բարձրանում է ահագին լեռ—Արարատ։

Արարատը փառաւորապէս կանգնած է լայնատարած հարթավայրի մէջտեղը ուր հազար քառակուսի սաժէնից աւելի տեղ է գրաւում, կանգնած է նա միւս լեռներից առանձին և նրանից շատ բարձր է։ Նա Անդրկովկասում ամենաբարձր լեռն է։

Արարատը, Հայոց Մասիսը, երկու գագաթ ունի՝ մէկըն աւելի բարձր, իսկ միւսը՝ ցածր. առաջնը կոչում է Մեծ Արարատ կամ Մեծ Մասիս, իսկ երկրորդը—Փոքր Արարատ կամ Փոքր Մասիս։ Հեռուից այսպէս է երկում, թէ Արարատը երկու լեռներից է բաղկացած, միջոցն ունենալով լեռնամէջ։

Մեծ Արարատը հինգ վերսալից աւելի բարձրութիւն ունի։ Նրա գագաթը մշտական ձիւնով է ծածկուած։ Զիւնըն այնքան խիտ է նստած, որ կատարեալ սառուց է դարձել, որը մի քանի տասնեակ սաժէն հաստութիւն ունի։ Նա միապաղաղ է և իր ծանրութեան պատճառով ներքեւ է սողում ու տաշում ժայռերը։ Մասուցն իր վերին ծայրում, որ մօտ է լեռան գագաթին, աճում է, իսկ ըստորինում հալում։ Մասցի և ձիւնի հալուելուց առուակ-

ներ են գոյանում, բայց նրանց ջուրը փուխր հողը ծծուելով, մինչև լեռան ստորոտը չի հասնում։

Մեծ Արարատի գագաթում խառնարան չի երկում այլ նրա փոխարէն մի լայն ճեղքուածք, այս ճեղքուածքի պատերը կազմուած են լաւայից, նրա փշրանքներից և պնդացած մոխրից։ Արարատի գագաթից ոչ հեռու կայ մի խոր և ամայի ձոր, ուր մի ժամանակ կանգնած էր Ս. Յակովի հնադարեան վանքը, որից հովիտն էլ կոչւում է Ս. Յակովի հովիտ։

Փոքր Արարատը Մեծից շատ ցածր է։ Նա բարձրութեամբ ընդամենը չորս վերստ է։ Նրա գագաթին ձիւն չկայ։

Երկու լեռների զառիվայրերը ծածկուած են մոխրով, իսկ տեղ-աւել պաղած լաւայով։ Թէպէտ Արարատը ծուխ չի արձակում, այնու ամենայնիւ բոլոր նշաններից երկում է, որ նա վուլկան է, միայն ոչ գործող վուլկան։

Ի՞նչպէս որոշել վուլկանը միւս լեռներից։ Շատ պարզ կերպով. պէտք է նայել թէ ինչ քարերից է կազմուած լեռը։ Եթէ լեռը ամբողջապէս կազմուած է պնդացած մոխրից, պաղած լաւայից, նրա փշրանքներից և չեչաքարից—կը նշանակէ՝ լեռը վուլկան է։ Վուլկանը լոկ տեսքից էլ կարելի է ճանաչել. նա մի ահագին աւազակոյտի է նըման, և այդ այն պատճառով, որ նոքա բոլորն էլ ածովի հողի լսունելի են։ Նրանց հողն ածուած է, արտավիժման ժամանակ. սառը երկրեայ ոյժն անցք է բաց. անում գետնի մէջ, իսկ այս անցքի շուրջն աճում է լեռը, կամ մի քանի լեռներ շարքով։ Աճում է նա, ըստորում կոկորդից դուրս նետուած մոխրը, քարերն ու լաւան այդ անցքի շուրջն են կիտուում։ Արարատն էլ այսպէս ածովի հողի լեռ է։ Այժմ նա չի գործում, բայց եղել է ժամանակ, երբ նա գործել է, այն էլ ի՞նչպէս։ 1319 թուականին

Քրիստոսից յետոյ Արարատը կործանեց Հայոց թագաւորութեան փառաւոր մայրաքաղաք Անին։ Այդ քաղաքը կանգնած էր Արարատից ոչ հեռու (այժմեան Երևանեան նահանգի Ալէքսանդրապոլի գաւառում) և մի քանի հարիւր հազար բնակիչ ունէր։ Այդտեղ կային նշանաւոր եկեղեցիներ և պալատներ։ 1319 թուին մի սարսափելի երկրաշարժ պատահեց Արարատի ստորոտում, որը և կործանեց Անի քաղաքը։ Մրանից յետոյ Արարատը, կարծես, ննջեց ամբողջ հինգ հարիւր տարի, իսկ 1840-ի յունիսի 20-ին նա յանկարծ գարթնեց։ Նորից ցնցուեց երկիրը, շատ ուժգին ցնցուեց և քարուքանդ արեց 6000 տուն։ Մեծ Արարատի գառվայրում մի ահազին ձեղքուածք բացուեց, և նրանից ահոելի ոյժով վեր բարձրացաւ տաք գոլորշի, դուրս թռան ահազին մեծութեամբ քարեր, որոնք Արարատի գագաթիցն էլ բարձր էին թռչում։ Կային դրանց մէջ այնպիսիները, որոնց ծանրութիւնը 1200 փթից աւելի էր։ Այդ կարկտանման տեղացող քարերից շատ մարդիկ մեռան։ Թանձր սև ամպերը ծածկել էին լեռան կատարը։ Ձեղքուածքից դուրս արձակուած ծծմբային գագից՝ շուրջը հարիւր վերստ տարածութեամբ այրուած ծծումքի հոտ էր փչում։ Թէպէտ արտավիժումը միայն մի ժամ տևեց, բայց և այնպէս այս կարճ միջոցում կործանուեցին Ակոսի մեծ գիւղը և Ս. Յակովի հին վանքը, բոլոր բնակիչներով։ Նրանց իրանց տակովն արին տղմի հեղեղները, որոնք հոսում էին զարհուրելի ուժով։ Նրանք իրանց հետ տանում էին ահազին, մի քանի սաժէն մեծութեամբ, քարեր, որոնց մինչև այսօր էլ կարելի է տեսնել Ս. Յակովի ձորում։

Այդ արտավիժումից չորս օր անցած՝ մի նոր վտանգ պատահեց առաջուանից էլ մեծ։ Նոյն կոկորդից մի նոր արտավիժում տեղի ունեցաւ, այս անզամ արտավիժեց

ջուր։ Ո՞րտեղից էր նա ժողովուել այստեղ—յայտնի չէ։ Ամենաճիշտ ենթադրութիւնն է—երկրի խորքից։ Արարատ լեռան խորքում ջրով լիքը ահազին քարայրեր կան։ Զուրը վերեկից, լեռան ձիւնաթաղ գագաթից, ծծուելով ժողովում է այդ քարայրերում։ Երկրաշարժի ժամանակ այդ քարայրերից մէկը փլուելով, նրա միջի ջուրը հոսել է խառնա-



Ահազին քար, դուրս նետուած Արարատ սարից։
րանը. աւելացել է ջուր և անձրեներից, ու այնքան է ժողովուել, որ մի ամբողջ լիճ է գոյացել։ Սկիզբնան արգելք են եղել խառնարանի եղերքը, բայց ջուրը հետզհետէ շատանալով՝ իր համար դուրս գալու անցք է բաց արել։ Այն ժամանակ տղմաջրի առուները հորդան տալով դէպի Արարատի ստորոտը հասնում են կարասու գետակին և շրջապատում նրան։ Այդ հեղեղներն աւերեցին դաշտեր և այգիներ, իրանց հետ տարան քարեր, ծառեր և մարդկային դիակներ։ Մինչև որ հորդան տալով իջնում էր ներքի մի հեղեղ, կոկորդի մէջ կրկին ժողովում էր ջուրը և նորից իր համար ճանապարհ էր բաց անում դէպի ներքի։ Այսպիսով առաջին հեղեղին հետևում էր երկրորդ աւերիչ հեղեղը, նրան երրորդը և այլն։

Այդ արտավիժումից յետոյ Արարատը լոեց և լոռւմ է մինչև այսօր։ Միայն հազիւ երբեմն նրա շուրջը գետիւ

Նը ցնցւում է, և սրանով վուլկանը, կարծես, յիշեցնում է մարդկանց, թէ նա դեռևս կենդանի է...

Արարատ վուլկանն ամենաբարձրն է Ասիայում:

Ո՞րտեղ են գտնում աշխարհիս ամենասոսկալի վուլկանները:

Ամենասոսկալի վուլկանները նոյնպէս Ասիայումն են գտնում: Տաք երկրում, Ասիայի հարաւային ծայրից ոչ հեռու, Հնդկական ովկիանոսում կան կղզիներ, որոնք Զօնդեան են կոչւում: Այդտեղ կղզիներ շատ կան՝ թէ շատ մեծ և թէ շատ փոքր: Նրանցից մի քանիսը, օրինակ, Սումատրան և Ճավան, մի գծի վրայ են տարածուած, իսկ միւսները հաւաքուած մի կոյտ են կազմել: Սումատրան և Ճավան արգաւանդ և ծաղկած, բայց վայրենի կըղղիներ են: Այստեղ ամենից շատ մալայեան ցեղի վայրենիներ են բնակեում, որոնք ցանում են բրինձ և հացարոյսեր, ձուկ են որսում, զանազան համեմներ են հաւաքում անտառներից և ծախում անգլիացոց և հոլլանդացոց ու գրանով ապրում: Ճավայում և Սումատրայում ահագին վայրենի և անանցնելի անտառներ կան և շատ այնպիսի վայրեր, ուր մարդ երբէք ոտք չի դրել, որովհետև այստեղ թէ անտառն է շատ խիտ, թէ վայրենի գազաններն ու թունաւոր օձերն են բազմաթիւ: Վայրենիներն առաւելապէս կղզիների ափերումն են բնակւում, ուր բազմաթիւ գիւղեր կան, որոնցից մի քանիսը շատ բազմամարդ են:

Ճավայի և Սումատրայի միջև մի ծովանեղուց է անցնում, որ կոչւում է Զօնդեան նեղուց: Հինգ այդ նեղուցին հանդէպ, Հնդկական ովկիանոսում, երեք փոքրիկ կըղղեակներ կան, որոնցից ամենամեծը կոչւում է Կրակատաու, միւս նրանից փոքրը—«Ամայի կղզի», իսկ երրորդը, ամենափոքրը—«Երկայն»: Այդ կղզիներից մինչև Ճավայի

ափը քառասուն երկու վերստ է, իսկ մինչև Սումատրայի ափերը—երեսուն ութ. թէ Կրակատաուն և թէ միւս երկու կղզիներն անբնակ են: Միայն վայրենիները երբեմն գալիս էին այստեղ ձուկ և թոշուն որսալու: Կրակատաու կղզու երկայնութիւնն ութ, իսկ լայնութիւնը վեց վերստ է: Այդ փոքրիկ կղզեակի վրայ երեք հրաբուղիներ էին բարձրացած: Սումատրայի, Ճավայի և միւս Զօնդեան կղզիների վրայ էլ շատ վուլկաններ կան, այնպէս որ այդ կղզիները վուլկանների իսկական բոյնն են, և հինգ այստեղ են գտնում երկրիս ամենասոսկալի վուլկանները:

Քսան տարի առաջ Կրակատաուի վուլկանների մասին քիչ մարդիկ տեղեկութիւն ունեին, նրանց վրայ մտածող էլ չկար: Գիտէին միայն որ այստեղ երեք վուլկան կայ՝ ամենամեծը կոչւում է Ռակատա, միւսը՝ Պանան, իսկ երրորդը՝ Պերբուատան: Ռակատա վուլկանը երեք քառորդ վերստ բարձրութիւն ունէր, և երկու հարիւր տարի էր արդէն, որ երեք վուլկաններն էլ անդործ էին:

Յանկարծ 1880 թուականի մայիսի 1-ին գետինը Կրակատաուի տակ ցնցուեց: Երկրաշարժն այնպէս սաստիկ էր, որ Կրակատաուից երեք հարիւր վերստ հեռու անգամ զգացուեց, բայց դա շուտով անցաւ, և, կարծես, ամեն ինչ հանգստացաւ:



Կրակատաու լեռը արտավիժուամից առաջ:

Սակայն այդ հանգստութիւնը երկար չտևեց։ 1883
թուի մայիսին մի սարսափելի անցք պատճեց, այսինքն
Կրակատառ կղզու վրայ մի այնպիսի արտավիժում եղաւ,
որպիսին քիչ է պատահում երկրիս վրայ։ Այդ արտավի-
ժումը մարդկանց յիշողութեան մէջ ամենասոսկալին է
համարւում։ Նրա ժամանակ կղզիներից մի քանիսը փլուե-
լով ծովը թափուեցին, միւսները ծովի յատակից դէպի մա-
կերևոյթը բարձրացան, մի քանիսը մեծացան, միւսները
փոքրացան, տասնեակ հազարաւոր վերստ տարածութեան
վրայ գետինը ցնցւում էր, ովկիանոսի վրայով ահագին
ալիքներ վազեցին և աւերեցին ձավայի, Սումատրայի և
միւս կղզիների ափերը։

Թէ ի՞նչպէս սկսուեց արտավիժումը — յայտնի չէ, ո-
րովհետև այն միջոցին Կրակատառ կղզու վրայ ոչ ոք
չկար. Մայիսի 20-ին Զօնդեան նեղուցով մի գերմանա-
կան զինուորական նաւ էր անցնում, այդ նաւի նաւաս-
տիներն առաջինը նկատեցին, որ Կրակատառ կղզում,
կարծես, ամեն բան կարգին չէ, կղզու վրայ տասը վերս-
տից աւելի բարձրութեամբ մի մեծ ջրաշողու սիւն էր
բարձրացել, յետոյ նա հասաւ երեսուն վերստից աւելի
բարձրութեան. Այդ շոգեսիւնն ամուր կանգնած էր օդում,
և սաստիկ քամին անգամ չէր կարող նըան ճկել: Շողինե-
րը, մոխրախառն լինելուց սկ էին երեսում, ահագին բարձ-
րութեան վրայ նըանք տարածուելով՝ լայն թխպի փոխուե-
ցին, որից մոխրը վայր էր թափում և թափում ուղ-
ղակի նաւի տախտակամածի վրայ: Շատ տասնեակ վերս-
տեր շուրջը՝ գետինը՝ դողդողում էր:

Ճավայի բնակիչներից ոմանք կամեցան իմանալ, թէ
ինչ է կատարւում Կրակատառ կղզում, նոտեցին շոգենաւ
ու մօտեցան կղզուն: Այստեղ նրանք տեսան, որ Պերըուա-
տան հրաբուզին է միայն դործում, իսկ միւս երկուսը—

Թակատան և Դանանը – լուռ են: Անցաւ մի ամիս, որի
միջոցին Պերբուատանի արտավիժումը դեռ շարունակւում
էր անընդհատ: Յետոյ մի առ ժամանակ, կարծես, նա
հանգարտեց, բայց յունիս ամսին նորից սաստկացաւ. մի
և նոյն ժամանակ Դանան հրաբուղին էլ սկսեց գործել,
այնպէս որ, մի որոշ ժամանակ երկու հրաբուղիներն էլ
միասին էին գործում, բայց օրէցօր նրանց կոկորդները
լայնանում էին և, կարծես, իրար հանդէպ գնում: Շու-
տով Պերբուատան սարն անմիջապէս անյայտացաւ՝ քար
քարի յետեկից չքանալով: Նրա տեղում յայտնուեցին երեք
նոր կոկորդներ, նրանց շուրջը երեք նոր լեռներ բարձրա-
ցան, իսկ զբանց վրայ բացուեցին բազմաթիւ կողմնակի-
վուլկաններ: Այս պատահեց օդոստոսի սկզբին: Այս ամսի
11-ին կրակատառի մօտով անցնում էր մի առևտրական
նաւ: Նաւապետը չվախեցաւ մօտենալ կզզուն և տեսնել,
թէ ինչ է կատարւում այնաեղ, որ և պատմեց իր տե-
սածը:


իսկ արտավիճումը չէր դադարում, և երկիրը շարունակում էր ցնցուել. թէ ստորերկրեայ և թէ կղզու վրայի որոտմունքներն առաջուայ պէս էին, երբեմն էլ աւելի սաստիկ մոխրախառն ջրաշոգին ամեն մի կոկորդից աւելի էր դուրս դալիս: Օգոստոսի կէսին Դանան հրաբուղին էլ աներեւութացաւ, քար քարի յետնից չքանալով և մնացորդը վլուելով: Այսպիսով կրակատառ կղզում երկու վուլկան անհետացաւ, և նրանց փոխարէն մի քանի նորերը լոյս ընկան: Այդ վուլկանների կոկորդներն անդադար աճում էին, ուստի օգոստոսի 26-ին մի սոսկալի դժբախտութիւն պատճեց:

Ահա ինչ են պատմում Ճավայի և Սումատրայի բնակիչներն ալդ սարսափելի օրուայ մասին:

Այդ օրն առաւօտեան եղանակը պարզ էր և գեղեցիկ:

Կէսօրից յետոյ մօտ ժամը մէկին կրակատառւ կղզու կողմից մի սպառնալից գղրդիւն լսուեց։ Այդ գղրդիւնը ժամ առ ժամ սաստկանում էր, այնպէս որ բնակիչները նրա ձայնից չէին կարողանում քնել։ Կրակատառւ կղզուց բարձրացող ջրաշոգու սիւնը յանկարծ աւելի բարձրացաւ, հասնելով երեսուն և աւելի վերստի։ Երկինքը մոխրի թանձրութիւնից սկսեց մթնել, և արել մայր մանելուց յետոյ ծավայ կղզում կատարեալ խաւար տիրեց։ Խուլ ձայներ էին լսում, ծովս ալէկոծւում էր, իսկ ծովի վրայ, թէ մեծ քամի չկար, բայց ահագին ալիքներ էին շրջում, փոքը նաւերն ալիքներին կուլ գնացին, իսկ մի քանի գիւղեր հեղեղեց ու տարաւ։

Այդ բոլորը կրակատառից 40—50 վերստ հեռու պատահեց. իսկ ինչ էր կատարւում այնտեղ—կղզու վրայ —յայտնի չէ։ Ամեն ինչ ցոյց էր տալիս, թէ այնտեղ մի չտեսնուած արտավիժում է տեղի ունենում։



Կրակատառի արտավիժումը։


Գիշերը քամի էլ բարձրացաւ, այն ժամանակ Սումատրայի և ծավայի բնակիչների դրութիւնն աւելի վատթարացաւ, մանաւանդ ծանր էր ծավայի ծովեղերեայ գիւղերի դրութիւնը. Վերեից մոխրի էր թափթիւնը։

Պատմում են նաւաստիները, թէ մոխրը ծածկել էր նրանց նաւի տախտակամածն ամբողջովին, կէս սաժէն հաստութեամբ։ Մոխրի հետ ահագին մեծութեամբ քարի բեկորներ էլ էին ընկնում։ Թէպէտ լուսնկայ գիշեր էր, բայց անթափանցելի խաւար էր պատել երկիրը։ Կրակատառւ կղզին հետզհետէ աւելի սաստիկ էր գոռգոռում։ Հեռուից երեւում էր, որ նրա վրայ շուտ-շուտ փայլակներ են շողշողում։

Հասաւ օգոստոսի 27-ի առաւօտը. Սկզբում կասես թէ երկինքը պարզեց, բայց շուտով կրկին խաւարը տիրեց, և այսպէս շարունակուեց ամբողջ 18 ժամ։ Արտավիժումը խաւարի մէջ էր կատարւում։ ծավայի և Սումատրայի ծովափեայ բնակիչները սարսափահար դէս ուղին էին վազում և փրկութեան տեղ որոնում։ Ամենուրեք խաւար էր թագաւորում, ամեն տեղ ծանր քարեր էին ընկնում վերեից և տաք մոխր էր թափւում։ Մոխրը, չեչչաքար, լաւայի փշրանք, մածուցիկ տիղմ՝ այդ բոլորը ծածկել էին ծավայի և Սումատրայի ափերը։ Ծովի ալիքներն էլ հետզհետէ մեծանալով ներս էին խուժում ափերից։ Յանկարծ մի ահոելի հարուած սասանեցրեց երկիրը և ջուրը, սա պայթիւն էր, որ պատահեց կրակատառւ կրդզում, այնտեղ բոլոր կոկորդները միանալով կազմել էին մի ահագին մեծ կոկորդ և կղզու աւելի քան կէսն օդն էր ցնդել։ Օդն այդ պայթիւնից այնպէս տարութերուեց, որ սարսափելի մըրիկ առաջացաւ, ահազնատեսիլ ալիքները լեռնանման բարձրանում էին, ոմանք հասնելով 15 սաժէն բարձրութեան, և իրար յետեից ցամաք մանելով՝ ծավայ և Սումատրա կղզիներում հեղեղելով անհետ կործանեցին բազմաթիւ գիւղեր և մի քանի քաղաքներ։ Ողողելով տարան նոյնպէս հոլանդացոց անցկացրած երկաթուղու թումբը, շատ դաշտեր և խիտ անտառներ անդամ։ Կարծես,

ամբողջ ծովեղերքի համար ջրհեղեղ էր վրայ հասել: Հիմ-
նայատակ աւելուեցին թենտամ, Մէրաք, Անժէր քաղաք-
ները և շատ ուրիշներ, որոնցից մինչև կրակատառ 50
վերստ է: Նման աղէտներ պատահեցին և Սէրէզի և Սէ-
րամի կղզիներում, որոնք 20—25 վերստ հեռու են գրա-
նւում կրակատառից: Այդ կղզիների բոլոր բնակիչները
միանգամից անհետ կորան, սոսկալի ալիքները կղզիների
վրայից ամեն ինչ սրբեցին տարան՝ թէ մարդ, թէ անտ-
առն և թէ բուսականութիւն:

„Թէ ինչ պատահեց նրանից յետոյ ծավայի ափերում պատմում է ականատեսը, այդ անկարելի է նկարագրել։ Մարդիկ դէսուդէն էին վազում, չգիտէին ուր փախչեն, սարսափահար, բոլոր ոյժերը լարելով փրկութիւն որոնելու համար, նրանք, կարծես, գաղանացել էին։ Ոմանք փոխանակ փախչելու ուղղակի դէպի ջուրն էին զիմում։ Խաւարն ամեն ինչ ծածկել էր, իսկ մոխիրը վերևից թանձը անձընի նման թափւում էր ու թափւում, սաստիկ ցերմացնում օդը և գժուարացնում շնչառութիւնը։ Գետինը ցնցւում էր, յաճախ որոտմունքներ էին լաւում և գետնի տակից պայթիւններ։ Ծովի վրայ փոթորիկը չէր հանդարտում, իսկ ալիքները ցամաքի մէջ էին խորամուխ լինում»։



Կրակատառն արտավիժումից յետոյ:

Այսպէս անցաւ օգոստոսի 27-ի սուկալի օրը: Հետեւ և առաւտուն երկինքը պարզուեց: Արտավիժումը, կարծես, հանդարտել էր, բայց չէր դադարել: Այս ժամանակ միայն մարդիկ մի քիչ ուշը եկան. բայց իրանց շուրջը նայելով աւելի ևս ահարեկ եղան, որովհետեւ ձավայի և Սումատրայի ափերը միանդամայն անտպատ էին դարձել, այսպէս որ անկարելի էր ճանաչել նրանց: Շատ տասնեակ վերստ տարածութեան վրայ, որքան աեղ որ հասել էին ալիքները, թաւ անտառներն անհետացել էին, իսկ մերկացած գետինը ծածկուած էր մարդկանց և կենդանիների զիակներով, արմատախիլ եղած ծառերով և պաւերուած շինուածքների բեկորներով: Ծովի վրայ այնքան շատ էին լողացող չեչաքարերը որ բոլոր ալիքները սպիտակ և մոխրագոյն էին երկում: Քաղաքներից և գիւղերից հետք համարեա չէր մնացել: Երկու կամ երեք օքուայ մէջ յիսուն հազար մարդուց աւելի էր փշացել:

Ահա ինչպէս վերջացաւ Կրակատառու կղզու սոսկալի արտավիժուամբ: Նրա վերջանալուց յետոյ մարդիկ գնացին այդ կղզին և չճանաչեցին նրան: Նա արտավիժման միջոցին առաջուանից եռապատիկ փոքրացել էր: Դանան և Պերըուատան վուլկանները չքացել էին երկրի երեսից: Այն տեղն, ուր նրանք կանգնած էին, վլուել էր ծովի մէջ: Սկսեցին չափել այդտեղ ծովի խորութիւնը և տեսան որ հարիւր յիսուն սաժէն է, տեղ-տեղ և աւելի: Դրա վոխարէն որտեղ որ առաջ խոր էր, այժմ ծանծաղուտ էր գարձել, որովհետեւ ծովի յատակի այդ տեղում շատ մոխիր ու աւագ էր կուտակուել: Մնաց միայն Կրակատառու կղզու վրայ Ռօգատա վուլկանը, որը չի գործում, այլ մեռելի նման անշարժ կանգնած է:

**Ի՞նչպէս զգացուեց Կրակատառի արտավիճումը Երկրին
միւս կողսերում։**

Արտավիժումը վերջանալուց յետոյ սկսան լրադիրների միջոցով լուրեր հասնել երկրի զանազան կողմերից: Այժմ ահա պարզուեց, թէ ինչ անցքէ տեղի ունեցել Կրակատառի վրայ: Երկրի այլ և այլ կողմերի բնակիչները գգացել էին նրան: Նա մի քանի հազար վերստ տարածութիւն էր գրաւել լայնութեամբ և երկայնութեամբ: Արտավիժման ժամանակ բարձրացած ծովային ահագին ալիքները տարածուել էին ամեն կողմ: Աղևմուտքում նրանք ամբողջ Հնդկական ովկիանոսն էին կտրել—անցել, իսկ արևելքում բաւական տեղ Մեծ ովկիանոսն: Հնդկական ովկիանոսից անցնելով՝ ալիքներն Աֆրիկայի ափերին էին զարկուել, իսկ Աֆրիկայից՝ մինչև Կրակատառ վեց ու կէս հազար վերստ են հաշուում: Ալիքները Մեծ ովկիանոսով հասել էին մինչև Ամերիկա, իսկ Ամերիկայից մինչև Կրակատառ երեք անգամ աւելի են հաշուում, այսինքն 18 հազար վերստ: Ամերիկայի բնակիչները չեին հասկանում, թէ որտեղից յանկարծ յայտնուեցին ծովի վրայ այսպիսի անսովոր ալիքներ. քամի չկայ, բայց ալիքները մեծ-մեծ են: Այս ժամանակ բանը պարզուեց, երբ Կրակատառի սոսկալի արտավիժման մասին լուրեր հասան: Իսկ ալիքները Հնդկական ովկիանոսից Ատլանտեանը վագելով՝ Աֆրիկայի բոլորքով անցան. Ատլանտեանում նրա երկայնքով վագելով, հասան մինչև Ֆրանսիայի ափերը, լայնքով վագելով՝ հասան մինչև Ամերիկայի ափերը: Ալիքները մի ժամում հինգ հարիւր վերստ էին անցնում:

Այդ փաստերը ցոյց են տալիս, որ կրակատառի արտավիժումը երկրիս ծովերը շարժել էր. ալիքներն անցել էին ամբողջ երկրի շուրջը: Իհարկէ, որքան նրանք առաջ

Էին դնացել, այնքան նուազել էին և իրանց ուժը կորցրել, բայց այնու ամենայնիւ կարելի էր նրանց տարբերել սովորական ծովային ալիքներից:

Կրակատառի արտավիժումը բացի ծովերից օդն էլ աղմկեց։ Օդի մէջ էլ ալիքներ վազեցին դէպի ամեն կողմ և շրջապտոյտ արին ամբողջ երկրով։ Նրանց ներկայութիւնը զգացին և Պարիզում, և Բերլինում, և Պետերբուրգում *): Այդ ալիքը մի ժամում համարեա հազար վերստ էր անցնում, և առ 10 ժամում վազեց մինչև Բերլին։ Նա երկրի շուրջը մի քանի անգամ պտտեց, բայց և այնպէս չհանդարտեց։ Հանդարտեց արտավիժումից միայն մի շաբաթ յետոյ։

*) Կայ մի գործիք, որ կոչում է ծանրաշափ, և այսպէս է կազմուում. վերցնում են 35 մատնաշափ հրկայնք ունեցող մի ապակէ խողովակիկ, նրա մի ծայրը գոցում, իսկ մէջն ածում սնդիկ. Ապա սնդիկով լիքը մի փոքրիկ թաս են վերցնում, ու նրա մէջ իջեցնում խողովակիկն այն զիրքով, որ գոց ծայրը վերև լինի, իսկ բացը՝ ներքեւ: Կարելի է խողովակիկն իջեցնել թասի մէջ այսպէս, որ սնդիկը խողովակիկից դուրս չգայ և վերջինիս մէջ օդ չմտնի: Այսպէս անսելուց յետոյ, ահա ինչ կըստացուի. իջեցրած խողովակիկը լի ծայրով կանգնած է սնդիկով լիքը թասի մէջ, իսկ սնդիկը խողովակիկից դուրս չի գալիս, այլ 30 մատնաշափ բարձր է կանգնած թասի միջի սնդիկի հաւասարութիւնից: Խողովակիկի մէջ սնդիկից վեր դատարկութիւն է, այնտեղ օդ չկայ: Բայց ինչո՞ւ սնդիկը խողովակիկից չի թափում թասի մէջ: Որովհետեւ ինչ որ բան նրան արգելում է թափուել և յետ է մըզում խողովակիկի մէջ: Ի՞նչն է արգելում նրան թափուել: Արտաքին օդի ճնշողութիւնը: Օդը, որով մենք չնշում եք, կշիռ ունի: Նա իր ծանրութեամբ ճնշում է թասի մէջ ածած սնդիկը և մղում նրան խողովակիկի մէջ, իսկ խողովակիկում սնդիկից վեր օդ չկայ. կընշանակէ՝ նրան վերկից ճնշող ոչինչ չկայ: Ա. ընմանական օդի ճնշողութիւնը: Երբոր օդը կըսկսի քիչ ճնշել, այն ժամանակ խողովակիկի սնդիկն էլ կըցածրանայ, կիֆնի: Իսկ երբ օդը կըսկսի աւելի ճնշել, աւելի սնդիկ կըմդէ խողովակիկի մէջ, և սնդիկն էլ նրա մէջ աւելի բարձր կըկանգնի: Կընշանակէ՝ սնդիկի բարձրութեանը նայելով, կարելի է իմանալ, թէ որ պահիս ուժով է ճնշում օդը: Հենց այդ գործիքն է ծանրաշափը: Դա պարզ գործիք է,

Արդեօք կրակատառից հրքան հեռու էր լսում արտավիժման գոռզոռոցը։ Այդ լսելի էին այն երկրներում, որոնք կրակատառից երեք հազար վերստից աւելի հեռու էին գտնվում։ Այդ տարածութիւնն աւելի հեռու է, քան թէ Պետերբուրգից մինչև կովկաս։ Այսպիսի գոռզոռոց երկրի վրայ դեռևս երեք չէր եղել։

Աւելի զարմանալին այն է, որ կրակատառվի վուկանենքը դուրս էին ժայթքել իրանից մոխրի, չեչաքարի և լաւայի մեծ քանակութիւն, այնպէս որ եթէ այդ բողոքը ժողովուէր, կը սաացուէր տամնհինդ խորանարդ վերստանոց մի կոյտ։ Տեղատեղ մոխրը քսան սաժէն հաստութեան խաւով էր ընկած։ Մոխրից և լաւայից ծովը կրակատառվ մօտ ծանծաղացել էր, իսկ Երկայն և Ամայի կղզիները սաստիկ վեր էին բարձրացել։ Այդ երկու կղզիները ոչ հեռու երկու նոր կղզիներ էին լոյս ընկել՝ մէկը երեք, միւսը չորս քառակուսի վերստ մեծութեամբ։ Երկու կղզեակներն էլ գոյացած էին մոխրից, և ծովը շուտով ողողեց տարաւ նրանց։ Բացի մոխրից վուկանենքը մեծ քանակութեամբ չեչաքար էին դուրս ժայթքել։ Չեչաքարը ջրի վրայ լողում է, ինչպէս փրփուր, ուստի տեղատեղ ծովի վրայ այնքան շատ չեչաքար էր ժողովուել, որ չեղջ-շեղջ լողում էր, լողացող կղզիների նման, մի սաժէն բարձր ջրի մակերեսոյթից։ Ուրիշ տեղերում չեչաքարը խաւ բռնած էր լողում. չեչաքարի մի այդպիսի խաւ պա-

միենոյն ժամանակ շատ զգայուն: Երբ Կրակատառուի արտավեժ ժումից օդի մէջ ալիքներ շարժուեցին, օդի ճնշումը յանկարծ աւելացաւ, յետոյ յանկարծ նուազեց: Դրանից խողովակիկի մնդիկը սկզբում արագ բարձրացաւ, յետոյ արագ իջաւ: Այս էր պատճառը, որ երկրի զանազան տեղերում նկատեցին Կրակատառուից եկած օդային ալիքներ: այդ երևոյթն առանց ծանրաչափի չէին նկատիլ:

տերապմական մեծ-մեծ նաւերն անդամ չէին կարողանում
ճեղքել ու անցնել, վախենալով մի գուցէ մեքենան կոտ-
րուի: Մի այսպիսի դէպք պատահեց: Լողացող չէջաքարի
մէջ խրուեց մի մեծ հոլլանդական նաւ, որի վրայ դրժ-
բախտաբար քիչ պաշար կար, —ընդամենը 6 օրուայ: Նա-
վը չէջաքարի մէջ խրուեց ու մնաց. դէս ու դէն էր ընկ-
նում ու չէր կարողանում ազատուել: Անցնում են օրեր,
անցնում է մի ամբողջ շաբաթ, իսկ լողացող չէջաքարին
վերջ չկայ, և նրանից ազատուելն անհնարին է: Ուտելու
բան չկար, սովորուեց, ծովային զինուորների դրութիւ-
նը շատ վատ վատթարացաւ: Նրանց բախտից մըրիկ բարձրա-
ցաւ, ցրուեց չէջաքարերը և ազատեց նաւը գերութիւնից:

Կրակատառուից աւելի շատ մոխիք ժայթքեց, քան թէ
չեչաքար, եօթը հարիւր յիսուն հազար քառակուսի վերստ
տարածութիւն միմիայն մոխրով էր ծածկուած, որը մին-
չև Մոսկվա և Պետերբուրգ էր հասել: Գետնի միջից դուրս
էր նետուում նա վախտուն վերստ բարձրութեամբ. այդտեղ
քամին յափշտակում էր նրան և ցրւում զանազան կող-
մեր: Նա մոխրագոյն և գեղնագոյն էր, և մի քանի ամիս
շարունակ պահուում էր բարձրում—գետին չէր ընկնում:
Սրանից, արևի մայր մտնելու ժամանակ երկինքը գեղնա-
կարմիք էր երկում, իսկ արևը—կանաչ: Մարդիկ երկար
ժամանակ չէին հասկանում, թէ ինչից երկնքի գոյնն այս-
պէս կապոյաց գեղինի փոխուեց: Վերջապէս իմացուեց,
թէ որտեղից է եղել գեղին ամպը, և հասկացուեց բանի
էութիւնը: Այդտեղ մի գիտնական ևս նոր գիւտ արեց:
Մի ձմեռային օր նա գնում էր ձիւնապատ լեռնով: Մի
ամայի վայր էր՝ մարդկային բնակարաններից հեռու: Յան-
կարծ գիտնականը նկատեց ձիւնի վրայ ինչ որ փոշի: Ի՞նչ
փոշի էր այդ և որտեղից էր այդտեղ ընկել: Գիտնականը
հաւաքեց, որքան կարողացաւ, այդ փոշուց, բերեց տուն

և խոշորացոյց ապակու տակ զննեց նրան *): Զննելուց յետոյ դժուաւ, որ այդ փոշին վուլկանական շատ մասը մոխիր է:

Թէմբօրօ վուլկանը:

Ճավայ կղզին համարեա հազար վերստ երկայնութիւն ունի: Ամբողջ երկրի վրայ ոչ մի տեղ այնպէս շատ չեն վուլկանները, ինչպէս այդտեղ: Ճավայի վրայ ամբողջ հարիւր հատ վուլկան են հաշւում, որոնք կանգնած են շարքով: Ճավայի մի ծայրում կրակատառն է գտնւում, իսկ միւսում—Սումբավա կղզին: Վերջինիս վրան է թէմբօրօ ահռելի վուլկանը, որից 1815 թուին տեղի ունեցաւ երկրիս միւս սոսկալի արտավիժումը: Սկիզբ առաւ դա ապրիլի 5-ին: Սարսափելի պայթիւններ քառորդ ժամի ընդհատումով հետեւում էին միմեանց: Խառնարանից ծխի մի տհագին սիւն բարձրացաւ, հետն էլ երեաց լաւա: Զարմանալին այն է, որ լաւան չէր հոսում, այլ վայր էր ընկնում հրաշիկացած բեկորներով: Շուտով ամբողջ լեռը ծածկուեց ծխի և մոխրի ամպերով: Վուլկանի կանոնաւոր, կարծես ժամ առ ժամ կրկնուող, ահարկու գոռգոռոցը երեք հազար երկու հարիւր վերստ հեռաւորութիւնից էր լաւում, և հեռուից նման էր թնդանօթաձգութեան: Այդ ժամանակ անզիւացիները պատերազմ էին մզում ֆրանսիացիների դէմ: Անզիւացիները լսելով վուլկանի հե-

*) Խոշորացոյց ապակին շինւում է սովորական լաւ ապակուց: Նա լինում է կլոր և երկու կողմից դուրս ընկած: Այսպիսի, երկու կողմից կորնթարթ՝ ապակին կոչւում է խոշորացոյց, որովհետեւ ամեն մի իր, նրա միջով իր չափից աւելի մեծ է երեւում: Մի քանի կորնթարթ ապակիներ շրջանակի մէջ դրուած՝ կոչւում են մանրազդատակ:

ուաւոր գոռգոռոցը, կարծում էին թէ մօտակայքում կոփւ է մզւում ֆրանսիացիների դէմ: Մինչև անգամ մի անգվական զինուորական նաւ հետազօտելու դնաց: Թէմբօրօ վուլկանն այն-

պէս սոսկալի

կերպով էր

գոռգոռում, որ

բոլոր հարեան

կղզիները դու-

ղում էին: Այդ

գոռգոռոցը մի

ամբողջ շաբաթ

անընդհատ շա-

րունակուեց:

Ապրիլի 10-ին

բնաւ քամի

չկար, բայց

ծովի վրայ ահագին մեծութեամբ ալիքներ էին վազում,

որոնք այդ միջոցին երկու սաժէնով աւելի բարձր էին,

քան ամենասատիկ մըրիկի ժամանակ:

Սլէկոծութիւնը

տեսեց միայն երեք բոպէ, բայց այդ կարճ միջոցին էլ ո-

ղողելով տարաւ ափերից տներ, անտառներ, իսկ ծովի

յատակից ափը դուրս նետեց շատ վազուց խորասուզուած

նաւերի մնացորդներ:

Հրահալուած լաւան վուլկանից դուրս

թափուելով սաստիկ տաքացրել էր օդը, ուստի ամեն կող-

մից քամի բարձրացաւ, ինչպէս հրդեհի ժամանակ, և սաստ-

կանալով մըրիկի փոխարկուեց:

Մըրիկն աւերում էր գիւ-

ղեր, արմատահան անում անտառների ահագին ծառեր,

փետրի նման վեր-վեր ձգում մարդիկ, անտառներ, տներ

և այն ամենը ինչ ճանապարհին հանդիպում էր:

Մըրիկը



Լաւայի պաղած հեղեղ:

ծովի վրայ ահագին մեծութեամբ ալիքներ էին վազում, որոնք միջոցին երկու սաժէնով աւելի բարձր էին, քան ամենասատիկ մըրիկի ժամանակ: Սլէկոծութիւնը տեսեց միայն երեք բոպէ, բայց այդ կարճ միջոցին էլ ողողելով տարաւ ափերից տներ, անտառներ, իսկ ծովի յատակից ափը դուրս նետեց շատ վազուց խորասուզուած նաւերի մնացորդներ:

Հրահալուած լաւան վուլկանից դուրս թափուելով սաստիկ տաքացրել էր օդը, ուստի ամեն կողմից քամի ժամ ցոյց տուեց իր կատաղութիւնը, բայց այդ

մի ժամուայ մէջ էլ շատ վիասներ հասցրեց և մի քանի
հազար մարդ կուորեց: Այդ միջոցին լեռն իր միջից դուրս
նետեց չեչաքարի, լաւայի փշամնքի և մոխրի մեծ քանա-
կութիւն, բայց արդեօք լաւա էլ ժայթքեց — յայտնի չէ:
Ծովը հարիւրաւոր վերսա տարածութեամբ ծածկուած էր
չեչաքարով. մոխրը հաստ խաւով ծածկել էր ամբողջ
կղզին, այնպէս որ շատ տեղ տանիքները վկուել էին նրա
ծանրութեան տակ: Բարդաւաճ երկիրն աւերակ դարձաւ,
ոլողաւէտ դաշտերն ամայացան: Միմիայն Սումբավա կըդ-
գում 12 հազար մարդ մեռաւ, իսկ մօտակայ Լէմբօկ կըդ-
գում 44 հազար մարդ: Շատ մարդիկ մոխրի տակ թա-
ղուեցին, աւելի շատը սովից մեռան, այնպէս որ բոլորի
թիւը կազմում է հարիւր հազարից աւելի: Ամբողջ երեք
օր արեն ամպերի տակ էր ծածկուած, և աւելի մութ էր
քոն անաստղ գիշերը: Թէմբօրօից ութը հարիւր վերստ
հեռու անգամ կատարեալ խաւար էր տիրել: Մոխրային
թխպերը մթնացրել էին արել հինգ հազար քառակուսի
վերստ հեռաւորութեան վրայ և ցերեկը գիշերի փոխար-
կել: Թէմբօրօից հինգ հարիւր վերստ հեռու գտնուում է
ծովի վրայ Բօրնէօ մեծ կղզին, մոխրն այստեղ էլ հա-
ստ և թափուում էր մեծ քանակութեամբ: Տեղացիներն
այնպէս էին զարմացած այդ երեսյթի վրայ, որ այդ անց-
քից սկսեցին հաշուել իրանց տարեթիւը: Ընդամենը գուրս
թափուեց Թէմբօրօի կոկորդից հարիւր յիսուն խորանարդ
վերստ մոխրի:

Թէմբօրօ վուկանի և կրակատառ կղզու արտավի-
ժումներն ամենասոսկալիներն են երկրիս վրայ պատա-
հածներից, որոնք մարդկանց յիշողութեան մէջ մնացել են:
Այդ արտավիժումների միջոցին երկիրը ցոյց տուեց, թէ
ինչ ահարկու ոյժեր են թափնուած իր ծոցում:

Գ. Հ. ՈՒ Խ Դ.

ՈՐՏԵՂ Է ԱՄԵՆԱՇԱՏ ԼԱԽ ԲՂԽՈՒՄ ԵՐԿՐԻՑ

Խոլանդիա կղզին:

Եվեղական տէրութիւնից հեռու դէպի հիւսիս, ով-
կիանոսի մէջակը, կայ մի մեծ քարու կղզի, որ հազար
վերստով հեռու է ընկած բոլոր ափերից, և նրանից մին-
չեւ Եվեղացոց մայրաքաղաքը հազար իննը հարիւր վերստ
են հաշւում:

Խոլանդիան մի մեծ կղզի է, բայց ամայի: Նրա վրայ ընդ-
ամենն ապրում է յիսուն հազար մարդ, — մի ազգ, որ տոհ-
մակից է շվեդներին և դանիացիներին: Նա ամենից աւելի
զբաղւում է ձենորսութեամբ, իսկ որտեղ հնարաւոր է — երկ-
րագործութեամբ, որովհետեւ Խոլանդիայի հողը անյարմար է
երկրագործութեան համար. նա մեծ մասմբ բաղկացած
է պաղած լաւայից և աւազից: Կղզու վրայ անմատչելի վայրեր
շատ կան՝ լեռներ, ժայռեր և կամ սառուցներ: Լեռներից
շատերն ամբողջ տարի ձիւնով են ծածկուած: Խոլանդիան
ցուրտ երկրում է գտնուում: Սառուցեալ ծովի սահմանում,
որանից է որ ձիւնն ու սառոյցը ոչբարձր լեռների վրայ
անդամ մնում է: Խոլանդիան լեռնոտ կղզի է: Լեռների մէջ
վուկաներ էլ կան, որոնք մինչեւ այսօր գործում
են: Դրանց արտավիժումների մասին ականատեսները շատ
զարմանալի բաներ են պատմում: Խոլանդիայի վուկաներն
ուրիշներից նրանով են տարբերուած, որ նրանցից խիստ
շատ լաւա է բղխում: Ոչ մի երկրում գեանի տակից այն-
քան լաւա չի բղխում, որքան այստեղ: Խոլանդիայում ե-
ղած գիտնական մարդիկ ասում են, թէ այդ կղզին ամ-
բողջապէս լաւայից է կազմուած: Լաւան նրա համար իր-

ըև հիմք է ծառայել: Իսլանդիայի վուլկաններն առանձին տեսք ունեն և արտավիժումներն առանձին կերպով են կատարում, վուլկանները շատ ցածր են և լաւան յաճախ հոսում է ոչ թէ սարից, այլ գետնի ճեղքուածքներից: Յայտնում է գետնի մէջ մի քանի վերստ երկարութեամբ և մի քանի սաժէն լայնութեամբ ահագին ճեղքուածք, և նրանից այս ու այն տեղ սկսում է լաւա հոսել: Նրա արտարդիման տեղերում արագ բումնում են փոքրիկ, երբեմն հարիւր սաժէն բարձրութիւն ունեցող, սարեր, և այդ վուլկաններից բզիսում է լաւա: Այդ վուլկանները սովորաբար շարուած են լինում ամբողջ ճեղքուածքի երկայնքով: Եղել է դէպք, երբ մի քանի օրուայ մէջ մի ճեղքուածքի վրայ երեք տամնեակ վուլկաններ են բուսել: Երբեմն լաւան ուղղակի ճեղքից է հոսում առանց որևէ վուլկանի, այդ դէպքում մոխիրը և լաւայի փշրանքները կուտում են ճեղքուածքի երկու կողմում և նրանցից բարձրանում են երկու երկայն պատճէշներ:

Իսլանդիայի արտավիժումներն ընդհանուր հաշուով իւրաքանչիւր քառասուն տարին մի անգամ են կատարում: Յաճախ են պատահում այստեղ և սաստիկ երկրաշարժներ: Պատահել է որ երկրաշարժի միջոցին ամբողջ բլուրները ցածրացել են, իսկ լեռներում ճեղքուածքներ են առաջացել, գետերը թողել են իրանց հուները, իսկ նրանց փոխարէն յայտնուել են լճեր: Իսլանդիայի ափերին մօտ ծովումն էլ են արտավիժումներ պատահում, երբեմն այնտեղ ծովի յատակից լոյս են ընկնում փոքրիկ կղզիներ, որոնցից ոմանք մինչև այսօր էլ գոյութիւն ունեն, իսկ միւսները ծովի ալիքներից ողողուելով անհետացել են:

Ի՞նչպիսի արտավիժումներ են լինում Իսլանդիայում:

Իսլանդիան իրաւապէս կարելի է անուանել ստորերկրեայ կրակի թագաւորութիւն, թէպէտ նա սառը ծովումն է գտնուում: Ստորերկրեայ կրակն այստեղ ցոյց տուեց իրան սարսափելի արտավիժումներով: Ահա ինչ են պատմում ականատեսները մի այնպիսի արտավիժման մասին, որ պատահեց 1785 թուին: Ամենից առաջ գետնի մէջ մի մեծ ճեղքուածք յայտնուեց: Այդ միջոցին երկիրը դողում էր ու տատանուում, իսկ գետինը ճաքելիս՝ մի ահեղ, որոտանման գոռգոռոց լսուեց: Ճեղքուածքի երկայնքը 20 վերատից աւելի էր: Մի քանի տեղ միանդամից լաւա երկաց, որից սկսուեց արտավիժումը: Շուտով ճեղքուածքի երկայնքով 34 վուլկաններ բսան, որոնք բոլորն էլ ցածր էին, նրանցից ամենամեծը 75 սաժէն բարձրութիւն ունէր: Լաւան հոսում էր ճեղքուածքի երկու կողմից երկու հոսանքով, որոնցից իւրաքանչիւրի երկայնքը քառասուն վերստ կը լինէր: Լաւայի հեղեղները շուտով ծածկեցին իննը հարիւր քառակուսի վերստ արածութիւն, մօտ յիսուն, տեղ-տեղ շատ աւելի՝ սաժէն խորութեամբ: Մարդիկ երեք չեն յիշում, որ այդքան լաւա դուրս եկած լինի գետնի տակից:

Մի այլ ականատես պատմում է, թէ ինչ փորձանքներ է կրել նա այդ արտավիժման ժամանակ:

«1783 թուի յունիսի 1-ին մեղնում սաստիկ երկրաշարժ տեղի ունեցաւ, որ առեց մի ամբողջ շարաթ, կարձատե ընդհատումներով: Երկնքի հիւսիսային կողմը մըթնեց, երկնքով մի սկ ամպ տարածուեց և նրանից թափուեց մեր գիւղի վրայ կապոյտ մոխիր: Մենք, գիւղացիներս, դրանից հասկացանք, որ մեզնից հեռու, մեր կղզու ինչոր տեղում, արտավիժում է կատարուում, որը մեզ հա-

մար էլ վտանգաւոր է լինելու։ Յունիսի 10-ի գիշերը
մենք տեսանք երկնքի հիւսիսային կողմում որպէս թէ
հրեղէն սիւներ։ Այդ ջրաշոգիների սիւներ էին լուսաւոր-
ուել, և նրանց լուսաւորող հրաշէկ լաւան էր։ Մեր զիւ-
ղի միջով հոսում էր Սկապտան, որ մի արագընթաց, ջր-
բառատ և խոր գետ էր։ Նրա լայնքը 75 սաժէն էր, և նա
բղխում էր ձիւնապատ լեռներից։ Նրա ակունքի մօտ գրտ-
նում է Սկապտար—Եօկուլ անունով մեծ սառցարանը։
Այդ սառցարանի հալուելուց էր մնունդ առնում Սակապ-
տա գետը։ Յանկարծ նա ցամաքեց, նրա տեղը մի փոք-
րիկ առուակ էլ չմնաց։ Մենք, բոլոր գիւղացիներս, շատ
վախեցանք, որովհետև անջուր մնացինք։ Մենք հասկա-
ցանք, որ լաւայի հեղեղը կանգնեցրեց գետնի հոսանքը և
ինքը հոսեց նրա հունով։

«Իրօք այնպէս էլ պատահեց։ Լաւայի հեղեղը միան-
գամայն ցամաքեցրեց Սկապտա գետը։ Այդ գետը հոսում
է վաթսուն սաժէն լայնութեամբ խոր կիրճի միջով։ Նրա-
նից աջ ու ձախ կանգնած են բարձր ժայռեր, որոնց բարձ-
րութիւնը տեղ-տեղ համնում է հարիւր սաժէնի։ Ահա այդ
կիրճով հոսեց լաւան, զրաւելով և գետի հունը, և կիրճը,
և ամբողջովին լցնելով նրան մինչև եղերքը։ Նա մինչև
իսկ այդ եղերքներից էլ միւս կողմն անցաւ և ժայռերից
վայր հոսեց ուղղակի մեր հացաղաշերի վրայ։ Մենք
տեսանք այստեղ մի այնպիսի հրեղէն ջրվէժ կամ լաւա-
զէժ, որպիսին ոչ ոք այլևս չի տեսնիլ։ Լաւան մեծ տա-
րածութեամբ հեղեղեց և մեր դաշտերը։ Կիրճից լաւան
անցնելով հովիտը, թափուեց մի մեծ ու խոր լճի մէջ, որ
հեռու չէր կիրճից։ Սարսափելի է պատմել, թէ ինչ եղաւ
այդտեղ։ Լաւան սկսեց թշալ, գոռգոռալ, նրանից իսկա-
կան թխպի նման գոլորշի բարձրացաւ։ Նա շուտով կեղե-
ւով ծածկուեց, բայց կանգ չառաւ և շուտով ամբողջ լի-




Գեղեց լուսական թուրմի պատճենը հատակարանը պատճեն ու ձիւնով

էր կեղեով, բայց ներսից դեռ բոլորովին տաք էր: Նոր լաւան տաք հունի միջով խիստ արագ վազեց, որովհետև վազելիս չէր պաղում, նա դէսուդէն հոսելով՝ մեր Սկապտա գետի մի քանի ճիւղերի առաջը կտրեց: Մի նոր վըտանգ առաջացաւ, մի տեղ նրան պատահեց ջրով լիքը մի փոս, լաւան միանգամից ծածկեց այդ փոսը, որից ջուրը շոգիացաւ. այդ շոգուց լաւան ուռչելով մի ահագին փամփուշտ դարձաւ, որը շուտով տրաքեց սոսկալի ճայթիւնով: Լաւայի ցայտումները երեսուն սաժէն վեր ցայտեցին:

«Այդ ժամանակ մենք իմացանք, որ արտավիժումը սկսուել է Սկապտար-Եօկուլից ոչ հեռու, ըստորում հէնց այնտեղ երեաց ճեղքուածքը, որից թափուեց այդքան լաւա: Պատահեց այդ յունիսի 11-ին, իսկ մի շաբաթ անցած, յունիսի 18-ին, միենոյն ճեղքուածքից դարձեալ դուրս թափուեց առատ լաւա: Այդ նոր լաւան հոսեց առաջնի վրայով, որ թէպէտ մի շաբաթուայ մէջ ծածկուել



Լաւավէժ, արտավիժումն միջոցին: Լաւան վերելից ցած է թափում:



Լաւայի ահագին պաղած հսկեղ Խոլանդիա կղզում:
«Հասաւ օգոստոս ամիսը, իսկ գետնի ճեղքուածքից անդադար հրեղէն լաւա էր դուրս թափում: Նա թափ-

ըում էր զանաղան կողմեր և հետզհետէ նոր տեղեր գրաւում, նոր ճանապարհներ որոնում, բատորում հներն ինքն էր գոցում։ Հոսելով Գվերֆիսֆլիօտ գետի հունով, նրան էլ ցամաքեցրեց և փակեց ընթացքը։ Այս կերպով լաւայի գետնի տակից արտավիժումը մի քանի գետ ցամաքեցրեց և երկիրը հարիւրաւոր վերստաչափ տարածութեամբ առ միշտ ամայի դարձրեց։ Հարթավայրում տեղ-տեղ լաւան լայնատարած ջերմ լճեր կազմեց՝ քսան և աւելի վերստ լայնութեամբ և աւանհինդ սաժէն խորութեամբ։ Մի այդպիսի հրեղէն լիճ դոյացաւ, օրինակ, Սկապտա գետի հովտում, որի մէջ, իրըն վտակներ, հոսեցին նորանոր հրեղէն գետեր։

«Ահա որպիսի սոսկալի արտավիժման ականապես լինելու արժանացնք մենք շարունակ երկու տարի։ Դաշտերն ամայացան։ Արդաւանդ վայրերն անսլտուղ դարձան։ Ուր որ ջուր կար, ուր գետեր ու առուներ էին հոսում, այնտեղից նրանք անհետացան։ Մեր իսլանդիա կղզում ընդամենը 47 հազար բնակիչ կայ, որոնցից, արտավիժման միջնորդին, թէ այդ արտավիժումից և թէ սովից ու հիւանդութիւններից իննը հազար մարդ մեռաւ։

Ճեղքուածքներ գետնի մէջ։

Արտավիժման ժամին գետնից քսան մի քանի կարճահասակ վուլկաններ ճեղքուածքի երկայնքով, որոնց մինչեւ այսօր էլ կարելի է տեսնել։ Պատմում են ճանապարհորդները, թէ նրանք ինչանդիայում զարմանալի ճեղքուածքներ են տեսել գետնի մէջ։ Կղզու ամբողջ լայնքով մի ահազին ճեղքուածք է անցնում 150 վերստ երկայնութեամբ։ Կղզու մի այլ տեղում կայ ճեղքուածք 28 վերստ երկայնութեամբ։ Նա կատարելապէս ուղիղ դժով

է գնում՝ լեռներ ու ձորեր անցնելով։ Մի քանի լեռներ, որոնք հարիւր յիսուն սաժէն բարձրութիւն ունեն, խաղալիքի նման կոտրատուել են։ Այդ ճեղքուածքը իջնում է նրանց մէջ իննասուն սաժէն խորութեամբ, իսկ գետնի խորքում նա շատ հեռու է անցնում։ Այդ ճեղքուածքից շատ լաւ է թափուել առանց որևէ վուլկանի։ Նրանից հեռու ձգւում են լաւայի հեղեղներ յիսուն վերստ երկարութեամբ և հասնելով ծովին՝ անյայտանում են նրա յատակում։

Իսլանդիայում կան ամայի հարթավայրեր, որոնց միջով միանգամից տասնեակ վերստ երկայնութիւն ունեցող մի քանի ճեղքուածքներ են անցնում։ Յայտնի չէ թէ երբեն նրանք երևացել։ Նրանք գտնուում են կողք կողքի և ամենքը մի ուղղութեամբ են գնում, այնպէս որ, կարծես, հարթավայրն այդ ճեղքերով շերտերի է բաժանուած։ Մի քանի ճեղքուածքների վրայ կարգով նստուած են ցածր վուլկաններ, իսկ միւսների վրայ վուլկաններ չկան։ Մի ճեղքուածքի վրայ կամ 34 մեծ և մօտ 60 փոքր վուլկաններ, որոնք ամենքն էլ իրարից հեռու չեն։ Տեղ-տեղ ճեղքուածքների միջի շերտերը ցած են նստել, և նրանցից գոյացել են խորափիտներ կամ ձորեր։ Մի ճանապարհորդ պատմում է, թէ եղել է այդպիսի խորափիտում, նրա երկայնքը տասնհինդ վերստ է, իսկ լայնքը մէկ վերստ։ Այդտեղ գետինը ցած է ընկել 15 կամ 25 սաժէն։ Պատմում են իսլանդիայի բնակիչները, որ նրանք տեսել են, թէ ինչպէս են յայտնուում ճեղքուածքներ գետնի մէջ և ինչպէս է գետինը նրանց ուղղութեամբ ցած ընկնում։ Նրանք առաջանում են գետնի տակից դէպի վեր մղող ճնշումից։ Երկիրը ցնցւում, դողում է, նրա տակից որոտմունք է լուսում, յետոյ յանկարծ ճեղքուածք է յայտնուում։ Նա սկզբի նման գալարուելով վազում է լեռների, ժայռերի և

դաշտերի վրայով։ Նա շատ խոր է անցնում երկրի մէջ, իսկ թէ որքան խոր—յայտնի չէ։ Երկրի խորքում ճեղքուածքից լոյս է երևում տեղ-տեղ։ Դրանից յետոյ արտավիժումն է սկսւում։ Մի արտավիժման ժամանակ իսլանդիայի բնակիչները տեսել եին, թէ ինչպէս երկրը ճեղքուածքի երկայնութեամբ սկսել էր ցածրանալ։ Նա միանգամից չէր ցածրացել, այլ դանդաղ, կարծես, սողալով ներքև էր իջել։ 12 ժամուայ մէջ ընդամենը նա ցած էր նստել 24 մատնաշափ։

Ի՞նչ է սովորեցնում իսլանդիան։

Ահա ինչ արտավիժումներ են լինում իսլանդիա կը զում։ Այդ կղզում, կարծես, բնութիւնն ինքը ջանք է անում բանալ մարդուս առջև իր նուիրական գաղտնիքները։ Նա, կարծես, ասում է նրան, «տես, ինչը ինչպէս է լինում այստեղ։ Այն ժամանակ դու կը հասկանաս և այն, ինչ որ կատարւում է միւս տեղերում»։

Այստեղ ահա ինչ է կատարւում։ բացւում է երկրի խորքը, որովհետև նրանում յայտնւում է ճեղքուածք, որ շատ խոր է գնացած։ Ճեղքուածքի վրայ վուլկանների ամբողջ շարքեր են բանում։ Կան վուլկաններ, որոնք իրար շատ մօտ են, կան և հեռուները։ Ճեղքուածքը մշտապէս բաց չի մնում, լցւում ու գոցւում է լաւայով ու մոխրով։ Երբ նա բոլորովին լցւում է, դրաից աննշմարելի է դառնում։ Այն ժամանակ թւում է թէ ամեն մի վուլկան նստած ինքնիրան է գործում։

Այսպէս է լինում իսլանդիայում։ բայց արդեօք այդպէս չի լինում մշտապէս և ամեն տեղ։

Դիտնականները հետազոտեցին այդ բանը երկրի զանազան վայրերում և գտան, որ նոյնն է կատարւում և

միւս տեղերում։ Վուլկանի յայտնուելու համար նախ և առաջ հարկաւոր է, որ երկրի թանձրութեան մէջ ճեղքուածք առաջանայի։ Երկար ճեղքուածքի վրայ երկար շարքով վուլկաններ են երևան գալիս, իսկ այնտեղ, ուր ճեղքուածքները շատ են և միմեանց միջով են անցնում, — վուլկանները խմբով են երևան գալիս։

Արտավիժումների ժամանակ շատ վուլկանների մօտերքը ճեղքուածքներ են յայտնւում, և պատահում է որ նրանք տարածւում են լեռան բոլոր գառիվայրերով, այդպիսի ճեղքուածքների վրայ բանում են փոքրիկ վուլկանների երկար շարքեր։

Այն, ինչ որ փոքր չափով կատարւում է վուլկանների գառիվայրերում, նոյնը մեծ չափով կատարւում է երկրի վրայ։

Գ Լ Ո Ւ Խ Ե.

ՎՈՒԼԿԱՆՆԵՐ ՄԵԾ ՌՎԿԻԱՆՈՍԻ ՇՈՒՐՋԸ.

Ամբողջ երկրի մեծ նեղեուածքներ։

Իսլանդիայում կան մի քանի տասնեակ վերստ երկարութիւն ունեցող ճեղքուածքներ։ Արդեօք չկան երկրի մի որևէ վայրում մի քանի հազար վերստ երկարութեամբ ճեղքուածքներ։

Կան երկրի ներան էլ այնպիսի ահագին ճեղքուածքներ, որոնք տասնեակ հազար վերստեր են ձգուած։ Թէ որքան նրանք խոր են մտնում երկրի մէջ—յայտնի չէ։

Նրանց մասին միայն այն կարելի է ճիշտ և հաւաստի իմանալ, որ նրանք շատ վազուց, հարիւր հազարաւոր

և մինչև անգամ միլիոնաւոր տարիներ առաջ են գոյացել և շատ խոր են մտնում երկրի մէջ և հասնում նոյն իսկ ստորերկեայ կրակին։ Դրսից քնաւ չեն երկում այդ ճեղքերը։ Նրանց գոյութեան մասին կարելի է գուշակել միայն հրաբուղիներին նայելով։ Ուր այսպիսի ճեղքուածք կայ, այստեղ հրաբուղիները նստած են մի գծի վրայ երկար շարքով։ Մի քանի վուլկաններ այս ճեղքուածքի երկայնութեամբ միմեաց շատ մօտ են նստած, իսկ միւսները հարիւրաւոր վերստերով հեռու են իրարից։ Երբ մի այսպիսի վուլկանի նայում ես, առանց իմանալու թէ ուր են դժուում միւսները, այն ժամանակ նա քո աչքին առանձին լեռ է երեսում։ Իսկ երբ տեսնում ես, թէ ինչպէս են նստուած բոլոր վուլկանները երկրի վրայ, այն ժամանակ հասկանում ես, որ նրանք նստուած են հետեւելով առանձին կամ սովորութեան, իսկ նրանց այդ կանոնը կամ սովորոյթն ամեն տեղ էլ նոյն է, ինչ որ իսլանդիայում վուլկանները նստուած են երկրի անտեսանելի ճեղքուածքների երկարութեամբ։


Ահա թէ այժմ ճիշտ և հաւաստի կերպով ինչ է իմացուած երկրի մեծ ճեղքուածքների մասին. այդ ճեղքուածքներն ամբողջ Մեծ ովկիանոսի շուրջն են պտտում, իսկ մի տեղում անցնում են նաեւ նրա լայնութեամբ։ Մի ճեղքուածքը զնում է այդ ովկիանոսի արեմտեան ափով, միւսը—արեւելեան։ Արևմտեան ափին ընկած են աշխարհի երկու մասերը—Ասիան և Աւստրալիան Արևելեան ափին տարածուած է Ամերիկան։ Մեծ ովկիանոսն Ասիայի, Աւստրալիայի և Ամերիկայի ուղիղ մէջտեղն է ընկած, և երկրագնդի ամենամեծ ծովն է, նա համարեա 170 միլիոն քառակուսի վերստ տեղ է գրաւում. մի ափից մինչև միւսը ամենալայն տեղում մօտ 18 հազար վերստ են հաշում, իսկ հիւսիսային ծայրից մինչև հարաւայինը—16—

17 հազար վերստ։ Մեծ ովկիանոսը 85 անգամ մեծ է ամբողջ Ռուսաստանից։ Այդ ովկիանոսը պտտելու և նրա ափերը հետազօտելու համար մարդկային շատ ճիգ ու աշխատանք են հարկաւորուել և շատ հարիւր տարիներ։ Այժմ, որքան էլ դժուարութիւն եղած լինի, գործն արդէն կատարուած է։ Մեծ ովկիանոսի բոլոր ափերը հետազօտւած են և նրա վրայի բոլոր կղզիները յայտնի դարձած։ Հետազօտուած են նմանապէս բոլոր երկիրները, որոնք գտնուում են նրա ափերում։ Այդ երկիրներում և կղզիներում գտնուած բոլոր վուլկանները հաշուած են և ցուցակագրուած։ Այս կերպով էլ իմացուած է, որ ամբողջ ովկիանոսի շուրջը և նրա լայնութեամբ՝ երկար շարքով վուլկաններ են նստուած։ Նրանցից շատ կան թէ Ասիայի, թէ Ամերիկայի ափերում և թէ կղզիներում։ Մի խօսքով, ամբողջ Մեծ ովկիանոսը շրջապատել է մի հրեղէն օղակ կամ վուլկաններից կազմուած մի գօտի, որի երկարութիւնն է երեսուն հազար վերստ։

Մեծ ովկիանոսի շուրջը հաշուած է 215 վուլկան, իսկ ամբողջ երկրագնդի վրայ մօտ երեքհարիւր։ Ուրեմն երկրի վրայ համարեա՛ բոլոր վուլկանները Մեծ ովկիանոսի շուրջն են նստուած։

Հեղէն օղակը կամ գօտին ովկիանոսի շուրջը։

Այդ հրեղէն կամ վուլկանական օղակը սկսում է Սիբիրում։ Այստեղ շատ հրաբուղիներ կան կամչատկայում, ուր 40 վուլկան է հաշուած, որոնցից տասներկուսը մինչև այսօր էլ գործում են. իսկ միւսները, կարծես, քնած են։ Կամչատկայից սկսած Ասիայի ափերի երկարութեամբ ձգւում են մի շարք կղզիներ։ Նախ գալիս են կուրիլեան կղզիները, նրանց հետեւում են Ճապոնականնե-



ըլ, ապա Լիու-Կիու, նրանցից յետոյ Ֆիլիպպինեանները, ուր մի քանի տարի առաջ տեղի ունեցաւ Ամերիկացոց պատերազմը: Ֆիլիպպինեան կղզիներից յետոյ սկսում են Զօնդեան կղզիները, ուր գործում են, կրակատառ և Թէմբօրօ վուլկանները: Բոլոր յիշեալ կղզիների վրայ բաւականթուով վուլկաններ՝ կան: Կուրիկեան կղզիներում այդպիսիներից հաշւում են 16 հատ, իսկ Ճապոնականներում—35: Կայ այդտեղ մի նշանաւոր հրաբուզն, որ կոչւում է Ֆուզի-Եամա: Նա երկար ժամանակ ճապոնացոց մէջ սըրբազան լեռ էր համարւում: Նրանք կարծում էին, թէ այդ լեռան վրայ են իջնում իրանց աստուածները, ըստորում երկրի վրայի բոլոր լեռներից աւելի նրան են սիրում: Ժողովուրդը պաշտում է նրան, գալիս է այդտեղ իր ուխտը կատարելու, և հաւատում է թէ այդ լեռան վրայ բազմաթիւ պէսպէս հրաշքներ են կատարուել, որոնց մասին պատմում են ճապոնական քրմերը. վերջիններիս շատ օգտաւէտ է, որ ժողովուրդը հաւատայ իրանց ասածին: Ճապոնական հին գրքերում գրուած է, թէ Ֆուզի-Եամա լեռը մի գիշերումն է բարձրացել երկրի վրայ: Այդ անցքը պատահել է Քրիստոսից երեք հարիւր տարի յետոյ: Ֆուզի-Եաման բարձր լեռ է: Նա ծովի մակերեսոյթից չորս վերստից աւելի բարձր է կանգնած: Ճանապարհորդները վկայում են, թէ սա ամենագեղեցիկ վուլկանն է երկրիս երեսին: Նրանից ոչ հեռու կայ մի լիճ, որ 60 վերսա երկանք և 15 վերսա լայնք ունի: Այդ լիճն էլ նոյնպէս մի քանի օրուայ մէջ գոյացաւ. այդտեղ գետնի մէջ ճեղքուածքներ յայտնուեցին, և այդ ճեղքուածքների ուղղութեամբ, խոր գէպի ներս փլուեց հողի մի ամբողջ շերտ: Դա հէնց այն ժամանակ պատահեց, երբ մի այլ տեղ գետնի տակից Ֆուզի-Եամա լեռը բարձրացաւ:

Ճապոնիայում հրաբուղիների արտավիժումներ շատ

յաճախ են պատահում: Ճապոնացի գիտնականները լաւ զննելով իրանց հայրենիքի հրաբուղիները՝ գտել են, որ այդ լեռները երկրի հնադարեան ճեղքուածքների երկայնութեամբ են նստուած, այնպէս որ ուր այդ լեռներն են գտնւում, այնտեղ մի ժամանակ ճեղքուածքներ են եղել: Շատ տեղերում այդ ճեղքերը փակուելով՝ նրանց հետքերը ջնջուել են, իսկ տեղ-տեղ դեռ ևս մնացել է նրանց միջով մի անցք: Ահա հէնց այդ անցքն է հրաբուղի կոկորդը:

Ուրեմն կար մի ժամանակ, երբ մի ահազին ճեղքուածք էր անցնում ամբողջ Ասիայի երկայնութեամբ՝ կամչատկայից սկսած մինչև Չօնգեան կղզիները, այս պատճառով էլ այդտեղ վուլկանները շարքերով են նստուած: Եթէ այդ ճեղքուածքը չլինէր, այդ վուլկաններն էլ չէին լինիլ:



Ֆուղի-Եամա վուլկանը Ճապոնիայում:

Միւս ճեղքուածքը երկրի մէջ անցել է մի ժամանակ Մեծ ովկիանոսի ամբողջ լայնութեամբ, և խորապէս ծովի յատակով: Նրա անցած տեղում ծովի:

տակից հարիւր հազարաւոր, գուցէ և միլիոնաւոր տարիներ առաջ վեր են բարձրացել շատ կղզիներ, որոնց վրայ հրաբուղիներ կան: Քիչ չեն և այնպիսի կղզիներ, ուր մինչև այսօր էլ գործում են հրաբուղիներ և այս կերպով գործել են շատ հազար տարիներ: Կան ովկիանոսում և այնպիսի տեղեր, ուր արտավիժումները ջրի տակն են կատարուել:

Երրորդ ճեղքուածքը երկրի մէջ անցել է Ամերիկայի երկայնութեամբ մի ծայրից միւսը, որի վրայ բաւական թուով նշանաւոր վուլկաններ կան, սկսած նոյն խակ Սառուցեալ ծովից: Մի ժամանակ Ամերիկայի Հիւսիսային ծայրին ուռւաներն էին տիրում, իսկ այժմ իշխում են ամերիկացիները, որոնք ամեն տարի այդտեղից տասնեակ միլիոն բուրլիներ գուտ եկամուտ են ստանում: Նրանք այնտեղ գետնից հանում են ոսկի, նաւթ, մուշտակաբեր գազաններ որսում, առևտուր անում բնիկ վայրենի ազգերի հետ, իսկ միուսաց գանձարանն այդտեղ միայն վսա էր կլում, այս պատճառով էլ այդ երկիրը ծախեց ամերիկացիներին 8 միլիոն բուրլի ամնշան գնով: Այդ տեղերում կան հինգ մեծ վուլկաններ. Ալէուտեան կղզիներումն էլ կան մի քանիսը: Ալէուտեան կղզիները գտնւում են Խաղաղ ովկիանոսում, ճիշտ նախկին սուսալատկան երկրի մօտ: Այդ կղզիների մօտ շատ անգամ է արտավիժում պատահել ջրի տակ, իսկ ջրի տակից նոր կղզիներ են բարձրացել: 16 տարի առաջ մեծ արտավիժում տեղի ունեցաւ այստեղ, Ա. Օքսոտինոսի կղզում: Այդ կղզում մի վուլկան կայ, որը մինչև այժմ մարած էին համարում, որովհետեւ հազար տարուց աւելի էր, որ չէր գործում: Յանկարծ 1883 թուի հոկտեմբերի 6-ին պայթիւն եղաւ, վուլկանի կոկորդը բացուեց: Երկիրը ցնցուեց, ամբողջ կղզով վրայ ճեղքուածքներ երկացին, գետնից վեր բարձրա-

ցան շոգի, մոխիր և լաւա, իսկ ծովի վրայ ահազին ալիքներ էին պլորւում։ Այդ արտավիժումից յետոյ վուլկանը սկսեց գործել և գործում է մինչև այսօր։

Աւելի ևս նշանաւոր է Կօղէգվինօ վուլկանը, որ երկրի նոյն ճեղքուածքի վրան է նստած և տասնութ սաժէն բարձրութիւն ունի։ Նայելով նրան չես կարծիլ, որ դա ամբողջ Ամերիկայում ամենասուկալի վուլկանն է, այն ինչ իրօք այդպէս է։ 1835 թուին մի սարսափելի արտավիժում առաջացաւ այդ վուլկանից։ Այդպիսի արտավիժում կարող էին միայն յիշել կրակատառ կղզու բնակիչները և թէմբօրօ վուլկանի ականատեսները։

Ահա ինչ են պատմում ականատեսներն այս արտավիժման մասին։

Նրա սկիզբը եղաւ 1835 թուի յունուարին։ Մինչև այդ ժամանակ վուլկանն ամբողջ քանակեց տարի հանգստանում էր։ Արտավիժումը, կասես, յանկարծ սկսւեց։ Լըսուեցին գետնի տակից թեթև աղմուկ և գոռոց, պատուեց կոկորդը և նրա միջից խիստ արագ դուրս թռաւ տաք գոլորշու մի ահազին ամպ, որ մի քանի րոպէի մէջ բարձրում փուռեց և ծածկեց արել։ Մի ժամ անցած—չանցած՝ խոր խաւար պատեց երկինքն ու գետինը, միայն փայլակի շողիւնն էր խանգարում նրան։ Կէսօրուայ մօտ սկսւեց երկրաշարժ և գնալով աւելի սաստկացաւ։ Գետինըն այնպէս էր ցնցւում, որ մարդիկ անկարող էին ոտքի վրայ կանգնել։ Յունուարի 23-ին տեղի ունեցաւ ստորերկրեայ սոսկալի դղրդոց։ կարծես, գետնի տակ ահազին թնդանօթներ էին արձակում։ Երկիրն ամբողջ չորս օր թնդում էր. այդ միջոցին վուլկանից շոգի էր արձակուում և վերևոց թափուում խիստ առատ մոխիր։ Երեք օր շարունակ արել չէր երեսում, իսկ մոխիրը քամու ուժով եօթը հարիւր վերստ վուլկանից հեռու տարածուեց, օրա-

կան երկու հարիւր վերստ անցնելով։ Զեչաքարն էլ հեռու էր թոչում, մի նաև ընդհարուեց լողացող չեչաքարի՝ կօգէգվինօից հազար չորս հարիւր վերստ հեռու։ Այդ վուլկանը կանգնած է, ոչ թէ ծովափում, այլ նրանից մի քանի տասնեակ վերստ հեռու, բայց ծովի վրայ էլ այնքան շատ էր թափուել մոխիր, որ նրանից կազմուել էին երկու կղզիներ՝ իւրաքանչիւրը քառասուն սաժէն մեծութեամբ։ Ոչ մի տեղ երբէք այդքան մոխիր չի դուրս ելել հրաբուղիսից։

Կան այլևս նշանաւոր վուլկաններ Ամերիկայում, ոչ հեռու Խաղաղ ովկիանոսի ափերից։ սրանց երկայնութեամբ եօթը հազար վերստ տարածում են խիստ բարձր լեռներ, որպիսիներ քիչ կան երկրի վրայ։ Նրանք մշտապէս ձիւնապատ են, թէպէտ տաք երկրներով էլ անցնում են։ Ահա հէնց այդ վիթխարի լեռների միջովն է անցնում գետնի տակից ճեղքուածքը, իսկ նրա վրայ բարձրանում են Ամերիկայի մեծամեծ վուլկանները՝ Կոտոպախի, Պիչինչա, Սանգայ։ Վերջինս արդէն հարիւր լիսուն տարի է, որ շարունակ գործում է առանց մի րոպէ դադարելու։ Ահա ինչ է պատմում նրա մասին մի ճանապարհորդ։

«Սանգայը երկրիս վրայի ամենագործունեայ վուլկանն է, որ երբէք չի հանգստանում։ Հարիւր եօթանասուն տարի առաջ պատահեց Սանգայի մեծ արտավիժումը, որ օրուանից էլ նա սկսեց գործել։ Նա խիստ ուժգին է գործում, օրինակ, ես մի ամբողջ ամիս լսում էի նրա դղըդոցը, թէկ նրանից հեռու էի բնակւում։ Սանգայի բարձրութիւնը հինգ վերստից աւելի է, նրա գագաթում ձիւն է, իսկ կոկորդում հրաշիկացած լաւա, ուր և յաճախ պայթիւններ են լինում։ Ես մի ժամուայ մէջ հաշուեցի վաթսուն վեց հարուած։ ամեն մէկի հետ վուլկանը վեր էր արձակում քարեր, մոխիր և լաւայի ցայտումներ։ Երբեմն

ցայտումները, ռոռոմբերը», շատ մեծերից էին լինում—մի քանի արշին տրամագծով, լինում էին և փոքրերը—օրինակ մարդու գլխի մեծութեամբ, իսկ մի ցայտում վագոնի մեծութիւն ունէր։ Այդ ցայտումները խիստ բարձր էին վեր թռչում։ Շոգին նրանց շպրտում էր մի քանի հարիւր սաժէն վեր։ Ցայտումները վեր թռչելիս պտոյտներ են անում պտուտակի նման և սառչում, իսկ սառչելով կարծրանում։ Գիշերը նրանք հրային կարմրագոյն են երեսում, իսկ ցերեկը—սև։ Վուլկանական ռումբերը խրճած են վեր թռչում կոկորդից, մանաւանդ գեղեցիկ են երեւում նրանք գիշերը, երբ մութ է։ Կան ռումբեր միանգամայն կլոր, կան և երկարաւուն, կարծես, ոլորուած։ Լինում են ռումբեր և վեզուվի, և կանայի, և միւս բոլոր վուլկանների արտավիժումների ժամանակ։ Բայց ոչ մի հրաբուղիսի կոկորդից այնպիսի մեծ ռումբեր չեն դուրս թռչում, ինչպէս Սանգայի կոկորդից։ Նրա կոկորդից ահագին մեծութեան ռումբեր են դուրս թռել՝ հազար երկու հարիւր փթից աւելի ծանրութեամբ, բարձրացել են մի քանի վերստ և վայր ընկել վուլկանից տասներկու վերստ հեռու։

Ահա ինչպէս է գործում Սանգայ վուլկանը։

ԳԼՈՒԽ Զ.

Ե՞Զ ԵՆ ԱՍՈՒՄ ՎՈՒԼԿԱՆԵՐԸ ԵՒ ԻՆՉՈՒ ԵՆ ԳՈՐ- ՄՈՒՄ ՆՐԱՆՔ

Ի՞նչ են ասում վուլկանները։

Վուլկաններն այն են ասում, թէ երկրի խորքում սարսափելի ջերմութիւն կայ։ Նրանք այդ մասին խօսում են պարզ և հասարակ կերպով։ Նրանք բաց են անում մարդկանց առջև բնութեան գաղտիքն, ըստորում առանց վուլկանների դժուար կը լինէր իմանալ, թէ ինչ կայ ծածկուած երկրի խորքում, մեր ոտքերի տակ։

Գետնի տակից լաւա է վեր հոսում. բարձրանում է նոյնպէս կէծացած ջրաշողի, ուրեմն երկրի խորքում մի այնպիսի տաքութիւն կայ, որ քարերը հալւում են։

Մեծ տաքութիւն է պէտք արդեօք քարը հալելու համար։ Շատ մեծ։ Գիտնականները փորձ արին, որ տեսնեն թէ հեշտ է քարը հալւում, թէ ոչ։ Այդ փորձն արին գիտնականներն առանձին տեսակի հնոցներում, որոնք հնարուած են յատկապէս զանազան հանքեր հալելու համար և կոչւում են հալոցային հնոցներ։ Այդպիսի հնոցներում շատ մեծ տաքութիւն է ստացում։ Մօտ ժամանակներում ուրիշ, էլէքտրական հնոցներ էլ են հնարուած, որոնց մէջ աւելի ևս սաստիկ տաքութիւն կարելի է ստանալ։ Հնարուած են և առանձին գործիքներ՝ չափելու համար, թէ որ հնոցում աւելի է տաքութիւնը, որ հնոցում՝ պակաս, այլև երբ է նա սաստկանում և երբ նուազում (*):

(*.) Այն ամենահսարապ գործիքը, որ ծառայում է տաքութիւն և ցրտութիւն չափելու համար, կոչւում է ջերմաչափ։ Ջեր-

Եւ ահա գիտնականները սկսեցին փորձեր անել, թէ ո՞ր մետաղն է ամենից աւելի հեշտ հալում: Նրանք փորձեցին ոսկին, արծաթը, պղինձը, արծիճը, թուջը, անազը, ցինկը և շատ ուրիշ մետաղներ: Փորձեցին հալել և աւազը, և գրանիտը, և լաւան: Շատ փորձեր անելուց յետոյ ահա թէ ինչ իմացան նրանք:

մաշափը կազմուած է այսպէս: Նրանում կայ ապակէ նեղ խողովակիկ՝ մի ծայրը ապակէ գնդակիկով: Խողովակիկի և գնդակիկի մէջ սնդիկ է ածած, բայց ոդ չկայ: Խողովակիկի վերին ծայրը փակ է: Երբ սնդիկը տաքանում է, աւելի մեծ տեղ է բռնում և գնդակիկից սողալով դէպի խողովակն է բարձրանում: իսկ սառչելով քիչ տեղ է բռնում, որպէս թէ կուչ է գալիս, ուստի սողալով վայր է իջնում խողովակիկի միջով: Մի խօսքով՝ սնդիկը, կարծես, զգում է տաքութեան և ցրտութեան ամեն մի փոփոխութիւնը: որքան աւելի տաք է, այնքան աւելի բարձր է կանգնում, որքան ցուրտ—այնքան ցածր է լինում կանգնած: Այսպիսի խողովակիկի երկայնութեամբ նշաններ են անում, որոնք կոչւում են աստիճաններ: Այդ այսպէս են անում: առաջ խողովակիկին իջեցնում են այսպիսի ջրի մէջ, ուր սառուցը հալւում է: Սնդիկը ցըրտից կուչ է գալիս, և վայր իջնելով կանգ առնում: Այդտեղ նշան են դնում և նշանակում զերո (0): Ցետոյ խողովակիկը իջեցնում են եռացող ջրի մէջ, այն ժամանակ սնդիկը բարձրանում է և նոյնպէս կանգ առնում: Այդտեղ էլ նշան են դնում ու նշանակում թուանշան հարիւր (100): Այս կերպով ստորին նշանն այնտեղ է գտնուում, ուր ջուրը սառչում է, իսկ վերինն այնտեղ՝ ուր ջուրը եռ է դալիս: Երկրորդ նշանը բարձր է առաջնից: Երկու նշանների միջի տարածութիւնը հարիւր հաւասար մասերի են բաժանում, իւրաքանչիւրի վրայ նշաններ դնելով: Մասերը կոչւում են աստիճաններ: Այսպիսի աստիճաններ նշանակում են և 100 թուանշանից վեր և զերօից ցած: Այդ ջերմաշափի օգնութեամբ չափում են տաքը և ցուրտը և իմանում են, թէ որքան է տաքացել կամ ցրտացել: Շօշափումով այդ չես իմանալ, ըստորում զգացումը խարուսիկ է: Սաստիկ տաքութիւն չափելու համար՝ այլ տեսակ ջերմաչափեր են հնարուած, որոնց կազմն աւելի բարդ է:

Յայտնի է որ եռացող ջրի մէջ ձեռքով երկար չես կարող պահել, ըստորում տաքութիւնն անտանելի է, իսկ անազը հալելու համար կրկնապատիկից աւելի տաքութիւն է հարկաւոր, արծիճը հալելու համար եռապատիկից աւելի տաքութիւն, ցինկ հալելիս՝ քառապատիկից աւելի տաքութիւն, արծաթ հալելիս—տասնապատիկ տաքութիւն, իսկ թուջ, պղինձ և ոսկի հալելիս հարկաւոր է տասնմէկ, տասներկու անգամ աւելի տաքութիւն: Պողպատ հալելու համար պէտք է տասներեք, տասնչորս անգամ աւելի տաքութիւն, մաքուր երկաթ հալելիս՝ 16 և 18 անգամ աւելի տաքութիւն է պէտք, իսկ լուսնոսկի հալելու համար քսան անգամ աւելի տաքութիւն:

Կընշանակէ՝ բոլոր մետաղներից աւելի դժուարը լուսնոսկու հալելն է: Նրան հալելու համար երկու հազար աստիճան կամ քսան անգամ աւելի տաքութիւն է հարկաւոր, քան եռացող ջրի տաքութիւնը: Սա շատ մեծ տաքութիւն է: Իսկ հրահալ լաւայի տաքութիւնը զրանից էլ աւելի մեծ է: Ահա թէ ինչ միջոցով իմացաւ այդ բանը մի գիտնական: Նա վերցրեց լուսնոսկուց պատրաստած մետաղալար, հագաւ հաստ թաղիքեայ զգեստ, որը վազօրօք, հրդեհաշէջների նման, ջրով թրցել էր տուել, մօտեցաւ լաւայի հեղեղին, որ մի հրաբուղիսից հոսում էր և խցկեց մետաղալարը լաւայի մէջ: Մետաղալարն իսկոյն և եթ հալուեց, ինչպէս շաքարը ջրի մէջ: Կը նշանակէ՝ լաւայի տաքութիւնը շատ աւելի բարձր է երկու հազար աստիճանից:

Հասկանալի է, որ լաւան հոսելիս քիչ-քիչ սառչում է: Ուրեմն վուկանի-կոկորդի միջի լաւան աւելի տաք է, քան թէ կոկորդից դուրս թափուած լաւայի հեղեղը. իսկ դետնի տակի լաւան աւելի տաք է, քան թէ կոկորդինը,

հետևաբար երկրի խորքում այնպիսի տաքութիւն է, որը երեակայել անգամ դժուար է:

Փորձեցին գիտնականները հալել լաւան հալոցային հնոցում. լաւայի մի քանի տեսակները հալուեցին, իսկ միւսները, թէպէտ ամեն միջոց գործ դրին նրանց հալելու, բայց այնպէս էլ անհալ մնացին:

Ահա որպիսի սաստիկ տաքութիւն կայ գետնի տակ:

Արդեօք այնպիսի՞ տաքութիւն է ամեն տեղ գետնի տակ:


Ի՞նչպէս պատասխանել այդ հարցին: Վուլկաններն այդ հարցին էլ տալիս են պատախան: Ուր որ վուլկաններ կան, այնտեղ էլ գետնի տակ այսպիսի սոսկալի տաքութիւն է գտնւում: Լաւան հալւում է ոչ թէ հրաբրդիսային կոկորդի մէջ, այլ երկրի խորքում, և այնտեղից պատրաստ դուրս գալիս: Իսկ վուլկաններ պատահում են երկրի զանազան մասերում՝ և Եւրոպայում, և Ասիայում, և Աֆրիկայում, և Ամերիկայում, և Աւստրալիայում, և կղզիներում, և ծովի յատակում, և ցուրտ և տաք գոտիներում: Ուրեմն ստորերկրեայ մեծ տաքութիւն կայ զանազան կողմերում: Վուլկանները մեզ ասում են, թէ երկրի խորքում մի այնպիսի սոսկալի տաքութիւն կայ, որից քարերն անգամ հալւում են:

Բայց կան երկրի վրայ և այնպիսի վայրեր, ուր բնաւ վուլկաններ չկան և չեն եղել: Օրինակ, ամբողջ Եւրոպական Ռուսաստանում՝ Արխանգելսկից մինչև Օդեսա և Վարշավից ու Պետերբուրդից մինչև Կամչատկա՝ ոչ մի վուլկան չկայ: Չկան և չեն եղել վուլկաններ և երկրիս շատ ուրիշ վայրերում: Միթէ այդ տեղերում էլ մեր ոտքերի տակ սաստիկ տաքութիւն կայ: Ի՞նչպէս իմանանք այդ մասին ճիշտ և հաւաստի կերպով:

Կարելի է իմանալ այդ մասին, և իմացուել է ճիշտ: ու հաւաստի կերպով և ահա ինչպէս. մարդկանց պատմել են ստորերկրեայ ջերմութեան մասին խոր ջրհորները, հանքահորերը և փորուածքները, որտեղից մետաղներ են հանում, նաև ջերմ աղբիւրները, որոնք երկրի խոր ծոցից են բղխում:

Երկրի ծոցից հանք հանելու համար՝ երբեմն պէտք է լինում վորել գետնի մէջ շատ խոր հորեր և անցքեր: Այդ հորերից տարածւում են ամեն կողմ ստորերկրեայ անցքեր: Այդ անցքերի մէջ դանում են հանքեր, և կոտրատելով հանում այնտեղից լոյս աշխարհ: Կան շատ խոր հորեր. օրինակ, Անգլիայի Մօնս շրջանում կայ մի հանքահոր, որ Ս. Հենրիետայի անունն է կրում: Նրա խորութիւնը մի վերստ է: Այնտեղ մարդիկ իջնում են առանձին մեքենաների օգնութեամբ, որոնք էլ դուրս են հանում այնտեղից հանքը: Այսպիսի խոր հանքահորեր քիչ չեն այժմ և Անգլիայում, և Գերմանիայում, և Ֆրանսիայում, և Ռուսաստանում: Այդ հանքահորերում գիտնականները, —որպէսզի փորձով իմանան, թէ տաք է արդեօք երկիրը զանազան խորութիւններում, —ահա թէ ինչ միջոցի գիմեցին: Հորի պատերի մէջ խոր ծակեր բաց արին, այդ ծակերի մէջ լաւ ջերմաչափեր գետեղեցին և ծակերը դրսից ամրափակեցին, —այդպէս արին նրա համար, որպէսզի օգը՝ երկրից աւելի պաղ լինելով՝ արգելք չկնի ջերմութիւնը երկրից աւելի պաղ լինելով՝ արգելք չկնի ջերմաչափը երկրի մէջ մի կամ երկշտ ցոյց տալուն: Ջերմաչափը երկրի մէջ մի կամ երկու ժամ թողնելուց յետոյ, հանում նայում էին, թէ նա ինչ կու ժամ թողնելուց յետոյ, հանում նայում էին, թէ որ է ցոյց տալիս: Այս կերպով իմանում էին, թէ որ տաքութիւն կայ երկրի խորքում: Փորձեցին զանազան տաքութիւններում, զանազան խորութիւններում, զանազան հանքահորերում, զանազան երկրներում, փորձեցին և այնտեղ, ուր ոչ մի հրաշան երկրներում, փորձեցին և այնտեղ, ուր ոչ մի հրաշան երկրի չկայ և վերջապէս իմացան, որ երկրի խորքում բուղլս չկայ:

միշտ և ամեն տեղ աւելի տաք է, քան թէ երկրի երեսին, և որքան աւելի խոր երթաս, այնքան տաքութիւնն աւելանում է։ Ոչ մի տեղ այլ կերպ չի պատահում, թէկուզ ցուրտ երկրներում։ Օրինակ, Սիբիրում քիչ չեն այնպիսի տեղեր, ուր բաւական խորութեան մէջ երկիրը պաղած է։ Կան այնպիսի տեղեր անգամ, ուր հողի վերնախաւի տակ սառուց է գանւում։ Օրինակ, Չիտայից երկու հարիւր վերստ հեռու, իլյյինեան հանքում, ամբողջ տարի գետնի տակ սառուց է լինում։ Սիբիրում այնպիսի տեղեր կան, ուր երկիրը հարիւր և աւելի սաժէն



Ահագին խորութեամբ հողի շերտերի միջով անցնող հանքահոր։ Խորութեամբ պաղած է, օրինակ, Եակուսակ քաղաքում յիսուն սաժէնից աւելի խոր մի ջրհոր կայ. այլևս երկար ժամանակ փորեցին այդ ջրհորը, այնուամենայնիւ պաղած հողի վերջնական սահմանին չհասան։ Սիբիրի մի այլ տեղում, Շինովեան հանքահորում, միայն հարիւր սաժէն խորութեան մէջ հասան պաղած հողի վերջին։ Սրանից ե-

րեռում է, թէ որքան ցուրտ են այդ վայրերը. այնուամենայնիւ այդպիսի տեղերում անգամ միշտ և ամեն տեղ պաղած հողը վերջ ունի. Նրա տակը միշտ և ամեն տեղ գտնում է չպաղած հող, և աստիճանաբար, որքան խոր, այնքան տաք է լինում։ Եւ այդ լինում է, կարծես, կանոնաւոր կերպով կամ ըստ սովորութեան, երկրի ոչ մի կողմում չի պատահում, որ խորքում աւելի տաք չինի; Քան թէ վերին խաւում։ Գիտնականները սառուցն անգամ փորձել են ջերմաչափի օգնութեամբ, նա էլ նոյնպէս խորքում աւելի տաք է քան թէ վերևում։ Օրինակ, Եակուտեան ջրհորում փորձը ցոյց տուեց, որ 50 սաժէն խորութեան մէջ սառցի ցրտութիւնը հինգ անգամ պակաս է, քան թէ 10 սաժէնում։

Մի խօսքով երկրի ծոցն ամեն կողմում տաք է։

Զերմուրիւնը հանքահորերում։


Տեղ-տեղ այնպիսի հանքահորեր կան, ուր տաքութիւնից աշխատելն անգամ դժուար է։ Օրինակ, Ամերիկայում մի շատ հարուստ ոսկու հանքահոր կայ, որ կոչւում է Շեկոմատոկեան երակ։ Նրա խորութիւնը երեք հարիւր սաժէն է։ Տասնվեց տարուայ մէջ այդտեղ հինգ հարիւր միլիոն բուբլու ոսկի է գտնուած։ Թէպէտ մինչև այժմ էլ նա հարուստ է ոսկով, բայց նրանից ոսկի հանելը շատ դժուար է երկրի տաքութեան պատճառով։ Այնտեղի տաքութիւնը հաւասար է բաղանիքի տաքութեան, — ջերմաքութիւնը հաւասար է բաղանիքի տաքութեան, — ջերմաքութիւնը 46 աստիճան է ցոյց տալիս։ Այդ աստիճանի տաշափը 46 աստիճան է ցոյց տալիս։ Այդ աստիճանի տաշափը 10 բուբլից աւելի չի կարող դիմաքութեան մէջ մարդս 10 բուբլից աւելի չի կարող դիմանալ։ Բայց և այնպէս կարիքը ստիպում է այդտեղ էլ աշնալ։ Մշակներն այստեղ իրանց աշխատանքի համար խատել։ Մշակներն այստեղ իրանց առողջութիւնն լորդի փոխարէն նրանք տալիս են իրանց առողջութիւնն

ու կեանքը: Շնորհիւ այդ աշխատանքի, կեանքը շատ կարծատեսէ դառնում: Անա թէ, ինչ գնով է ձեռք բերւում ոսկին պետնի տակից:

Արթեզեան ջրհորսիր:

Ամենախոր հանքահորերը երկրի մէջ մէկ ու կէս վերստեն։ Մարդս դրանից աւելի խոր չի մտել գետնի մէջ։ Սակայն այդ հանքահորերն էլ որևէ բան են պատմում ստորերկրեայ ջերմութեան մասին, և պատմում ճիշտ և հաւաստի կերպով։ Նրանք ցոյց են տալիս, թէ երկրի խորքում ջերմութիւնն աստիճանաբար աւելանում է։ Կը նշանակէ, որ եթէ մարդս աւելի խոր մտնէր, կը տեսնէր որ այնտեղ աւելի տաք է։ Բայց մարդս արդեօք մտել է աւելի խոր։

Այսպիսի ջրհորներ կան, որոնք երկու վերստից էլ աւելի խոր են: Դրանք առանձին տեսակի ջրհորներ են,



Ճաղափներ, ջրհողներ ծակելուհամար՝ սայրապատճեռը ու կառագիրը կամ վերին ծայրին ամրացնուում է երկաթէ լուսած շաղափի համար՝ կամ ծունկեր. Այդ շաղափները պատեցնուում սուր բերաններ, կամ թիակեններքի ծայրը շաղափում է կատինը.

ներ, կան և դրգալներ։ Շաղափին առանձին յարմարացում
էլ ունի, այնպէս որ նրան կարելի է շարժել, օրինակ,
պտոյտ տալ։ Նրան մտցնում են գետնի մէջ և սկսում
պտտեցնել։ Նրան բանեցնում են կամ ձեռքով, կամ ձիով,
կամ մեքենայով։ Այնքան պտտեցնում են, մինչև որ ամ-
բողջ շաղափը մտնում է գետնի մէջ, այն ժամանակ այդ
շաղափին մի նոր ծունկ են աւելացնում՝ նոյնպէս մէկ կամ
մէկ ու կէս սաժէն երկարութեամբ, և նորից սկսում պը-
տըտեցնել, այդ էլ որ մտաւ գետնի մէջ, մի նորն են ա-
ւելացնում և այսպէս շարունակաբար մինչև վերջը։ Այս-
պիսով շաղափին անց են կայնում գետնի մէջ հարիւրա-
ւոր սաժէններ խոր։ Որպէսզի հողը պատերից չփլչի; ծա-
կած ջընորի մէջ խողովակ են անցնում և շաղափը դուրս
հանում գետնից։ Հէնց այդ խողովակից էլ ջուրը դուրս
հոսում։ Այդ խողովակը, որ լայն չէ՝ ընդամենը մի քանի
մատնաշափ կամ վերջոկ արամագիծ ունի; և խոր հագց-
րած է գետնի մէջ, — կոչւում է ջընոր, թէպէտ ջընորի
նման չէ։

Այսպիսի շաղափային ջրհորներ այժմ շատ կան ծակուած զանազան տեղեր: Օրինակ, Պետերբուրգում տասնից աւելի են այսպիսի ջրհորներ, որոնցից մի քանիսը կէս վերստից աւելի խորութիւն ունեն: Պարիզումն էլնոյնպէս կէս վերստից աւելի խորութեամբ շաղափային ջրհոր կայ: Իսկ գերմանական շաղափային ջրհորները խորութեամբ մի վերստից էլ աւելի են. Պրուսիայում մօտերքս մի ջրհոր ծակեցին երկու վերստից աւելի խորութեամբ: Մի քանի տեղերում այդպիսի ջրհորներ ծակելը շատ երկար է տևում, ըստորում հարկաւորւում է քարը ծակել, իսկ այդ աշխատանքը ծանր է և յամբընթաց: Բայց և այնպէս այդ աշխատանքը ծանր է: Օրինակ, Պետերբուրգում մեծամեծ առևտրական բաղանիքներ կան, որոնց

համար ջուրն ամբողջութին գետի տակիցն է գալիս—շաղափային ջրհորից, բաղանիքների տէրը ջրհոր է փորում իր համար, որ ջրանցքի փող չվճարի։ Շատ Գործարանատէրեր էլ ջրհոր են փորում իրանց մեծ ու փոքր գործարաններում, ուր շատ ջրի պէտք կայ։ Այսպիսի ջրհորներ փորում են նոյնպէս իրանց համար հարուստ կալուածատէրերն այն տեղերում, ուր ջրի պակասութիւն է։ Մի խօսքով, շաղափային ջրհորները մեծ օգուտ են տալիս մարդկանց։

Բայց զարմանալին այն է, որ այդ ջրհորների ջուրը յաճախ տաք է լինում, իսկ երբեմն կէծացած։ Օրինակ, Պարիզում մի ջրհոր կայ, որ օրական համարեա մի միլիոն վեդրո տաք ջուր է տալիս, մինչդեռ խորութիւնը երեք հարիւր սաժէնից աւելի չէ։ Իսկ Ունգարիայում կայ մի ջրհոր, որից հոսում է այնպիսի կէծացած ջուր, որ մարդու ձեռք չի դիմանում։ Նա հոսում է համարեա մի վերստաչափ խորութիւնից։

Արտեղ է տաքանում այդ ջուրը։—Երկրի խորքում, կը նշանակէ՝ այդ խորքը տաք է։

Շաղափային ջրհորներ փորուած կան երկրի այլևայլ վայրերում։ Կան և այն տեղերում, ուր վուլկան բնաւ չը կայ։ Եւ այդ բոլոր ջրհորները ցոյց են տալիս, որ երկրի խորքը տաք է, իսկ երկրի տաքութիւնից տաքանում է և ջուրը։

Գիտնականները մի այսպիսի փորձ արին։ Նրանք ի-ջեցրին ջերմաչափն ամենախոր շաղափային ջրհորների մէջ, և այսպիսով իմացան, թէ որքան է տաք ջուրը զանազան խորութիւններում։ Նրանք իմացան, որ ջուրը շաղափային ջրհորի յատակում միշտ աւելի տաք է, քան թէ վերեւում, որովհետեւ նա մինչև վերև բարձրանալը սառչում է։ Դարձեալ իմացան գիտնականները, թէ ջուրը,

կարծես, կանոնով է սառչում՝ իւրաքանչիւր 13—17 սաժէն բարձրանալիս մի սատիճան, սառչում է։ Օրինակ, 20 սաժէն խորութեան մէջ ջերմաչափը 18 սատիճան է ցոյց տալիս, իսկ 15 սաժէն նրանից ցած—արդէն 19 սատիճան է ցոյց տալիս, իսկ էլի 15 սաժէն ցած, ցոյց է է տալիս 20 սատիճան։ Ուրեմն այսպիսով ջրի տաքութիւնից կարելի է իմանալ, թէ որքան է ջրհորի խորութիւնը, որից ջուրը բղխում է։ Այդ խորութիւնն իմանալու համար կարելի է խորամուխ էլ վինել մինչև յատակը, այլ հաշուով իմանալ, այսինքն՝ հաշուել թէ որքան խորութեան մէջ որքան է ջուրը տաքանում։

Գետնի տակից բղխող կէծացած ջուրը։

Երկրի վրայ կան այնպիսի աղբիւրներ, որոնց ջուրը նոյնպէս կէծացած է։ Վերը յիշուած միջոցով կարելի է իմանալ և այդ աղբիւրների մասին, թէ որքան խորութիւնից են նրանք բղխում։

Ջերմ աղբիւրներ քիչ չեն զանազան երկրներում։ օրինակ, նրանցից շատ կան կովկասում, կան և լեհաստանում և Խարկովի նահանգում։ Այդ աղբիւրներից գըտընւում են և այն տեղերում, ուր ոչ մի վուլկան չկայ։ Օրինակ, կայ ջերմաղբիւր Վելոստոնում (Հիւս. Ամերիկայում)։ Կայ նշանաւոր ջերմ հանքաղբիւր Ալֆիրում, Ափրիկայի հիւսիսային ափերում։ Այնտեղ ուղղակի գետնից է բղխում կէծացած, եռացող ջուրը և շատրուանի պէս դուրս ցայտում, նրանից սպիտակ, թանձր գոլորշի է բարձրանում։ Այժմ հարիւրաւոր, գուցէ և հազարաւոր տարիներ են անցել, ինչ կէծացած ջուրը գետնի տակից վեր է զարկում անդադար գիշեր-ցերեկ։ Ջերմաչափն այդ ջրի սատիճանը հարիւր է ցոյց տալիս։ Իսկ գետինը, որի



Գետնի տակից շատրուանի պէս խփող ջերմադըլւը:
(Վելոսոն, Հիւս. Ամերիկայում):

միջով գուրս է բղխում այդ ջուրը, շատ աւելի սառն է:
Կը նշանակէ՝ այդ ջուրը գետնի տակ աւելի ևս տաք է,
ըստորում հոսելու միջոցին շատ թէ քիչ պաղել է:

Ի՞նչ խորութիւնից է բղխում այդ ջուրը: Անշուշտ
երեք կամ չորս վերսալից ոչ պակաս, գուցէ և աւելի,
խորութիւնից: Այդ կարելի է իմանալ հաշուելով:

Կայ նոյնպէս մի զարմանալի հանքաղբիւր Հարաւային
Ամերիկայում: Նա բղխում է գետնի տակից լեռների մէջ,
մէկ ու կէս վերստ բարձրութեան վրայ ծովի մակերեսյ-
թից: Մօտակայքում ոչ մի վուլկան չկայ, իսկ այդ աղ-
բիւրի ջուրը եռուն է, — հոսելիս եռ է զալիս: Գետնի տա-
կից նա երկու ու կէս և աւելի վերստ լայնութեամբ՝ մեծ
սահանքով է հոսում:

Կան և այնպիսի տեղեր, ուր գետնի տակից բղխում
է ոչ թէ ջուր, այլ կէծացած շողի: Նա անցնելով գետնի
ահազին թանձրութեան միջով չի փոխարկւում ջրի, ըստ-
որում նա այնտեղ սաստիկ տաքացած է: Եթէ այնպէս
տաքացած չլինէր, շատ շուտով կը պաղէր և գուրս կը
գար կէծացած ջրի տեսքով:

Ի՞նչ են ասում, ի՞նչ են պատմում ջերմ աղբիւրնե-
րը: Նրանք պատմում են, թէ խորը գետնի տակ սաստիկ
տաքութիւն կայ:

Իսկ ի՞նչ են ասում մեզ վուլկանները, հանքահորե-
րը, խոր ջրհորները, շաղափային ծակերը և ջերմ աղբիւր-
ները—ամենքը միասին:

Նրանք պատմում են, թէ ամեն տեղ երկրի վրայ—
և լեռների, և հարթավայրերի, և ծովերի, և մեր ոտքերի
տակ սարսափելի տաքութիւն կայ:

Որքան խոր մտնես գետնի մէջ, այնքան այդ տաքու-
թիւնն աւելի է:

Այդ նկատում է անգամ հանքահորերում, որոնց
խորքերում արգէն տաք է:

Շաղափային ջրհորներն աւելի են խոր գնում գետնի
մէջ, ուստի նրանց խորքերում աւելի տաք է քան հան-
քահորերում:

Աւելի ևս խոր տեղից են սկիզբ առնում ջերմադ-
ըլիւրները և հանքաղբիւրները, այս պատճառով նրանց
ջուրն էլ երբեմն կատարեալ եռուն է լինում:

Նրանից էլ աւելի խոր տեղից են սկիզբ առնում լա-
ւան և, նրա հետ միասին վուլկանից հոսող ջրաշողին: Թէ
լաւան և թէ ջրաշողին այն են պատմում, թէ իրանք գա-
լիս են այնպիսի խորութիւնից, ուր քարերն անգամ հալ-
ւում են:

Ահա ինչպիսի տաքութիւն է երկրի խորքում, մեր ոտքերի տակ:

Արդեօֆ շա՞ն է խոր տաքութիւնը մեր ոտքերի տակ:

Իսկ որքան է այդ խորութիւնը, արդեօք չէ կարելի մի բան էլ արա մասին իմանալ:

Ստորերկրեայ կրակը մեր ոտքերի տակ շատ խոր է: Այդ խորութիւնը պէտք է հաշուել ոչ թէ երկու կամ երեք, այլ մի քանի տասնեակ, գուցէ և հարիւրաւոր վերստեր:

Եթէ նա երկու վերստ խորութեան մէջ լինէր, մարդիկ շաղափային ջրհորներ ծակելով կը հասնէին նրան:

Եթէ նա տասնհինգ վերստ խորութիւնում լինէր, ստորերկրեայ ոյժն ամեն կողմից կարող էր պատռել երկրի կեղեց: Գրքոյկիս մէջ արդէն պատմուեց, թէ ստորերկրեայ ոյժը գետնի տակից վեր է բարձրացնում: Ղաւան մինչև ծովի յատակը և մինչև բարձրաբերձ լեռների գագաթը: Ծովերի ամենամեծ խորութիւնն ութը վերստ է, իսկ ամենաբարձր հրաբուխային լեռը — վեց վերստ: Ուրեմն ծովի յատակի ամենախոր տեղից մինչև լեռան կատարը պէտք է հաշուել ուղիղ գծով 14 վերստ: Հասկանալի է որ ստորերկրեայ ոյժը տակն ու վրայ կանէր ծովի յատակում գտնուող երկրի թանձրութիւնը, եթէ ստորերկրեայ կրակը միայն տասնչորս վերստ հեռու գտնուէր մեր ոտքերի տակ: Կը նշանակէ՝ ստորերկրեայ կրակն աւելի և խոր է թագնուած:

Ծովի յատակն ամուր է, ջրի ահագին ծանրութեան տակ դիմանում է: Եթէ նա ամուր չինէր, շատ տեղերում կը խորտակուէր: Իսկ այդ պատահում է երբեմն ոչ

շատ խոր տեղերում անդամ: Ուրեմն պէտք է կարծել, որ ծովի յատակն էլ մի քանի վերստ հաստութիւն ունի:

Այսպիսով դուրս է գալիս, որ ստորերկրեայ կրակը, մեր ոտքերի տակ, մօտ չի գտնուում: Երկրի մակերեսութիւց մինչև ստորերկրեայ կրակն անշուշտ մի քանի տասնեակ կամ հարիւրաւոր վերստերից պակաս չէ:

Եւ այդ իմացուած է ճիշտ և հաւաստի կերպով:

Քիչ աշխատանք չէին պահանջւում, քիչ խելք և գիտութիւն, այդ բանին հասու լինելու համար: Բայց անշուշտ կը գայ և այնպիսի ժամանակ, երբ մարդիկ աւելի ևս բան կիմանան ստորերկրեայ կրակի մասին:

Գիտնականները գիշեր-ցերեկ անխոնջ աշխատում են, աներկիւղ առաջ գնալով դժուարութիւնների և անյայտութիւնների դէմ: Ամեն մի օր որեւէ յայտնութիւնով վարձատրում է նրանց աշխատանքը և հարստացնում գիտութեան գանձարանը: Այսօր գիտնականն ասում է «զիտեմ», իսկ վաղը կասէ «գիտեմ»: Նա գիտութիւն չի համարում այն, ինչ լսել է ուրիշներից կամ պատրաստ ստացել է գրքերից, որոնք գրուել են հին ժամանակներում, երբ մարդկանց մէջ գիտնականութիւն էլ չկար:

Գիտնականն այն է անուանում գիտութիւն, որը գիտէ նա ճիշտ և հաւաստի կերպով, որը նա դիտել, քննել, համակերպել, հասկացել և բազմաթիւ անդամ ստուգել է, որը ստուգել են և ուրիշները, — այն, որի մասին դատել ու մտածել են և ուրիշները, այն, որը կարող է ստուգել և քննել ամեն մարդ: Այսպիսի գիտութիւնը, այսպիսի ճշգրտութիւնը հաստացնում է, նրան տապալել անկանոնութիւնը հաստացնում է, ամեն յարածակմունքից չեն վախսենում, — ամեն յարածակմունքի կը դիմանան:

Գ Լ ՈՒ Խ Ե

ԱՏՈՐԵՐԿՐԵԱՅ ՏԱՔՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՈ՞Ի Ե ԴՈՒՐՍ ԵԼՆՈՒՄ ԳԵՏՆԻ ՏԱԿԻՑ

Ի՞նչու նրաբուղիսներ չկան ամեն երկրներում:

Ի՞նչու երկրի ամեն վայրերում, օրինակ, Եւրոպական Ռուսաստանում, Գերմանիայում, Սիրիում և շատ ուրիշ երկրներում բնաւ վուլկաններ չկան: Որովհետև ստորերկրեայ ուժերը ոչ մշտապէս և ոչ ամեն տեղ կարող են լոյս աշխարհ ելնել: Այդ ոյժերը միայն մի քանի տեղերում կարող են երկրի թանձրութեան միջով իրանց համար ճանապարհ բանալ: Որմնք են այդ տեղերը, ի՞նչպէս իմանանք այդ:

Դրա համար պէտք է լաւ դիտենք, թէ երկրի որ վայրերում են նստուած գործող վուլկանները: Նրանք, իհարկէ, այնտեղ պատահաբար չեն նստուած, այլ իրանց տեղերումն են: Այդ պատճառով ահա դիտնականները սկսան դիտել իւրաքանչիւր վուլկանն առանձին և բոլորը միասին, սկսան մտածել և քննել իրանց տեսածը: Այդ գործի վրայ շատ աշխատանք և ժամանակ գործ դրուեցին, և բաւական մարդիկ զբաղուեցին այդ գործով: Իսկ այդպիսի մտազբաղ և դժուարին խնդիրներ հարկաւոր էր լուծել, եթէ նրանք չլուծուէին, ապա հրաբուխային արտավիժումները հրաշալի և խորհրդաւոր երևոյթներ կերևային: Միշտ այդպէս է լինում, ինչ որ չես հասկանում, աչքիդ հրաշք է երևում, բայց որ հասկացար, այնուհետև մի հասարակ երևոյթ է դառնում քեզ համար:

Հին ժամանակ ասում էին, «կան այնպիսի ճշմար-

տութիւններ, որոնց հասկանալը մարդու կարողութիւնից վեր է»: Դրանից յետոյ շատ դարեր անցան, իսկ մարդիկ շատ բան իմացան և շատ բանի հասու եղան իրանց խելքով, ինչ որ հին ժամանակ մարդուս տրուած չէր իմանալ, այժմ տրուած է: Եւ ինչ բանի որ մարդս այսօր չի հասել իր խելքով, վաղը կըհանի:


Այն պատճառով մարդիկ այնպէս շատ բան իմացան, որ շատ բանի յաւակնութիւն ունեցան, եթէ յաւակնութիւն չունենային, չէին կարող հասնել: Մարդս բնութեան շատ գաղտնիքներ յայտնագործեց, որովհետև հաւատաց իր աչքերին և խելքին:

Եւ գիտնականները յաւակնեցին, նրանք հարցըրին ըլնութեանը, թէ ինչու մի քանի տեղերում կան վուլկաններ, իսկ միւս տեղերում չկան:

Եւ բնութիւնը որպէս թէ պատասխանեց նրանց, վուլկանները կարող են յայտնուել միայն այն տեղերում, ուր գետի մէջ խոր ճեղքուածքներ կան և մօտակայքում շատ ջուր, այսինքն ծովեր և մեծամեծ լճեր:


Ո՞րտեղ կան նեղուածքներ երկրի քանձրութեան մէջ:

Երկրի վրայ կան շատ բարձր լեռներ: Նրանց կատարները վերանում են բարձր դէպի երկինք, իսկ ստորոտները հարիւրաւոր վերստեր միտուած են երկարութեամբ ու ըստ հարիւրաւոր վերստեր միտուած են երկարութեամբ: Երկրի վրայ կան խիստ լեռնոտ վայրեր: Այստեղ լեռը լեռան վրայ է բարձրում, կարծես, մէկը միւսի վրայ է բարձրանում, մէկը միւսին սղմւում: Լեռների միջև կան կիրճեր, հովիտներ, անցքեր: Լեռները յաճախ իրար կողքի են նստուած, կարծես, ածուի մէջ: յաճախ իրար կողքի են նստուած, կարծես, ածուի մէջ:



Այս էնթաքառական համակարգի կամուրջի վերաբերյալ՝ այսպիսի դաշտական հաղործությունը կատարվել է առաջնային առանձին հաղործությունում:

Ենանաշղթաներ կամ երկրի վրայ: Օրինակ, մի այսպիսի լեռնաշղթայ ձգւում է ամբողջ Ամերիկայի երկայնութեամբ մի ծայրից միւսը, որ մի քանի հազար վերատ է: Մի ուրիշ շատ երկար լեռնաշղթայ ձգւում է Սիբիրի երկայնութեամբ և անջատում ոռւսական հողերը չինականներից: Յաճախ մի լեռնաշղթայի կողքին երկար ձգւուած է մի ուրիշը, նրա կողքին էլ երրորդը, այդ շղթաները մերթ մօտենում են իրար, մերթ հեռանում, մերթ իրար կտրելով անցնում: Ճանապարհորդները որոնք բարձրացել են լեռների բարձր գագաթները պատմում են. «Երբ նայում ես բարձրից լեռնաշղթային, շունչդ բռնւում է: Այնպէս է երկում քեզ, թէ լեռները պաղած ալիքներ են: Երբ կանգնած ես ներքեւ, լեռների մէջ, դժուար է նրանց մէջ որոշում անել. իսկ երբ վերեկից ես նայում նրանց, նկատում ես, որ լեռները, կարծես, մի առանձին կարգով են դասաւորուած և ոչ թէ անկարգ կիտուած իրար վրայ: Թէպէտ դժուար է ըմբռնել, որոշել, թէ ինչ կարգ է դա, բայց և այնպէս անկարելի չէ:—Լեռնաշղթաները,—երբ նրանց նայում ես վերեկից,—իսկական երկրի ծալքերն են»:



Քարեղէն շերտեր:
Արանք կրաքարէ կամ սալաքարէ շերտեր են:

Եւ ահա թէ ինչն է նշանաւոր. բոլոր լեռնաշղթաները քարից են. Քարերը, որոնցից նրանք կազմուած են, զանազան են լինում: Ի՞նչ քարեր են դրանք: Գիտնականները շրջել են զանազան լեռներ և լաւ դիտել, թէ ինչպէս են կազմուած լեռները քարերից և ինչ քարերից: Խիստ յաճախ է պատահում լեռներում կրաքարը կամ սալաքարը: Սա այն քարն է, որից կիր են պատրաստում: Շատ յաճախ պատահում է նոյնպէս աւազաքար, որից ջրաղացի քարեր են պատրաստում: Յաճախ պատահում է և շնորտաքար, սա այն քարն է, որից շինում են քարետախտակներ: Յաճախ են պատահում կաւ, գրանիտ (հատաքար) և ուղիղ տեսակ քարեր: Այդ տեսակներն անկարգ չեն ընկած, այլ մեծ մասամբ խաւերով: Օրինակ, մի ճանապարհորդ պատմում է. «Ես երկար զննեցի լեռները, իմանալու համար, թէ քարային որ տեսակներից են կազմուած նրանք: Այդ բանը զննել դժուար է. արգելք են լինում խիճն, աւազը և ծառերը: Բայց և այնպէս զննելով տեսայ, թէ ինչպէս են կազմուած լեռները: Նրանք կազմուած են քարային տեսակներից, որոնք ընկած են միմեանց վրայ ահազին խաւերով: Օրինակ, գրանիտի վրայ ընկած է կրաքարը, կրաքարի վրայ աւազաքարը, նրա վրայ կաւը, կաւի վրայ շերտաքարը: Ուղիղ տեղերում քարային տեսակներն ուրիշ կարգով են ընկած, - մի խօսքով նրանք զանազանակերպ են դասաւորուած լինում, սակայն միշտ խաւերով, և ոչ թէ անկարգ, խառնիխուուն: Այդ խաւերն ահազին են և հաստ, որոնցից կան որ մի քանի հարիւր սաժէն հաստութիւն և մի քանի հարիւր կամհազար վերստ երկարութիւն ունեն»:

«Ես սկզբում հարթավայրով էի զնում, ապա սկսեցի քարձրանալ: Հարթութիւնն ամբողջապէս կրային քարից էր, որի վրայ աճում էին ծառեր, թփեր և խոտ: Այս


քարի տակ ես տեսայ աւազաքար, իսկ նրա տակը - կաւ: Այդ բոլոր խաւերը շատ լաւ էին երեսում մի սեպ վլուածքի վրայ, ինչ որ գետակի մօտ: Ես նկատեցի, ինչպէս են ընկած այդտեղ խաւերը և առաջ անցայ: Ճանապարհը գէպի լեռն էր քարձրանում: Ես տեսայ, որ այդ լեռն էլնոյն խաւերից է քաղկացած: Այստեղ էլ նրանք նոյն կարգով էին ընկած, միայն շեղ դրութեամբ: Մի քանի ժամ գնալուց յետոյ ճանապարհը շատ աւելի սեպ դարձաւ, որովհետեւ լեռ էր: Այդտեղ էլ ես նկատեցի նոյն խաւերը - կրաքար, աւազաքար և կաւ, որոնք տեղ-տեղ լաւ էին երկում լեռան վլուածքում: Ես մի քանի օր շարուակ լեռներով էի գընում և ամբողջ ժամանակ նոյն խաւերն էի տեսնում: Մի քանի տեղ նըրանք պառկած պատուած է կորուած դրութեամբ, նրա երկարութիւնը, աշ ծայրից մինչև ձախը - մի քանի դիրքով էին, առանեակ կամ նոյնիսկ հարիւր վերստ է: Երևում է, որ միւս տեղերում նա զանազան քարերէն շերտաբերից է կազմուած: Այս շերտը ծովուած են ահազին ծալքերի ձեռնվ:



Լեռնաշղթայ, որ նկարուած է կորուած դրութեամբ, նրա երկարութիւնը, աշ ծայրից մինչև ձախը - մի քանի դիրքով էին, առանեակ կամ նոյնիսկ հարիւր վերստ է: Երևում է, որ միւս տեղերում նա զանազան քարերէն շերտաբերից է կազմուած: Այս շերտը ծովուած են ահազին ծալքերի ձեռնվ:

Էլ, կարծես, կանգուն, տեղ-տեղ բարակ էին, տեղ-տեղ էլ, կարծես, կանգուն, տեղ-տեղ բարակ էին, տեղ-տեղ թէ ինչ են լեռները: Լեռները քարեայ խաւերի ահազին ծալքեր են: Երկրի մի քանի վայրերում, ուր լեռները մեծ չեն, շատ պարզ կարելի է տեսնել այդ խաւերը, իսկ մեծ լեռներում նրանք հեշտ չեն նշմարւում, թէ պէտ նրանք այնտեղ էլ կան: Մի քանի տեղերում ես տեսպէտ նրանք այստեղ էլ կան: Մի քանի տեղերում ես տեսսակները կամհազար կորասայ, ինչպէս են քարեայ տեսակները նրանցում թէպէտ նշմարւում են տեղ-տեղ փոքրիկ ճեղքուածքներ, բայց նշմարւում են տեղ-տեղ փոքրիկ ճեղքուածքներ,

Նրանք էլ գոցուած են: Միւս տեղերում ահազին ճեղքուածքներ տեսայ լեռների մէջ, որոնք բոլոր խաւերի լայնքով էին գնացած, դրանից երևում էր, որ քարեղէն խաւերը կորացել էին, բայց ծալուել չկարողանալով՝ ճաքել էին: Ես տեսայ մի քանի տասնեակ վերստ լայնութեամբ ծալուածքներ և ճեղքուածքներ, որոնք խոր գետնի մէջ էին անցել: Մի տեղ բոլոր խաւերը լայնութեամբ կոտրատուել էին նոյն խակ ծալուածքում: Ճեղքուածքի մի կողմում խաւերը ցած էին նստել մի քանի հարիւր սաժէնով, տեղ-տեղ մի քանի վերստով: Ճեղքուածքի մի կողմում կրաքարի խաւը բարձր էր մնացել, խակ միւս կողմում բոլորովին իջել էր մինչև լեռան ստորոտը: Ուրեմն այդտեղ լեռնային խաւերի ճեղքուածքը շատ խոր էր անցել գետնի մէջ: Եթէ այդպէս եղած չլինէր, քարեայ խաւերն այդպէս խոր իջած չէին լինիլ:



Լեռներ կտրուած գրութեամբ նրանք զանազան շերտերից են կտրմուած. A և B-ծալքերը՝ նկարի աջ ծայրից մինչև ձախը—մի քանի տասնեակ կամ նոյնիսկ հարիւր վերստ է: Շերտերի վերին, այսինքն արտաքին մասերը խորտակւած են:

«Ես լեռների այդ կազմութեան վրայ նայելով մտածում էի, թէ իրաւ որ լեռները և լեռնաշղթաները քարային տեսակների խակական ծալքեր են: Տեղ-տեղ այդ տեսակները ծալուել էին, խակ տեղ-տեղ չծալուած կոտրուել, և նրանց կոտրուած տեղում գետնի մէջ՝ ճեղքուածքներ էին

գոյացել, որոնք շատ վերստեր գետնի մէջ էին խորանցել. հէնց այդ ճեղքուածքների ուղղութեամբ գետինն էլ մի քանի տեղ ցած էր ընկել»:


Այսպէս զանազան ճանապահորդներ այլ և այլ լեռներ անցնելով զննեցին, այնպէս որ երկրի վրայի բոլոր լեռներն այժմ հետազօտուած են: Ահա այս եղանակով գիտնականներն իմացան, թէ ինչ են լեռնաշղթաները:

Լեռնաշղթաները քարային խաւերի ահազին ծալքեր են: Այդ խաւերն այդտեղ ամեն կերպ ծռմոռուելով՝ ծռու, եղեղ և անկիւնաւոր տեսքեր են ստացել. տեղ-տեղ բարձրացել են, տեղ-տեղ իջել: Յաճախ այդ խաւերն այնպէս բարձրացել են, որ նրանց որոշել անխառնուել, հիւսուել և խճճուել են, որ նրանց որոշել անկարելի է: Շատ տեղերում այդ խաւերը չեն կարողացել ծալուել, ճաքել են, և այդ ճեղքուածքները երկրի վրայ շատ հարիւրաւոր և հազարաւոր վերստեր են անցել ու խոր մտել գետնի մէջ: Կան երկրի վրայ և այնպիսի լեռներ, ուր ծաքել է երկրի ամբողջ թանձրութիւնը: Թէ նրքան խոր է գնացած գետնի մէջ մի այդպիսի ճեղքուածք,— դժուար է ասել. անշուշտ շատ տասնեակ վերստեր անցած պէտք է լինի: Ճեղքուածքը բնաւ բաց մնալ չի կարող՝ այլ պէտք է լինի: Ճեղքուածքից խկոյն և եթ փակւում է, հետևաբար և իր ծանրութիւնից խկոյն և եթ փակւում է, հետևաբար և պարսից չի երևում. նրան միայն կարելի է նկատել, նայելով թէ ինչպէս են ընկած այստեղ քարային զանազան տեսակների խաւերը:

Ի՞նչ է պատահում, երբ այդպիսի ահազին ճեղքուածք է երկում գետնի մէջ: Այն ժամանակ երկրի թանձրութիւնը ճեղքուածքի մի կողմում ցած է ընկնում և իր ծանրութիւնից խկոյն և պործում ստորերկրեայ տաքութեան բութեամբ ճնշում գործում ստորերկրեայ տաքութեան վրայ: Դժուար է որոշել նրա ծանրութեան մեծութիւնը: Այդ ծանրութիւնն է, որ վեր է մղում լաւան գետնի տա-

կից, ուստի յաւան էլ ներքեւից վեր է բարձրանում ծեղ-քուածրի միջով:

Ահա թէ ինչու վուկաններն ամենից շատ մեծամեծ լեռնաշղթաների մօտերքում են գտնւում։ Օրինակ, վուկաններ խիստ շատ կան Ամերիկայի լեռներում։ Կը նշա-



Քարեղին շելտերի ծալքեր:

ρητίμ θωράκισθ

Ճեղքուածքներ կան. իսկ ուր որ երկրի թանձրութեան մէջ ճեղքուածքներ կան, այնտեղ էլ կարող են վուլկաններ յայտնուել: Իսկ երկրի թանձրութեան մէջ ուր որ ճեղքուածքներ չկան, այնտեղ վուլկաններ էլ չեն կարող լինել:

Սա այն պատճառով է, որ մեծ է երկրի թանձրութիւնը ու ամուր, և ստորերկրեայ ոյժերն անկարող են իրենք պատռելով անցնել նրա միջով. Նրանք միայն այն տեղով են անցնում, ուր նա ինքը ճաքել է շատ վերստերով դեպի խոր։ Այդ ճեղքերը ստորերկրեայ ոյժերի համար ճանապարհ հեշտացնում են, ուստի այդ ճեղքերի վրայ էլ կանգնած են վուլկանները։

Այն ի՞նչ ոյժ է, որ վեր է բարձրացնում լաւան գետնի սակագ:

Աւրեմն ահա ինչ է պատմել զիտնականներին բնութիւնն ինքը։ Նա նրանց մի մեծ գաղտնիք է հաղորդել, նա ասել է նրանց, թէ լաւան ոչ թէ ինքն իրան է բարձրանում գետնի տակից, այլ նրան դուրս է մղում ճեղքուածքների միջով երկրի թանձրութեան ծանրութիւնը։ Եթէ լաւան ինքն իրան վեր բարձրանար, դա մի հրաշք կը լինէր, նա անկարող է, ինքնիրան վեր բարձրանար, որովհետեւ ծանր է, նա իր ծանրութեան պատճառով ճեղքուածքի միջով ոչ թէ վերև, այլ ներքև կերպի թաշար, այսինքն դէպի երկրի խորքը։

Մի խօսքով՝ ահա թէ ինչ եզրակացութեան կարելի
է գալ, լաւան վեր է բարձրանում այն պատճառով, որ
երկրի թանձրութիւնը որոշ սեղեր ցած է նստում և իր
ծանրութեամբ ճնշում ստորերկրեայ տաքութիւնը։ Այն
ժամանակ լաւան գետնի տակից իրան ճանապարհ է որո-
նում և երկրի ճեղքերով դուրս գալիս վերև։

Ճշմարի՞ս է արդեօք, որ Երկրի բանձրութիւնը ցած է հասում:

Երկրի թանձրութիւնը շատ տեղեր ցած է նստում։
Ովկիանոսներն էլ նոյնպէս երկրի թանձրութեան ցած
նստելուց առաջացած փոսեր են։ Սակայն այդ ցած նըս-
տելլը նկատելի է ոչ ամեն տեղ, միայն ծովափերում։ Երբ
գետինն իջնում է, այն ժամանակ ծովափի բնակիչներին
թւում է, թէ ծովս անդադար դէպի վեր է սողում և քիչ-
քիչ հեղեղում ցամաքը։ Օրինակ, Հիւսիսային Սառուցեալ
ովկիանոսում կայ Գրենլանդիա կղզին, որի բնակիչները

ուանում է ավից. նա հարիւր տարուայ մէջ մի վերշոկ է հեռանում:

Սրանից հետևում է այն, որ ծովը մի տեղում հետք-հետէ աւելի է հեղեղում կղզիները, իսկ միւս տեղում, որ մօտ է առաջնին, անդադար հեռանում է ավից, և կղզիներն աճում են: Կղզիների բնակիչներին մի տեղ այնպէս է երկում, որ ծովը, կարծես, ցամաքում է, իսկ այլ տեղ, կարծես ջուրն աւելանում է: Սակայն այդ միայն այդպէս է երկում. ջուրը ծովի մէջ ամեն տեղ հաւասար է կանգնած: Ուրեմն բանի էութիւնը կայանում է ոչ թէ ծովի, այլ երկրի մէջ: Երկիրը մի տեղ ցածրանում է, միւս տեղ բարձրանում:

Եւ շատ դանդաղ է նա իջնում ու բարձրանում՝ ընդամենը մի քանի վերշոկ հարիւր տարուայ մէջ, բայց իջնում է այնպէս դանդաղ, որ այդ իջնելը նշմարւում է շատ տարիներ անցած. դրանից աւելի արագ. իջնել երկիրը չէ կարող՝ այդ բանին արգելք են ստորերկրեայ ուժերը: Երկրի ծանրութիւնը գետնի տակից վեր է մղում լաւան, սրանից է որ վուկանները կանգնած են լեռներին մօտիկ տեղերում, այսինքն երկրի կեղևի ծալքերին մօտ, ուր երկրի թանձրութեան մէջ ճեղքուածքներ կան և ուր, մօտակայքում, երկրի թանձրութիւնը կամաց-կամաց ցածր է նստում: Այն, երկրի թանձրութեան ծանրութիւնը մեծ գործ է կատարում:

Գետնի տակից բարձրացող ջրառողին:

Այդ գործում երկրի թանձրութեանը շատ է օգնում ջրաշողին:

Առանց ջրաշողու ոչ մի արտավիժում չէ կատարում: Արտավիժման միջոցին շատ ջրաշողի է դուրս դալիս գետ-

պատմում են, թէ ծովն ամեն տարի տեղ-տեղ հեղեղում է նրանց կղզին: Քառասուն տարի առաջ ավից ոչ հեռու ջրի տակից դուրս ցցուած երեւում էին մեծ ու բարձր ժայռեր, իսկ այժմ նրանք ջրի տակն են ծածկուած: Գրեն-լանդացիները կարծեցեն, թէ ծովի ալիքներն են նրանց ողողել տարել, բայց ոչ, նրանք մինչև հիմա էլ ջրի տակ անմիաս պահպանուած են, որովհետև ծովը խիստ դանդաղ է մաշում կարծր քարը: Պարզապէս ասած՝ ժայռերը ծովի յատակի հետ միասին ցած են նստել: Ծովափն էլ նոյնպէս ցածրանում է: Վաթսուն-եօթանասուն տարի առաջ ավից ոչ հեռու բնակիչները տնակներ էին շինել իրանց համար, այժմ այդ տնակներն արգէն ջրի տակ են իջել: Ամերիկայումն էլ գետինը ցած է նստում. Նիւ-Եօրք քաղաքից ոչ հեռու մի ժամանակ տամնութ գեսեատին մեծութեամբ մի կղզեակ կար: Այժմ նա ամենախն չի երեւում ջրի տակ է գնացել: Այդ կղզեակի եղած տեղում ամբողջ ծովափը, շատ հարիւրաւոր վերստ երկայնութեամբ, ջրի տակ է իջնում: Իջնում է այլս հողի մի ահազին շերտ, որ ջրի տակովն անցնում է ամբողջ Մեծ ովկիանոսը, և որի լայնութիւնը շատ հարիւրաւոր և մինչև անգամ հազարաւոր վերստ է: Այդ հողաշերտի վրայ բազմաթիւ մեծ ու փոքր կղզիներ կան, որոնք քոլորն էլ կամաց-կամաց ջրի տակն են գնում:

Բայց զարմանալին ահա ինչն է. այդ հողաշերտի կողքին կայ մի ուրիշ հողաշերտ, որ նոյնպէս ձգւում է ամբողջ Մեծ ովկիանոսի միջով և նմանապէս մի քանի հազար վերստ լայնութիւն ունի: Այդ շերտում ծովի յատակն անընդհատ դէպի վեր է բարձրանում և բարձրացնում իր հետ իր վրայ եղած կղզիները: Այդ կղզիների բնակիչներին այնպէս է թւում, թէ ծովն անդադար հե-

նի տակից: Քանի որ հրաբուղիսը գործում է, շոգին էլ անդադար բարձրանում է նրանից, նա դուրս է խուժում գետնի տակից, ինչպէս շոգեկաթսայից, և սիւնանման բարձրանում է երկինք, և այդ սիւնը սաստիկ մըրիկն անգամ անկարող է ճկել: Զրաշոգին մի քանի վերստ վեր գնալով՝ այնտեղ ջուր է դառնում և իբրև անձրև թափւում ցած: Եթէ այդ բոլոր ջուրը մի տեղ ժողովուի, նրանից կը գոյանայ մի ամբողջ լիճ, կամ գուցէ ծով: Արտավիժման ժամանակ հրաբուղիսի գագաթից հոսում են մեծամեծ գետեր և հեղեղում դաշտեր, գիւղեր և քաղաքներ: Էտնայի մի արտավիժման ժամանակ նրա կոկորդից իբրև շոգի այնքան ջուր դուրս եկաւ, որ կազմեց մի լիճ՝ տասը վերստ երկայնութեամբ, մի վերստ լայնութեամբ և յիսուն սաժէն խորութեամբ: Վեզուվից արտավիժման միջոցին աւելի շատ ջրաշոգի է դուրս գալիս: Կան վուլկաններ, որոնք նրանից էլ աւելի ջրաշոգի են արձակում: Մի խօսքով՝ վուլկանների արտավիժումների ժամանակ երկրի խորքից կատարեալ ջրի լճեր ու ծովեր են դուրս թափւում:

Կը նշանակէ՝ երկրի խորքում ոչ միայն լաւա կայ, այլև ջուր, որ սերտ խառնուած է լաւայի հետ: Լաւան ամբողջապէս յագեցած է ջրաշոգիով և զանազան գազերով, օրինակ, ածխաթթուով, ծծմբային, և այլ գազերով, ինչպէս սպունդը ջրով: Այդ բոլորը խառնուած են սաստիկ նեղուածքի և երկրի թանձրութեան ճնշման պատճառով: Հին ժամանակ մարդիկ կարծում էին, թէ շոգին գետնի տակից լաւայի հետ միատեղ է դուրս գալիս, առանց նրա հետ խառնուելու: Այժմ այդպէս չեն մտածում, ըստորում ականատես են եղել, թէ ինչպէս են լաւագոլորշի և գազ բարձրանում: Նրանք լաւայի միջից թափանցելով՝ դուրս են գալիս ամեն կողմից: Նրանք ցայ-

տեցնում են լաւան և նրա ցայտումները վեր բարձրացնում: Նրանք իրանց հետ տանում են և խոշոր, և ահագին մեծութեամբ ցայտումներ, որոնք վուլկանական ոռւմքեր են կոչւում, և մանր ցայտումներ, որոնք մոխիր են կոչւում: ոռւմքերը թոշում են հրաբուղիսի կոկորդից խըրձածեն, իսկ մոխիրը վեր է բարձրանում սիւնածեն: Մի խօսքով՝ ջրաշոգին, գազերը և լաւան վերև թոչելիս անգամ, միասին են լինում, իսկ գետնի տակ լաւան միանգամայն խառնուած է ջրաշոգու և գազերի հետ:

Ուրեմն խոր, երկրի խորքում մեր ոտքերի տակ, ծածկւած է ոչ թէ զուտ լաւա, այլ ջրաշոգու հետ խառնուած:

Ապա ինչպէս և որտեղից է այդ ջուրը գետնի տակ:

Ի՞նչպէս է ջուրը հասնում կրակին:

Նա ճեղքուածքների միջից ծորալով անցել է այնտեղ, ըստորում գետնի մէջ կան շատ ճեղքուածքներ՝ թէ մեծ ու խոր թէ փոքր: Ահա այդ ճեղքուածքների միջով ճանապարհ բանալով իրան համար՝ ջուրն անդադար հոսում է երկրի մէջ, ինչպէս արիւնը մարդուս մարմնի մէջ:

Անձրեաջուրը անցնում է խոր գետնի մէջ և ողաղելով անցքեր է բաց անում իրան համար: Այդ անցքերով կատարեալ ստորերկրեայ առուներ են հոսում գետնի տակ, իսկ այս առուները միանալով կազմում են ստորերկրեայ գետեր: Տեղ-տեղ գետնի տակ այդ գետերն ու առուները ողողելով բաց են արել ահագին ստորերկրեայ քարանձաւներ: Այսպիսի քարանձաւներ շատ կան երկրի ներսում: Այն ինժենէրները, որոնք խոր ջրհորներ՝ փորելով են պարապում, պատմում են, թէ նրանք յաճախ են հանդիպել ստորերկրեայ առուների, գետերի և լճերի: Եւ ահա ինչն է գարմանալի: գետնի տակ կան այնպիսի գետեր և լճեր,

ուր մինչև անգամ ձկներ ու խեցգետիներ են ապրում։ Օրինակ մի այսպիսի դէպք պատահեց։ Փորում են քսան սաժէնից աւելի խոր ջրհոր Պրուսիայում։ յանկարծ նրանից ջուրը դուրս վիժելով՝ հոսեց առուի նման աւազի վրայով։ Նրա մէջ ինչոր բաներ սկսեցին շողշողալ ու թոշկոտալ։ բանւորները մօտ են վագում ժողովելու, և ի՞նչ տեսնեն, — ստորերկրեայ ջրի մէջ լողում են բազմաթիւ փոքրիկ ձկնիկներ, որոնք բոլորն էլ ողջ ու առողջ են։ Միակ անաջողութիւնն այն էր, որ նրանք ամենքն էլ կոյր էին։ Սա կոյր ձկնիկների մի առանձին ցեղ էր, որոնք միայն քարանձաւներում են ապրում։

Ահա մի ուրիշ դէպք. շաղափային շատ խոր ջրհորից ջուրը դուրս հանեց կենդանի օձաձկներ, բայց նրանք աշ-քեր ունէին։ Դրանք մի քանի հարիւր սաժէն խորութիւնից էին դուրս եկել ջրհորի միջով, իսկ գետնի մէջ ընկել էին այն արանքներից և ճեղքերից, որոնցով ջուրը ներս է հոսում։

Շաղափային ջրհորների ջուրը շատ անգամ է գետնի տակից դուրս հանում և ձկներ, և խեցիներ և բոյսեր։ Մի անցքով ջուրը խոր գետնի մէջ է տանում նրանց, իսկ միւսով կրկին դուրս հանում լոյս աշխարհ։

Պատահում է և այսպէս, որ ջուրը ճեղքուածքի միջով շատ վերստեր մտնում է խոր և համնում կէծացած լաւային, և այնտեղից նրա հետ միասին դուրս գալիս վուլկանի կոկորդով։

Օրինակ, մի այսպիսի անցք պատահեց Վեգումի արտավիժման ժամանակ 1831 թուին։ վուլկանի կոկորդից ջրի հրեղեղներ տղուրս հոսեցին, իսկ ջրի մէջ կային ջրաբոյսեր, խեցիներ և ձկներ։ Նրանք խիստ շատ էին և երկար ժամանակ նեխելով ապականում էին օդը։

Պատմում են դարձեալ ականատեսները, թէ մի նոյ-

նանման դէպք էլ պատահեց Կոտոպախի վուլկանի արտավիժման ժամանակ, այս անգամ նրա կոկորդից խիստ առատ տիղմ դուրս թափուեց, որի մէջ բազմաթիւ սատկած ձկներ էին լողում։ Նրանք այնտեղ բոլորովին եփուել էին։ Գիտնականները քննելով այդ ձուկը՝ իսկոյն ճանաչեցին։ Նա կոչում է երկվահաննիկ և գտնում է Ամերիկայի քարայրերում։

Այդտեղ ահա հասկացան մարդիկ, որ ջուրը զանազան ստորերկրեայ գետերից, առուներից և անձաւներից անցնում է խոր երկրի մէջ և հասնում մինչև այն ճեղքուածքները, ուր գտնում է հրահալուած լաւան։ Գետնի տակ խիստ շատ ջուր կայ։ Ջուրը մշտապէս գետնի տակ է գնում։ թէ անձրևներից յետոյ, թէ գետերից, թէ լճերից, թէ ծովերից և թէ ովկիանոսներից։

Մի այսպիսի դէպք պատահեց Նոր-Զելանդիայում։ Այնտեղ կայ մի փոքրիկ վուլկան Տարավէրօ անունով, որի շուրջը մի քանի մեծ լճեր կան։ 1883 թուին մի սաստիկ արտավիժմում պատահեց Տարավէրօ վուլկանից։ Արտավիժմումից յետոյ մարդիկ տեսան, որ լճերից մի քանիսը, կարծես, գետնի խորքն էին կործանուել, իսկ միւսները ցած էին նստել, և նրանց միջի ջուրը քչացել էր։ Դրա փոխարէն Տարավէրօ վուլկանից խիստ առատ ջրաշողի դուրս եկաւ։ Այդ շոգին գոյացել էր գետնի տակ, լճերի ջրից։ Զանազան ստորերկրեայ անցքերով ջուրը հասել էր լաւային և այնտեղ կէծացած գուրշու փոխարկուելով՝ թափանցել էր նոյն իսկ լաւայի մէջ և յագեցրել նրան։ Հետզհետէ խիստ շատ ջրաշողիներ ժողովուելով լաւայի մէջ՝ վեր էին մղել նրան և դուրս քշել գետնի տակից։

Ինչո՞ւ է զուրը շատ խոր անցնում գետնի մէջ:

Ծովերից և ովկիանոսներից էլ ջուրը շատ խոր մտնում է գետնի մէջ երկրի ճեղքուածքներով։ Ծովաջուրն էլ իր անցքերն ունի գետնի մէջ։ Կան մեծ ու փոքր անցքեր։ Կան և միանգամայն աննշմարելի անցքեր։ Երկրի թանձրութիւնը, մանաւանդ ծովերի մօտ, ամբողջապէս խոնաւ է։ Ինչո՞ւ է հոսում ջուրն այդ ժակերից, արանքներից, անցքերից և ճեղքուածքներից։ Որովհետեւ նրան այնտեղ քում է իր սեփական ծանրութիւնը։ Զրի ամեն մի վեղրօն 30 ֆունտ քաշ ունի։ Իսկ քանի՞ վեղրօ ջուր կը գըտնուի ծովերում և ովկիանոսներում։ Ծովերում և ովկիանոսներում ութը վերստ խորութեամբ տեղեր կան։ Ուրեմն ինչպիսի ծանրութիւն պիտի կրէ իր վրայ այդ տեղերում ծովի յատակը։ Ամեն մէկ վեղրօն կէս արշին բարձրութիւն ունի։ Ուրեմն վեց վեղրօ միմեանց վրայ դրած, կը լինի մէկ սաժէն, իսկ նրանց միջի ջուրը հարիւր ութսուն փունտ քաշ կունենայ։ Ամեն մէկ վերստի մէջ հինգ հարիւր սաժէն է, իսկ ութը վերստի մէջ չորս հազար սաժէն։ Կը նշանակէ՝ ծովի մակերեսոյթից մինչև յատակը կարելի է զետեղել քսան չորս հազար վեղրօ իրար վրայ դարսած։ Ի՞նչ քաշ կունենայ ջրի մի այսպիսի սիւն։ Ամեն մէկ վեղրօ ջրի քաշն է 30 ֆունտ, իսկ 24 հազար վեղրօինը՝ եօթը հարիւր քսան հազար ֆունտ, կամ հարիւր ինսուն հազար փութ։ Այսպիսի ծանրութիւնը կարող է դէպի ահազին խորութիւն մղել ջուրը։

Ահա այս կերպով ծովաջուրը երկրի ամբողջ թանձրութիւնով անցնելով արանքներից, ճեղքուածքներից և աննշմարելի անցքերից՝ հասնում է այն տեղերին, ուր երկրային խաւերի ծանրութիւնը վեր է շպրտել ստորերկրեայ տաքութիւնը։

Հէսց որ կէծացած լաւան դիպում է երկրի խոնաւ խաւերին, իսկոյն սկսում է տաքացնել նրանց։ Խոնաւ հողի միջի ամբողջ ջուրը դրանից գոլորշիանալով ճնշում է գործում երկրի թանձրութեան վրայ և այսպիսով միշտոց է տալիս լաւային ներքելց վեր բարձրանալու։

Մի խօսքով ծովաջրի ծանրութիւնը, կարծես, մղում է շոգին դէպի երկրի խորքը։

Իսկ շոգին ամեն կողմ ճնշելով երկրի խորքը, վեր է հրում հրահալուած լաւան ճեղքուածքներից, ճանապարհ է բաց անում նրա համար առաջ գնալու և ինքն էլ նրա հետ միասին դուրս է գնում։

Ահա դրանից է որ հրաբուղիներն այնպէս առատ ջրաշոգիներ են արձակում իրանց խորքից։

Շոգու ոյժը։

Միթէ շոգին այսպէս մեծ ոյժ ունի. միթէ կարող է նա ծանր լաւան դուրս մղել գետնի տակից։

Այն, կէծացած ջրաշոգին, ահազին ոյժ ունի։ Օրինակ, շատ շոգի կայ արդեօք շոգեկառքի մէջ, մինչդեռ այդ շոգին տասնեակ վագօններ է քաշ տալիս յետելից, որոնցից իւրաքանչիւրը հազար փթից աւելի է։ Այսպիսի գործարաններ կան, ուր մի փոքրիկ շոգեմեքենայ հազարաւոր պէսպէս մեքենաներ է պտոյս տալիս։ Կան ահազին շոգենաւեր, որոնք ամենատեսակ ահաւոր մըրիկների դէմ մաքառում են, մըրիկը մի կողմ է քաշում շոգենաւը, իսկ նա հակառակ կողմու է գնում։ Ինչո՞ւ Որովհետեւնրա վրայ շոգեմեքենայ կայ, իսկ նրա մէջ ուժեղ ջրաշոգի։ Այդ մեշտեմեքենայ կայ, իսկ նրա մէջ ուժեղ ջրաշոգի։ Այդ կաթսայի մէջ քենան մըրիկից աւելի ուժեղ է։

Իւրաքանչիւր շոգեմեքենայ ունի իր շոգեկաթսան, որը մի քանի սաժէն մեծութիւն ունի։ Այդ կաթսայի մէջ քենան մըրիկից աւելի ուժեղ է։

ջուրը սաստիկ տաքանալով գոլորշիանում է, իսկ գոլորշին պտտեցնում է մեքենան։ Թէև շոգեմեքենան միայն մի քանի սաժէն երկարութիւն ունի, այնուամենայնիւ շոգին այդտեղ էլ մեծ ոյժ ունի։ Երկու և կէս ֆունտ ջուրը շոգիանալով՝ կարող է տասնչորս փութ ծանրութիւնը մի սաժէն բարձրութեան վրայ մի վայրկեան վերցրած պահել, իսկ մի վեդրո ջուրը շոգիանալով՝ հարիւր վաթսուն ութը փութ է վերցնում մի սաժէն բարձրութեամբ։ Ապա ինչ ոյժ կը ստացուի, եթէ ջրի մի ամբողջ ծով շոգիանայ, Մի այսպիսի ոյժ երեակայել անգամ անկարելի է։ Այդ ոյժն իրան համար ճանապարհ էլ կը բանայ դէպի վեր, երկրի ճեղքուածքների միջով, լաւան էլ վեր կը մղէ, երկիրն էլ շատ վերստեր շուրջ տարածութեամբ կը ցնցէ։

Ահա այդ պատճառով է որ հրաբուղիսի ոչ մի արտավիժում չի կատարւում առանց ջրաշոգու։

Եթէ ջրաշոգի չլինէր, հրաբուղային ոչ մի արտավիժում տեղի չէր ունենալ։

Իսկ մեծ և ահաւոր արտավիժումների համար, իհարկէ, շատ շոգի է պէտք։

Մարդկային խելքը յայտնագործեց բնութեան մեծ գաղտնիքը։ Նա տեղեկացաւ, թէ ինչու են կատարւում հրաբուղիների արտավիժումները։ Բնութիւնն ինքը նրան այդ գաղտնիքը բացատրեց։ Մարդկային խելքը հարցրեց նրանից, նա էլ պատասխանեց և ահա ինչ։

Վոլկանները միայն այնպիսի վայրերում կարող են յայտնուել, ուր երկրի մէջ շատ խոր ճեղքուածքներ կան եւ մօտակայքում շատ ջուր։

Երկրի մէջինոր ճեղքուածքներն այնպիսի վայրերում են լինում, ուր մեծամեծ լեռնաշղթաներ կան, ուստի եւ վոլկանները զետեղում են ոչ հեռու այսպիսի լեռներից։

Իսկ ովկիանոսներում, ծովերում եւ լճերում շատ ջուր

կայ. ուստի քոլո՞ վոլկանները գըտնուում են ջրից ոչ հեռու, առաւելապէս կղզիներում եւ ծովերի ու ովկիանուների ափերում՝ ոչ աւելի քան 150 վերստ նրանցից հեռու։

Ահա ստորերկրեայ գաղտնիքի լուծումը։ Այժմ մարդկային խելքի համար այդ գաղտնիքն այլևս գոյութիւն չունի։

Բնութեան գաղտնիքը։

Հին ժամանակ հրաբուղիների արտավիժումները խիստ զարմանալի և հրաշալի երեսյթներ էին համարւում։ Ամեն ազգ կարծում էր, թէ այդ լեռները մի ժամանակ չար ոգիների բնակարաններ են եղել, թէ վոլկանների կոկորդների միջով կարելի է մտնել այդ ոգիների բնակարանները։ Իսկ գետնի տակ կենում է պիղծ ոյժը և գործում ըստ իւր հայեցողութեան։ Երբ նա բարկացած է, երկրի խորքից վեր է նետում լաւա, մոխիր և ուղարկում մարդկանց աւերում և մահ։ Իսկ երբ նա բարկացած չէ, այն ժամանակ լեռը, կարծես քնած է, չի գործում։

Օրինակ, իտալիայում, Նէապոլիս քաղաքից ոչ հեռու, կայ մի նշանաւոր լեռ—Սօլֆատարա, որ նշանակում է Ծծմբային։ Սօլֆատարա լեռը հին ժամանակ համարւում էր դժոխքի մուտք և ահա ինչու նրա շուրջը մշտապէս ծծումբի հոտ է փչում, այլև նրա միջից յաճախ, կարծես, հեծեծանքներ և աղաղակներ են լսւում։ Լեռը հառաչելիս ամեն տեսակ ձախ է արձակում՝ և տղամարդու, և կանացի, և մանկական։ Անսովոր մարդն այդ ձախները լսելիս սարսափում է։ Մարդս արդէն շատ անգամ է լսել իր հայրերից և պապերից, թէ չար ոգիների բնակարանում ծծումբի հոտ է փչում, և թէ այնտեղից անդադար հեծեծանքներ և աղաղակներ են լսւում։ Իսկ գիտնականը բո-

լորովին այլ աչքով է նայում Սօլֆատարային։ Ահա ինչից է միշտ սկսում նա։ ասում է. «պէտք է գնալ և լաւ զըն-նել լեռը, քննել և հասկանալ բոլոր տեսածը»։ Պէտք է իր աչքերին ու խելքին հաւատալ, և ոչ թէ հին գրքին։ Սօլ-ֆատարա սարն այժմ ամեն կողմից դիտուած ու հետա-զուուած է։ Նա նոյնպիսի վուլկան է ինչպէս ուրիշները, և ութսուն տարի է որ չէ գործում, իսկ հին ժամանակ գործել է։ Ներկայում նա արձակում է միայն գարշահու-ծծմբային գաղ, և նրա կոկորդը վաղուցուայ պաղած լա-ւայով է լցուած։ Այդ կոկորդի մի տեղում կայ մի նեղ արանք, որի միջով գետնի տակից առատ ծծմբային գաղ է դուրս գալիս։ Նա մեծ թափով է դուրս թռչում, ուստի գոռում է ու հառաչում, և որովհետեւ գազը մերթ ուժեղ մերթ թոյլ է դուրս գալիս այս պատճառով էլ զանազան ձայներ է հանում։ Հեռուից այդ ձայները իսկ որ հեծե-ծանքի և լացի են նման։ Ով որ նրանց ողիների ձայներ կը համարէ, նա գործարանի սուլիչն էլ այդպէս պէտք է համարէ, ըստորում դա էլ հեծեծանքի է նման։

Ահա ինչպէս է կորչում հաւատը դէպի հին ասա-ցուածները։

Հազար տարի անցաւ, և այլս հաւատ չեն ընծայում այդ ասացուածներին։ Յայտնուեցին զիտնականներ, յայտ-նուեց գիտութիւնը, ծխի նման անհետացան հին ասա-ցուածները, և կորաւ հաւատը դէպի հին գրքերը։ Բընու-թեան գաղտնիքը բացուեց. իսկ ով էր նրան բացողն ու լուծողը։

Մարդկային խելքը, մարդկային ճիգը. զանազան եր-կրքների, զանազան աղգերի մարդկային միաբան աշխա-տանքը։

Մարդիկ իմացան և հասկացան, որ բնութիւնն իր կանոններն ունի. աշխարհիս երեսին ամեն բան բնութեան

մէջ այդ կանոններով է կատարւում։ Մարդիկ իմանուզ-ի հասկանալով այդ կանոնները, շատ բան նրանց շուրջը պարզ և հասկանալի դարձաւ նրանց համար՝ այլևս կարիք չեղաւ հաւատալու, թէ կայ ստորերկրեայ աշխարհ, — նա ինքնիրան անհետացաւ։

Գ Լ Ո Ւ Խ Բ.

ԸԱՇ ՏԱՐԻ Ե ԱՐԴԵՕՖ, ԻՆՉ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՎՈՒԼԿԱ-ՆԵՐԸ

Ի՞նչպէս իմանանք այդ նիւս եւ հաւասի կերպով։

Այդ հարցերը մեծ, խորունկ և գժուարին հարցեր են։ Նրանց պատասխանելու համար խելք, գիտութիւն և աշխատանք շատ է հարկաւոր։ Մի անկիւնում նստած՝ նը-րանց մասին ոչինչ չես իմանալ և այդ հարցերին չես կա-րող պատասխանել, մինչդեռ խելացի մարդիկ գտան պա-տասխանը և մինչոյն ժամանակ ճիշտ, արժանահաւատ և կանոնաւոր պատասխանը։ Եւ ահա ինչ եղանակով։

Նրանք նախ և առաջ զննեցին, թէ ինչպէս է կազ-մուած երկրի թանձրութիւնը։ Այդ կարելի է իմանալ ա-մեն կերպ՝ օրինակ, խոր հանքահորերում և շաղափային ջրհորներում։ Աւելի լաւ կարելի է երկրի թանձրութեան մասին իմանալ, դիտելով թէ ինչպէս են կազմուած բար-ձըր լեռները։ Լեռները երկրի ծալքերն են, իսկ երբ ծալք է առաջ գալիս, այն ժամանակ երկրի թանձրութիւնն ա-հագին թմբի նման բարձրանում է, իսկ ծալուածքի տե-ղերում ճաքճգում, ճեղքուածքներ են գոյանում։ Ծալքի ստորոտում, ծալուածքի ներսի կողմը եղած ճեղքուածքը

մտնում է գետնի մէջ, այնպէս որ դրսից չի երևում։ Իսկ թմբի կամ ծալքի վերեռում գտնուող ճեղքուածքը բացւում է։ Հէնց այդտեղ, կոտրուածքում, կարող ես զննել երկրի թանձրութիւնը, ըստորում նա այդտեղ դէպի դուրս է բացուել։ Լինում է և այսպէս՝ գետնի մէջ ճեղքուածքներ են գոյանում, և նրանց միջոցի հողաշերտը ցած է նստում։ Դրանից առաջ է գալիս փոս, իսկ փոսի եղերքներում երեսում է երկրի թանձրութիւնը։ Այսպէս է լինում, օրինակ, իսլանդիա կղզում, որի մասին արդէն պատմուել է։ Ահա այսպիսի զանազան միջոցներով շատ բան կարելի է իմանալ երկրի թանձրութեան մասին և թէ ինչպէս է նա կազմուած։

Պետերբուրգում կայ մի ահագին արքունական գործարան, ուր տպագրում են թղթադրամներ և ուրիշ պետական թղթեր։ Այդ գործարանը կոչւում է պետական թղթեր պատրաստելու էքսպեդիցիա։ Մեծ գործարանի համար միշտ շատ ջուր է հարկաւոր լինում, ուստի սկսեցին ծակել մի խոր ջրհոր։ Ծակեցին գետինը հարիւր սաժէնից աւելի խորութեամբ և ջրհորից հանած հողն ուշագրութեամբ զննելով՝ ահա ինչ իմացան։ սկիզբը դուրս էր եկել գետնի տակից ցամաք տիղմ, որպիսին շատ կայ նեա գետի ափերում։ Այդ տիղմը հին ժամանակ բերուել է այդտեղ գետի ջրով։ Տղմի տակ եղել էր աւազ, իսկ աւազի տակ կապոյտ կաւ։ Կաւի այդ խաւի հաստութիւնը երեաց քառասուն սաժէնից աւելի։ Կաւի տակ նրանք հանդիպեցին աւազաքարի։ սա այն քարն է, որից շինում են ջրաղացի քարերը։ Այդ քարը նոյն աւագն է, միայն դրա մէջ աւազահատիկներն այնպէս ամուր են կապած միմեանց, որ կարծես, ցեմենտով մածուցուած լինեն։ Պէտք էր ծակել այդ քարը, այդպէս էլ արին և առաջ անցան։ Նրա տակը գտան դարձեալ կապոյտ կաւ, նրա տա-

կը դարձեալ աւազաքար, յետոյ դարձեալ կաւ։ Երկար ծակեցին նրան և հասան հարիւր սաժէնից աւելի խորութեան։ Եւ յանկարծ այդ խորութեան մէջ կրկին քարի հանդիպեցին։ Սա արդէն աւազաքար չէր, այլ մի ուրիշ քար, որ կոչւում է գրանիտ (ործաքար)։ Այդ քարը կարծը է և ամուր։ Նա դրսից խայտաճամուկ է երեսում, որովհետև ամբողջապէս բաղկացած է որպէս թէ հատիկներից։ Նրա մէջ կան հատիկներ և վարդագոյն, և սպիտակաւուն, և սև փայլուն։ Մշտապէս այդ հատիկներով կարելի է ճանաչել գրանիտը։ Այդ լինչ հատիկներ են։ Խրաքանչիւր հատիկ քարի առանձին տեսակ է, և իւրաքանչիւր տեսակն իր անունն ունի։ Սպիտակ, կաթնագոյն, փոքր ինչ թափանցիկ հատիկներով գրանիտը՝ մի գոյն, փոքր ինչ թափանցիկ հատիկներով գրանիտը՝ մի առանձին քար է, որ կոչւում է կուարզ. վարդագոյն կամ մոխրագոյն, թափանցիկ հատիկները գրանիտի մէջ—դաշտային շպատ քարն է, իսկ սև փայլուն, կարծես, թեփաւոր հատիկները պարունակողը—սլիւզա քարից են։ Գրանիտ քարը, կամ քարի. տեսակը մի պարզ խառնորդ է, այդ երեք տեսակ քարերից բաղկացած։ Պետերբուրգում գրանիտից շատ պալատներ և յուշարձաններ են շինուած, գրանիտից շատ պալատներ և յուշարձաններ են շինուած, օրինակ, Պետրոս Մեծի յուշարձանի պատուանդանը, Ալէքսանդրեան կոթողը։ Այսպիսի շինուածքների համար սաացւում է Ֆինլանդեան լեռներից։ Ֆինլանդիանիտը սաացւում է Ֆինլանդեան այնպիսի լեռներ, որոնք ամբողջապէս, ըստորուից սկսած մինչև գագաթը, գրանիտից են կազմուած, որը նոյնպէս կոչւում է Ֆինլանդեան։ Ֆինլանդիայում գրանիտի ահագին ժայռեր են դուրս գալիս գետնի տակից, լեռների ստորոտում նրանք գետնի մէջ են գտնում և ովք գիտէ ուր են վերջանում երկրի խորքում։ Գտնում և ովք գիտէ ուր են վերջանում երկրի խորքում։ Այդտեղ նրանց վրայ ընկած են աւազաքար, կաւ և քարային ուրիշ տեսակներ։ Ֆինլանդիայի լեռներից մինչև

Պետերբուրգ մի քանի հարիւր վերստ են հաշուում, մինդեռ գետնի խորքից, շաղափային ջրհորից, յանկարծ ֆինլանդական գրանիտի կտորներ հանեցին, ոչ թէ մի, այլ մի քանի անգամ։ Ջրհոր ծակող ինժեներները սկիզբը կարծեցին, թէ այդ գրանիտը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մեծ կոպիճ, պատահմամբ ընկած երկրի մէջ։ Այդպիսի կոպիճներ շատ կան Պետերբուրգի սահմանում։ Բայց ոչ, նա կոպիճ չէր. ծակեցին նրան, շատ ծակեցին, բայց տակը չհասան։ Այդտեղ ահա հասկացան ինժենէրները, որ Պետերբուրգի տակը նոյնիսկ Ֆինլանդեան լեռներից գալիս է գրանիտեայ ներքնայատակ, այնինքն այդ լեռները շարունակուելով գետնի տակով հասնում են մինչև Պետերբուրգ։

Եւ իրաւ, այժմ Պետերբուրգում կան մի ամբողջ տասնեակ շաղափային ջրհորներ, որոնք այլ և այլ տեղերում են գտնւում։ Այդ ջրհորների միջոցով շօշափեցին երկրի խորքում գրանիտեայ ներքնայատակը։

Այդպիսի ներքնայատակներ շօշափեցին և այլ երկըրներում։ Օրինակ, երկրի միւս ծայրում, Ամերիկայում, ծակեցին մի վերստից աւելի խորութեամբ մի ջրհոր և նմանապէս ամենախոր տեղում հանդիպեցին գրանիտեայ ներքնայատակի։ Այժմ զանազան երկներում շատ կան այնպիսի շաղափային ջրհորներ, որոնց մէջ շօշափուած է այդպիսի ներքնայատակ։

Եւ ահա ինչն է նշանաւոր. ամբողջ երկիրն այդ կանոնով է շինուած՝ բոլոր միա տեսակներից խոր գտնում է գրանիտը, կամ քարային այլ տեսակներ, որոնք նման են նրան։ Այդ տեսակի քարեր շատ կան, օրինակ, գնէյսը (գղճաքար) *): Քարային այդ տեսակների վրայ ընկած

*) Գնէյսն էլ գրանիտի պէս բաղկացած է կուարի, դաշ-

են կաւի, աւազաքարի, աւազի և այնայլ քարային տեսակների խաւեր։ Հէնց այդ կանոնով էլ, կարծես, կազմուած է ամբողջ երկրագունդը։ Գիտնականներն ամեն երկրի ճանապարհորդելով՝ զննել ու քննել են երկրագունդի բոլոր լեռները և ամեն տեղ միենոյն կանոնն են տեսել։

Ի՞նչու է այդպէս. որտեղից է առաջացել այդ կանոնը։

Ահա հէնց այն պատճառով, որ այլապէս անհնարին էր. Հապա մի լաւ զննիր, թէ ինչպէս է կազմուած գրանիտը, լաւ զննիր, ինչպէս են կազմուած այն քարային տեսակները, որոնք նրա վրայ են գտնւում. լաւ զննիր և հասկացիր, թէ որ տեսակը որտեղից է առնուած, — այն ժամանակ կըտեսնես, որ այլապէս անհնարին էր։

Գրանիտն ու գնէյսը աւելի հին են միա բոլոր քարային տեսակներից։ Երբ դեռեւ չկային աշխարհիս երեսին ոչ կաւ, ոչ աւազաքար, ոչ աւազ, ոչ կրաքար, — գրանիտն ու գնէյսն արդէն կային։ Միւս տեսակները նրանց վրայ են նստել ջրից բաժանուելով։ Ուր որ այդ տեսակներն այժմ ընկած են, այնտեղ ծով էր մի ժամանակ։ Ծովերում և ովկիանոսներում մինչև այսօր էլ ջրից բաժանուելով նստում են այս կերպով և կաւը, և աւազը, և կրաքարը։

Ի՞նչ են կաւը եւ աւազը։

Մի գիտնական ճանապարհորդում էր գրանիտային լեռներով, որոնք սեպ էին և վայրի, ծածկուած եղենի մայրի անտառներով։ Քարերը վայրի մամուվ էին ծածկուած, իսկ տեղ-տեղ էլ խիտ ծառերի և մամոի տակից բնաւ չէր երկում քարը։

այսին շպատի և սլիւդայի հատիկներից, բայց այդ հատիկներն այլ տեսակի են։

Գիտնականը նստեց մի քարի վրայ հանգստանալու և մի քիչ բան ուտելու։ Յանկարծ նրա աշքովն ընկաւ մի փոքրիկ ճեղք նոյն քարի վրայ, ուր նստած էր։ Մի ուրիշը նրա տեղում ուշք էլ չէր դարձնիլ այդ ճեղքի վրայ, բայց գիտնականը նկատեց այն. տեսաւ նա, որ ճեղքի ներսում գրանիտ քարը պայծառ-վարդագոյն է, իսկ դուրսը—բոլորովին աղօտ։ Ի՞նչու է աղօտ։ Այդ «Բաչու» հարցն ամեն ժամանակ պտտում է գիտնականի զիխում։ Արդեօք փոշուց չէ որ աղօտ է դարձել քարը։ Ոչ, փոշուց չէ, որովհետև այդ տեղն անտառային լինելով՝ փոշի չի կարող լինել։ Գիտնականն առաւ թուց լաթ և քարը սրբեց։ Քարի գոյնը մի քիչ բացուեց, իսկ լաթը մոխրագոյն դարձաւ։ Բայց շուտով քարը չորանալով՝ դարձեալ աղօտացաւ։ Այս ի՞նչ բան է։ Գիտնականը հոտոտեց լաթը ու տեսաւ, որ լաթից հոտ է փչում. ուրեմն գրանիտի վրայ կաւ էր եղել։

Տուն վերադառնալով գիտնականը սկսեց մտածել և քննել, թէ ի՞նչու գրանիտի վրայ կաւ կար։ Այդտեղ վերջապէս պարզուեց նրա համար, որ կաւն այնտեղ պատահմամբ չի երևացել. քամուց ու անձրեց, ցրտից ու տաքից գրանիտը հատիկների է բաժանւում։ Հատիկների մի մասը կուարզ քարից են, միւսները—դաշտային շպատից, իսկ երրորդները—սլիւդայից։ Կուարզի հատիկները նոյն աւագն են, իսկ սլիւդայի և դաշտային շպատի հատիկներն օղից, ջրից և ուրիշ պատճառներից սպիտակում են, փշրում ու փոշի դառնում։ Այդ իսկ փոշին կոչւում է կաւ։

Կարող են փոշիանալ և գրանիտեայ ահագին լեռներ։

Զուրը տանում է նրանց մի որևէ այլ տեղ, և նրանք այնտեղ ժողովուելով՝ կազմում են կաւի, աւազի, շերտաքարի և աւազաքարի խաւեր։


Կը նշանակէ՝ այդ բոլոր քարային տեսակները նոյն

գրանիտային և գնէյսային լեռներն են՝ որ փոշի են դարձել։

Ուրեղից են ծովաջրի մէջ կաւն ու աւազը։

Ծովի ալիքները գարկելով ծովափեայ ժայռերին և քիչ-քիչ քերելով ու ողողելով նրանց՝ մասնիկ առ մասնիկ պոկում տանում են հետները։ Ծովերի և ովկիանուների մէջ են թափւում ահագին գետեր, գետերի մէջ—գետակներ, իսկ գետակների մէջ—առուներ։ Ամբողջ երկիրը ծածկուած է գետերով և առուակներով, ինչպէս երակներով։ Իւրաքանչիւր առուակ, գետակ և գետ իրանց գործին են՝ ողողում են հողն ու քարը։ Անձրեն ու քամին, ցուրտն ու տաքն օգնում են նրանց։ Նրանց աշխատանքին դէմ կենալ չեն կարող ամենաամուր քարերն անդամ։ Պատմում են ճանապարհորդները, որոնք եղել են՝ ֆինլանդեան լեռներում, թէ այստեղ լեռների ստորոտներում մանր քարերի ահագին կոյտեր են կիտուած։ Այդ քարի կտորտանքը վլուած են, հատիկ հատիկ թափթփուած գրանիտ։ Գրանիտեայ ահագին ժայռերը կամաց-կամաց հատիկների են՝ բաժանւում, և այդ հատիկներից գոյանում են խիճ և աւազ. իսկ դաշտային շպատի և պիւդայի հատիկներից կաւ է գոյանում։ Լեռնային հեղեղատներն ու առուակներն այդ հատիկները յափշտակելով՝ լեռներից իջեցնում են հովիտները և այնտեղից գետակներն ու գետերը, իսկ գետակներն ու գետերը հասցնում են ծովը։ Ջրի իւրաքանչիւր ծորմունքը ողողում է այն հողը, որի վրայով հոսում է։ Զուրը հատիկ-հատիկ լուանալով աւազը և կաւը՝ տանում է նրանց ծով։ Այն մանր քարերը կամ հատիկները, որոնք աւելի ծանր են և որոնց համար աւելի ոյժ է պահանջում, այնքան շուտով չեն շարժւում դէպի ծով։ աւազա-

հատիկներն աւելի արագ են շարժւում, իսկ կաւահատիկները նրանցից էլ արագ: Եւ ինչ որ աւելի թեթև է, այնքան շուտով չի նստում ծովի յատակը, ուստի ջուրն աւելի հեռու է տանում ծովի մէջ կաւը, քան թէ աւազը:



Հեռների փշըուելը:

Այսուղ նկարուած են քարէ լիռներ, նրանցից քիչ-քիչ, հետզհետէ կոտըատուում են մանր կտորներ: Այսպիսի կտորները կուտակուել են ցածում և զարիվայրերին՝ կազմելով ահագին կուտակներ:

Նախ և առաջ ափից մօտ նստում են կաւային հատիկները: Աւազահատիկներից կամաց-կամաց և քիչ-քիչ գոյանում են ծովային աւազի խաւեր: Յետոյ, շատ ու շատ տարիներ անցնելով, աւազը խտանում ու պնդանում է, իսկ հատիկներն ամուր կպչում են միմեանց: Այսպիսով աւազից գոյանում է ամուր և խիտ աւազաքար: Իսկ կաւային հատիկները միասին ժողովուելով՝ կաւային խաւ են կազմում: Ափից ա-

ւելի հեռու, խոր ծովի մէջ կրաքարն է գոյանում *), և միւս քարային տեսակներն էլ մինչև այժմ աճում են ովկիանոսների և ծովերի յատակում:

Այդ տեսակները միայն ծովումն են կարողանում աճել: Այդ բանը ճիշտ և հաւաստի կերպով իմացան հետեւեալ կերպով: Ծովերի և ովկիանոսների զանազան կողմերում ման էին գալիս մեծ-մեծ նաւեր յատակը չափելու համար այդ նաւերի վրայ կային գիտնականներ: Ծովի խորութիւնը չափելու համար առանձին գործիքներ են հնարուած, որոնց օգնութեամբ կարելի է հողակոյտ հանել ծովի յատակի ուղած խորութիւնից **): Այդպիսի գործիքներ ձգեցին նաւից ծովի զանազան տեղերը, և ափին մօտ, և նրանից հեռու, և վերջապէս իմացան, որ ծովի յատակն ափին մօտ աւազային է, ափից հեռու—կաւային, իսկ աւելի հեռու—կրային:

Ինչո՞ւ աւազը տեղ-տեղ կաւի վրայ է լինում:

Դարձեալ իմացան մարդիկ, թէ ինչո՞ւ է տեղ-տեղ աւազը կաւի վրայ գտնւում: Դա այնպիսի տեղերում է պատահում, ուր ծովը հին ժամանակ խոր է եղել և ափերը հեռու, իսկ յետոյ ծովի յատակը բարձրացել է, ցամաքն աճել և ծովը ծանծաղացել: Օրինակ, Մեծ ովկիանոսում և աշխարհի այլ կողմերում այնպիսի տեղեր կան, ուր ծովի յատակը քիչ-քիչ վեր է բարձրանում: Այսպիսի տեղե-

*) Այդ քարով սալայատակում են փողոցները: Նրանից են ստանում չմարած կիրը, որը շինութիւնների համար է գործածում: Այդ նպատակով կրաքարի կտորներն այրում են առանձին շինուած հնոցներում:

**) Այդ գործիքն ունելիքի նման է: Հէնց որ այն ունելիքը համար է ծովի յատակին, իսկոյն ինքնիրան փակւում է, ծովի յատակից հողակոյտ վերցնելով:

բում ցամաքն աւելի և աւելի է դուրս գալիս ջրի տակից: Օրինակ, այս ձևով է բարձրանում այժմ այն տեղն, ուր կանգնած է Պետերբուրգ քաղաքը: Հարիւր տարի առաջ նոյն տեղում ստորերկրեայ ոյժերը մէկ ու կէս արշին վեր են բարձրացրել երկրի թանձրութիւնը: Նոյն կերպով էլ բարձրացել է ցամաքից և Ֆիլանդիայի ծովափը: Այդ բանն իմացան եզերային ժայռերի վրայ հարիւր տարի առաջ դրուած նշանով: Այն ժամանակ այդ նշանները դրուած էին նոյն իսկ ջրի երեսին հաւասար, իսկ այժմ նրանք ափի հետ միասին բարձրացել են՝ մի տեղ մի արշին, միւս տեղ մէկ ու կէս արշինից էլ բարձր: Ուրեմն երկրի այդ տեղում ցամաքը հետզհետէ աճում ու բարձրանում է ջրի երեսից, իսկ ծովն աստիճանաբար ծանծաղանում: Ի՞նչ էր լինում այն ժամանակ, երբ ծովն այդտեղ խոր էր և ափը նրանից հեռու: Այն ժամանակ աւազն այդտեղ չէր նստում յատակին, այլ մի այլ տեղ—ափին մօտ: Իսկ ի՞նչ առաջացաւ նրանից, որ ծովի յատակը բարձրացաւ և ցամաքն աճեց: Քանի որ ծովի թափւող գետերի բերաններն էլ մօտեցան այդ տեղին, հետեւ բար գետերի բերած աւազն էլ թափուեց կաւային յատակի վրայ: Այսպիսով այդ ժամանակից կաւային խաւի վրայ սկսեց աճել աւազային խաւ:


Ուրեմն այսպէս կարելի է հասկանալ. ծովի յատակում քարային մի տեսակն ընկած է միւսի վրայ այն պատճառով, որ ծովի յատակը մերթ ցածրանում է, մերթ բարձրանում: Ծովի յատակը բարձրանում է, երբ նրա վրայ թափւում է գետերից բերուած աւազ. նստում—ցածրանում է նա, երբ աւազի վրայ դարձեալ կաւ է նրստում: Իսկ եթէ ծովի յատակը շատ խոր է նստել, այդ կը նշանակէ, որ կաւի վրայ կիր է նստել: Մի խօսքով՝ ծովի յատակում քարային տեսակները մի առանձին կա-

նոնով են աճում: Նրանք ընկած են լինում մէկը միւսի վրայ. այլապէս անհնարին էլ է:

Ճի՞րս է արդեօ, որ կաւը, կրաքարը եւ աւազաքարը ծովի յատակումն են գոյացել:


Ի՞նչպէս իմանանք ճիշտ և հաւասարի կերպով, որ կաւի, աւազաքարի և կրաքարի խաւերը և շատ ուրիշ քարային տեսակներ ծովի խորքումն են գոյացել: Դրա համար լաւ պէտք է զննել նրանց: Այդ քարերի մէջ թափնուած է այն ամենն, ինչ որ ընկած է ծովի յատակում: Իսկ ծովերի և ովկիանոսների յատակում մշտապէս ընկած են լինում, օրինակ, քնած ձկներ, ամենատեսակ խեցիներ, ջրաբոյսեր և ուրիշ ծովային մնացորդներ: Այդ տակուցքների վրայ կամաց-կամաց, քիչ-քիչ, վերկից թափւում են մի տեղ աւազ, միւս տեղ կաւ: Այսպիսով վերջիվերջոյ նրանք միանգամայն ծածկւում ու թաղւում են կաւի ու աւազի տակ և մնում ընդ միշտ այնտեղ: Պատահում է որ քնած ձուկը կամ ջրաբոյսը վաղուց արդէն փտել են, բայց նրանց անդրադրոշմը նոյնութեամբ մնացել է կաւի վրայ: Լինում է և այնպէս, որ երկար ժամանակ անցնելուց և վրան նստած խաւերի ծանրութիւնից կաւը տեղ-տեղ պնդանում ու կատարեալ քար է գառնում, որ կոչւում է շերտաքար: Այդ իսկ քարից պատրաստում են քարեգրիչներ և քարետախտակներ: Ստորերկրեայ տաքութիւնից և ծանրութիւնից կաւէ շերտաքարը կատարեալ կարծը քար է դառնում, մինչդեռ ձկների և ծովաբոյսերի անդրադրոշմներն այնուամենայնիւ անջնջելի պահպանում են շատ հազարամետակներ: Այդ անդրադրոշմներից էլ իմացւում է, որ կաւային շերտաքարը նոյն պնդացած կաւն է, իսկ կաւն, այդտեղ ծով եղած ժամանակը, ջրից բաժանուելով տակն է նստել:

Իսկ կրաքարի մէջ գտնւում է բազմաթիւ ու բազմատեսակ խեցիներ: Մինչև անդամ այնպիսի լեռնային տեսակներ կան, որոնք միմիայն խեցիներից են բաղկացած: Մի ժամանակ այդ խեցիները ողջ են եղել, իւրաքանչիւր խեցու մէջ նստած է եղել առանձին կենդանի՝ կակղամորթ: Այդ կենդանիները սատկել են, իսկ նրանց խեցիները մնալով և ժողովուելով՝ ամբողջ լեռները զանազան բոյսերի անդրադրոշմ շերտաքարի վրայ: Այս բոյսերի տեսակները այլևս երկրին են կազմել: Խեցիների վրայ չեն պատահում:




Զանազան բոյսերի անդրադրոշմ շերտաքարի վրայ: Այս բոյսերի տեսակները այլևս երկրին են կազմել: Խեցիների վրայ չեն պատահում:

Բոլոր քարային տեսակներին, որոնք ծովից ազատուելով յատակն են նստել, առանձին անուն է տրուած, որ-



Զկան անդրադրոշմ քարի վրայ: Այս ձկան տեսակը այլևս չկայ: Ալեսզի մի բառով որոշուեն միւս քարային տեսակներից: Նրանք կոչւում են յատականիստ տեսակներ:

Ահա այդ տեսակներն են, որ ընկած են հին գրանիտի և գնէյսի վրայ, իսկ գրանիտը և գնէյսը երբէք և ոչ մի տեղ ընկած չեն եղել նրանց վրայ:



Զանազան տեսակ խեցիներ, որոնք յաճախ ընկնում են կրաքարի մէջը: Այս խեցիները զանազան տեսակին են Սրանց տեսակները շատ վաղուց անհետացած են ու հիմա այլևս ովկիանոսներում ու ծովերում չկան:

Կը նշանակէ՝ նրանց մէջ գրանիտն ու գնէյսը ամենից հին են:

Ի՞նչպէս է ընթանում երկրի կեանքը:

Եթէ կան երկրի վրայ գրանիտեայ լեռներ, ապա անշուշտ կը լինեն և կաւի, աւազի, աւազաքարի և շերտաքարի խաւեր: Լեռներն աւերում են անշուշտ, նրանք երբէք չեն կարող դէմ կենալ ջրին և քամուն, ցրտին ու տաքին: Նրանցից մնացած փոշին ցիր ու ցան է լինում ամբողջ երկրի վրայ: Գետի և ծովի ջրերն իրանց ուղածին պէս տեսակների են բաժանում նրանց, և այսպիսով ծովի մէջ ժողովւում են զանազան քարային տեսակների ահազին խաւեր, որոնց ծովի տակից դուրս են մղում:

ստորերկրեայ ոյժերը։ Ծովի յատակը դառնում է ցամաք, իսկ ցամաքը ծովի յատակ։ Իսկ այս պատահելուց յետոյ նրա ընթացքն էլ միանգամայն այլ կողմ է ուղղւում. ցամաքի վրայ դարձեալ գործում են քամին ու անձեռը, առուներն ու գետերը. այդ գործողութեան շնորհիւ սկսում են փլչել և, հալուել կաւային, աւազային և միւս բոլոր խաւերը, և փշրուելով աւագ ու փոշի են դառնում, իսկ այդ աւագն ու փոշին ջրի հետ միասին դարձեալ ծովի յատակն են գնում, և այսպիսով հին խաւերից նոր խաւեր են կազմւում։ Ապա նրանց հետ էլ դարձեալ նոյնն է պատահում։


Եւ այսպիսի շրջանառութիւնը անվերջ պիտի շարունակուի։ Ոչ նրա սկիզբն է յայտնի, թէ որտեղ է եղել, ոչ էլ վախճանն է յայտնի, թէ երբ կը լինի։

Շա՞ն տարի է արդեօֆ, որ կատարում է այդ ցըանառութիւնը։

Ի՞նչպէս իմանանք, թէ որքան տարի առաջ է սկսուել այդ շրջանառութիւնը։ Արդեօք հազար, թէ երկու կամ տասը հազար տարի առաջ։ Գուցէ հարիւր հազար կամ միլիոնաւոր տարիներ առաջ։ Ի՞նչպէս իմանանք այդ ճիշտ և հաւասարի կերպով։

Այդ կարելի է իմանալ յատականիստ տեսակների հաստութեամբ։ Պէտք է դիտել երկրի մի որևէ վայրում, արագ է աճում արդեօք այդ տեսակը։ Կայ, օրինակ, այդ տեսակներից մէկը՝ կալիծը։ Դա համարեա ամեն տեղ բաղկացած է մանր-մանր խեցիներից, որոնք հասարակ աչքով չեն երևում։ Նրանց տեսնելու համար ահա ինչ պէտք է անել, պէտք է վերցնել կաւիճի կտոր, մի բաժակ ջուր և մի վրձին, և զգուշութեամբ քերել վրձինով կաւիճուր և մի վրձին, և զգուշութեամբ քերել վրձինով կաւի-

ճը ջրով լիքը բաժակի վրայ։ Այն ժամանակ կը թափուեն ջրի մէջ խեցիներն ու կրային հատիկները, խեցիները բաժակի յատակը կը նստեն, իսկ կիրը կը լողայ ջրի մէջ։ Այս կերպով կարող ես բաժակի յատակից ուղածիդ չափ




Զանազան երկրների կաւիճ։ Կաւիճի կտորից քերուած է բարակ փոշի։ Այսպէս է ներկում այդ փոշին խոշորացնող նայելիս։ Ձախ կողմը նկարած է անգլիայի կաւիճ։ Աջ կողմը ներքեւում Աֆրիկայի կաւիճ։ Աջ կողմը վերևում նկարած է կաւիճէ փոշի։ Սա այս նկարի վրայ մեծացրած է հազար երկու հարիւր անգամ։

Խեցիները ժողովել, որոնցից բաղկացած է կաւիճը։ Այդ խեցիները մի ժամանակ ողջ են եղել և ապրելիս են եղել ծովաջրի մէջ, որից բաժանուելով նստել են յատակին։ Այսպիսի խեցիներ մինչև հիմա էլ ապրում են ովկիանոսում և, երբ մեռնում են, նրանց դիակներն ընկնում են յատակը։ Ովկիանոսի ջուրը լիքն է նրանցով, իսկ յատակը լիք-նրանց դիակներով։ Շատ այդպիսի խեցիներ կը ժողովուի և ապա այդպիսի խեցիներ կը ժողովուի։

դովուեն ծովի յատակում հարիւր տարուայ մէջ: Ո՞րքան կը լինի նրանցից կազմուած շերտի հաստութիւնը նոյն ժամանակի ընթացքում:

Հարիւր յիսուն տարի առաջ սատոիկ մըրիկ պատահեց Մեծ ովկիանոսում: Այդ միջոցին ովկիանոսով անցնում էր մի զինուորական նաւ, որը մըրիկի ենթարկուելով խորասուզուեց յատակը մի կղզուց ոչ հեռու, ծովի խոր տեղում: Անցաւ նրանից յետոյ հարիւր յիսուն տարի, և ճիշտ նոյն տեղը եկաւ մի ուրիշ նաւ: Այդ նաւի վրայ կային գիտնական մարդիկ, որոնց նպատակն էր ուսումնասիրել, թէ ինչպէս է կազմուած ովկիանոսի յատակը, և ինչպիսի ձկներ ու այլ ծովային կենդանիներ են ապրում այստեղ: Նրանց որսալու համար հնարուեցին առանձին տեսակի ուռկաններ և որսիչ գործիքներ: Այդ որսիչներն իջեցնում էին նաւից ովկիանոսի խորքը և այստեղ քաշէքաշ տանում յատակի վրայով: Ահա մի այդպիսի որսիչ, ճանկեց խորտակուած նաւի ինչ որ բեկոր և դուրս քաշեց: Գիտնականները սկսեցին գիտել նրան և տեսան, որ նրա վրայ ինչ որ փոշի է նստել: Զննեցին այդ նստուածքը խոշորացոյցի տակ և գտան, որ դա ոչ այլ ինչ է, բայց եթէ ոչ թարմ կաւիճ, որը չորանալով սպիտակ ու փխրուն դարձաւ: Նա ջրից էր նստել նաւի բեկորի վրայ, որն ընկած էր եղել այնպիսի խորութեան մէջ, ուր ծովի ալիքները բնաւ չեն հասնում, որ կարողանային սրբել նրա վրայից կաւիճը: Նրան մի քիչ քերքերել էին տեղտեղ չուանով, ջրի տակից դուրս քաշելիս, տեղտեղ էլ փոսիկներում նստուածքը պահպանուած մնացել էր նոյն հաստութեամբ, ինչպէս որ եղել էր ջրի յատակում: Այդ նստուածքը չորացըին, ճիշտ չափեցին նրա հաստութիւնը և գտան, որ շատ բարակ է: Նաւի բեկորի վրայ գտան և այրած վերտառութիւն—խորտակուած նա-

վի անունը: Քրքրելով ին հին գրքերը տեղեկացան, թէ որ տարում ու ամսաթուին է խորասուզուել այդ նաւը: Վերջապէս ամեն ինչ կշռելով ու համեմատելով՝ հասան այն եղբակացութեան, որ կաւիճը ծովի յատակում չափանց դանդաղ է ժողովւում:



Կաւիճէ լեռներ ծովափին^ա(Ռիուգէն կղզու վրայ):

Այն ինչ երկրի վրայ հարիւր սաժէնից աւելի բարձրութեամբ կաւիճէ սարեր կան: Օրինակ, Անգլիայում 150 և աւելի սաժէն բարձրութեամբ կաւիճէ լեռներ կան, որոնք բոլորն էլ ամբողջապէս բաղկացած են մաքուր կավճից. գրանք հին ժամանակ, երկի, աւելի բարձր են եւ պահպանում անձրեները, քամիները և առուներն ամեն դել, ըստորում անձրեները, քամիները և առուներն ամեն տարի ողողում են նրանց:

Ապա քանի տարում է ցած նստել կաւիճի մի այսիսի, հարիւր սաժէն հաստութիւն ունեցող, խաւ: Այդ

դժուար չէ հաշուել: Հաշուելով գտել են, որ կաւիճի խաւերն աճել են ծովի յատակում շատ հարիւր հաղարաւոր տարիների ընթացքում: Առաջին անգամից այդ թիւը շատ մեծ է երևում, բայց երբ քննում ես, տեսնում ես, որ իսկականից աւելի փոքր է: Որովհետև կաւճային լեռները ժամանակով աւելի բարձր են, կը նշանակէ՝ նրանք աճել են աւելի երկար ժամանակ: Բացի դրանից լեռներում եղած կաւիճը չոր է և պնդացած, իսկ նաւային բեկորի վրայինը դեռ բոլորովին չի պնդացած, երբ պնդանայ, աւելի բարակ կը լինի: Դրանից երևում է, որ կաւճային սարերն աւելի հին են:

Կան երկրի վրայ աւելի բարձր կաւճային սարեր, օրինակ՝ Ռիւգէն կղզում, ուրեմն նրանք աւելի երկար ժամանակ են աճել:

Այդ լեռները բոլորն էլ կազմուած են այնպիսի կաւիճից, որպիսին այժմ աճում է, և կաւիճի միջի ցեխն էլ նրանից է, որը ներկայումս գտնվում է ովկիանոնի յատակում։ Կը նշանակէ՝ այդ կաւճային լեռները ջրի տակ նոյն եղանակով են աճել, ինչպէս հիմա են աճում։ Իրաւ, մեծ թիւ է հարիւր հազար և միլիոն տարին, բայց կաւիճի հնութեան մասին էլ կասկածել պէտք չէ։ Բոլորն աչքիդ դիմացն է, նայիր և հասկացիր։

Այն ինչ կաւճային խաւի տակ գտնւում է կրաքարի հաստ խաւը, որ նոյնպէս դանդաղ է աճում, ինչպէս կաւիճը: Իսկ նրա տակը դարձեալ կաւի, աւազաքարի, շերտաքարի հաստ խաւ, և ամեն մի այսպիսի խաւ բաւական ուշ է աճում: Շատ անգամ են փորձել գիտնականները չափել և հաշուել հոդային խաւերի աճումը երկրի զանազան վայրերում, միշտ և ամեն տեղ էլ միևնույն են գրտել. բոլոր յատականիստ տեսակները խիստ դանդաղ են աճում, այսինչ նրանցից շատ շատերն են արդէն աճել,

որոնք տեղ-տեղ մի քանից վերստ հաստութիւն ունեն: Նը-
րանք իրար վրայ դարսուած են ինչպէս թղթի թերթեր:
Ո՞րքան ժամանակումն են արգեօք նրանք բոլորն աճել:
Հարիւր միջինաւոր գուցէ և աւելի տարիներում:

Բացի դրանից այլևս ո՞րքան ժամանակ են կաւճային լեռները կամաց-կամաց բարձրացել ջրի տակից։ Դրա համար էլ հարկաւորուել են հարիւր հազար տարիներ։

Մի խօսքով՝ ահա ինչ կարելի է եզրակացնել. մարդուս տարիքը տարիներով և օրերով ենք հաշում, իսկ երկրի թանձրութեան տարիքը պէտք է միլիոն տարիներով հաշուենք. Նրան պէտք է չափել իր առանձին և ոչ թէ մարդկային չափով: Իսկ երբ իմանաս, որ երկիրը մեծ տարիք ունի, այն ժամանակ քո շուրջդ էլ կը սկսեն ուրիշ աչքով նայել: Այն ժամանակ կը հասկանաս, որ ամեն մի մանրութիւն, ամեն մի փոքրիկ փոփոխութիւն իր նըշանակութիւնն ունի, նրանք բոլորը ժողովում են ու իշխար վրայ դարսւում, և փոքրից գոյանում է մեծը: Բաղմաթիւ աննշան և աննշմարելի փոփոխութիւններից առաջնում են մեծամեծ փոփոխութիւններ:

Երկրի թանձրութիւնը միլիոնաւոր տարիներով է ա-
ճել՝ ջրից կազմուելով։ Զուրը մի ժամանակ ծածկելիս է
եղել գրանիտեայ ներքնայատակը, երբ դեռևս գոյութիւն
չեն ունեցել կաւ, աւագ և լեռնային ուրիշ տեսակներ,
այլ միայն գրանիտ, գնէյս և ջուր։ Գրանիտն ու գնէյսը
կամաց-կամաց, վլուելով ու փշրուելով փոշի են դարձել և
այդ փոշուց գոյացել են կաւ, աւագ և ուրիշ տեսակներ,
որոնց քանակութիւնն աճել է ու աճել, իսկ գրանիտեայ
լեռները հետզհետէ քչանալով՝ համարեա անհետացել են
երկրի երեսից։ Այժմ նրանք տեղ-տեղ են միայն դուրս
գալիս լոյս աշխարհ, օրինակ, Ֆինլանդիայում, Ամերիկա-
գալիս լոյս աշխարհ, օրինակ, Ֆինլանդիայում։ Իսկ մնացեալ վայրերում նը-
յում և ուրիշ երկրներում։ Իսկ մնացեալ վայրերում նը-

բանց միանգամայն ծածկել են կաւն, աւազն, աւազաքարը, կբաքարը և քարային այլ տեսակները։ Այժմ այդ տեսակներից ներքեւ դժուար է գտնել գրանիտեայ ներքնայտակ։

Այն ինչ նա կայ, միայն թագ է կացել գետնի տակ, մի տեղ աւելի, մի տեղ պակաս խորութեան մէջ։ Եւ ամբողջ երկիրը շրջապատուած է այսպիսի գրանիտեայ ներքնայտակով և գետեղուած նրա մէջ, ինչպէս քարեղէն արկղում։ Այդ արկղի վրայ վերևից ընկած են յատականիստ տեսակները, իսկ ներքեւը գտնուամ է հրախառն-լոյժաւան, ստորերկրեայ տաքութիւնը։

Ո՞րտեղից են գետնի տակ գրանիտը եւ գնէյսը։

Գրանիտը մի այնպիսի քարատեսակ է, որ ջրից չփառուամ ու յատակը նստում։ Կաւերը, աւազները, շերտաքարերը, կրաքարերը և միւս յատականիստ տեսակները մշտապէս կարելի է ճանաչել՝ նրանցից իւրաքանչիւրը մի նիւթից է բաղկացած։ Իսկ գրանիտը բաղկացած է զանազան հատիկներից։ Նա շատ բանով է նման լաւային։ Գրանիտը կազմակերպուել է ստորերկրեայ տաքութեան միջոցով։ Երբէք ոչ մի ծովային մնացորդ չեն գտել նրա մէջ։ Գրանիտը թէն լաւա չէ, բայց նման է նրան։ Օրինակ, լեռների մէջ կան ահագին ժայռեր, բաղկացած քարի միապաղաղ կտորից։ Ժայռի մի ծայրում հին լաւա է, իսկ միւսում—գրանիտ։ Այսպիսի ժայռերում պարզ երեւում է, ինչպէս լաւան գրանիտի է փոխարկւում և այնպէս աստիճանաբար, որ անկարելի է նկատել, թէ որտեղ է վերջանում լաւան և որտեղ սկսում գրանիտը։ Գրանիտի պատճառով գիտնականները երկար վիճում էին։ Ումանք ասում էին, թէ գրանիտը ջրի մէջ է գոյացել, իսկ

միւսները պնդում էին, թէ նա լաւայի առանձին տեսակն է։ Զննեցի գրանիտի զանազան տեսակները, ի նկատի առան բոլոր մանրամասնութիւնները, քննեցին նրանց, վիճացին մի քանի տասնեակ տարիներ, վերջապէս, կարծես, ամեքն էլ պարզ հասկացան, թէ գրանիտը լաւայի առանձին տեսակն է, միայն թէ այդ լաւան սաստիկ փոխուուել է, ըստորում գետնի կամ կէծացած ջրի տակը լինելով՝ շատ դանդաղ է հովացել ու պաղել, և շատ երկար է մնացել կէծացած ջրի մէջ և մեծ ծանրութեան տակ։ Մի խօսքով՝ գրանիտն ու գնէյսը գոյացել են կրակի մէջ, և նրանց խաւերը տաք տեղում են աճել։

Այսպիսով դուքս է գալիս, որ երկրի թանձրութիւնը հետեւեալ կարգով է կազմուել։ Նրա ամենախորին խավը գոյացել է ստորերկրեայ տաքութեան մէջ, իսկ նրա վրայ գտնուող միա խաւերը գոյացել են ջրի մէջ։ Սկզբում գոյացել է այն խաւը, որ տաքութեան միջոցով է կազմուել, ապա այն խաւերը, որոնք ջրից զատուելով յատակըն են նստել։

Կը նշանակէ՝ քարերի հրային տեսակներն աւելի հին են յատականիստներից։ Երբ գեռես յատականիստ տեսակները չկային երկրիս վրայ, հրային տեսակներն արդէն կային։ Իրաւ է, այժմ թէ մէկ, թէ միւս տեսակներն աճում են, բայց հին ժամանակ այդպէս չէր՝ հրային տեսակն արդէն աճել էր, երբ յատականիստը գեռ չէր կարողանում աճել։ Ուրիշ խօսքով՝ ստորերկրեայ տաքութիւնն աւելի հին է ծովերից։ Ստորերկրեայ տաքութիւնն ու վուլկաններն աւելի վաղ գոյութիւն ունեն երկրիս վըրայ, քան թէ ծովերն, ովկիանոսները և գետերը։ Եւ այդ ժամանակը ոչ թէ տարիներով, ոչ թէ հազարամեակներով պէտք է հաշուել, այլ հարիւր միլիոն տարիներով։

Գ Լ Ո Ւ Խ Թ.

Ի՞ՆՉՊԵՍ Ե ԿՐԱԿԸ ԳԵՏՆԻ ԽՈՐՔՆ ԸՆԿԵԼ

Հրեղէն ծով:

Կար ժամանակ, երբ ամբողջ Երկրագնդում չկար ոչ կաւ, ոչ աւազ, ոչ կրաքար, իսկ ստորերկրեայ տաքութիւնը ոչ թէ երկրի ներսն էր, այլ դուրսը։ Այն ժամանակ ամբողջ Երկրագունդը խիստ կէծացած էր և լոյծ, ինչպէս հրահալ լաւա։ Այն ժամանակները դրանիտն անդամ հրահալ դրութեան մէջ էր։ Երկրիս վրայ չկային այն ժամանակ ոչ լեռներ, ոչ քարային խաւեր, ոչ ովկիանուսներ, այլ կար միայն հրեղէն ծով, որ ծածկել էր ամբողջ Երկրագունդը մի ծայրից մինչև միւսը։ Նա ոչ ափ ունէր, ոչ յատակ։ Այդ ծովի մէջ ոչ թէ ջուր, այլ հրահալ լաւա էր։ Հրաշէկ լաւան ինքնիրան փայլում էր ինչպէս արեգակ, իսկ հրեղէն ծովում հրեղէն ալիքներ էին լողում։

Ի՞նչ է ջուրը։

Ապա ուր էր ջուրն այն ժամանակները։ Այն ժամանակ ջուրը բնաւ չկար։ Այնտեղ ուր սոսկալի տաքութիւն է, ջուրը չքանում է, նա լուծում ու բաժանում է երկու գագի, որոնք առանձին անուններ ունեն՝ մէկը կոչում է ջրածին, միւսը՝ թթուածին *). Այդ գագերը բնաւ

*) Ահա թէ ինչու հն այսպէս կոչում այդ գագերը. Ջրածին գագից, երբ նա այրում է, կրկին ջուր է առաջանում (ջուր է ծնուռ), իսկ թթուածինը թթուուտ է տալիս, երբ այրում են օրինակ՝ ածուխը, ծծումը և շատ ուրիշ իրեր։

ջրին նման չեն։ Օրինակ, Ջրաշոգին ցուրտ տեղում կրկին ջուր է դառնուած, իսկ թթուածին և Ջրածին գագերը ցըրտում նոյնն են մնում, ինչ որ էին։ Ջրաշոգին ցրտում սպիտակ է երեւում և տեսանելի է, իսկ Ջրածինը և թթուածինը երբէք չեն տեսնուում, կարծես, նրանք չկան։ Իւրաքանչիւր գագ իր առանձին յատկութիւնն ունի։ Օրինակ, Ջրածինն օդում կարող է այրուել, իսկ Ջրաշոգին երբէք չի բռնկում։ Գիտնականները թթուածինով և Ջրածինով այսպիսի փորձեր արին։ Վերցրին նրանք Ջրածինով լիքը մի շիշ, հանեցին խցանը և մօտեցրին բերանին վառ լուցեկի։ Ջրածինն իսկոյն բռնկեց և ամբողջապէս այրուեց։ Վերցրին յետոյ մի ուրիշ շիշ, որ լիքն էր թթուածինով։ Նրան էլ փորձեցին բռնկեցնել։ Թթուածինը չբռնկեց. բայց այդ միջոցով թթուածինի մէջ մի ուրիշ զարմանալի յատկութիւն երկաց՝ այն, որ նա ինքը չի այրուում. բայց այրուելուն շատ է օգնում։ Օրինակ, խանձողը թթուածինի մէջ ինքնիրան բռնկում ու վառում է այնպիսի պայծառ բոցով, որ մինչև անգամ աչքերի ցաւ է պատճառում։ Աւելի զարմանալին այն է, որ թթուածնի մէջ երկաթն անգամ այրուում է։ Վերցրեց գիտնականը երկաթաթել, ծայրին կապեց ծխացող ածուխ և իջեցրեց թթուածինով աշից։ Յանկարծ ածուխը բռնկեց, լուսաւորուեց և աշից մէջ։ Յանկարծ ածուխը բռնկեց, լուսաւորուեց և աշից այրուեց առանց մնացորդի, իսկ նրանից յետոյ ինքնիրան այրուեց երկաթաթելն ամբողջապէս։ Գիտնականներան այրուեց երկաթաթելն ամբողջապէս։ Գիտնականները զանազան փորձեր արին Ջրածնի և թթուածնի վրայ և տեսան, որ Ջրածինը բնաւ նման չէ թթուածնին, իսկ այդ երկու գագերը նման չեն Ջրաշոգուն։ Ահա հէնց այդ արկու գագին է բաժանուում ջուրը տաք տեղում։ Գիտնականները մի այսպիսի փորձ արին։ Վերցրին մի ամուր մետալեղէն խողովակիկ, հրաշիկացրին նրան և սկսեցին նրա միջոց ջրաշոգի անցկացնել։ Շողին խողովակիկի մի

ծայրից մտնելով՝ միւս ծայրից պիտի դուրս գար. բայց ինչ պատահեց. Մինչդեռ մի ծայրից շոգի էր մտնում, միւս ծայրից սկսեցին դուրս գալ ջրածին և թթուածին՝ երկումն իրար խառնուած. իսկ ջրաշոգի չկար, կորել—անհետացել էր. Գիտնականները վերցրին միանդամից քառորդ ֆունտ ջուր և անցկացրին հրաշիկացրած խողովակիկի միջով, իսկ նրանից ստացած թթուածինը ջրածինի հետ ժողովեցին մի առանձին խիստ ամուր շշի մէջ. Այդ անելուց յետոյ բռնկեցրին շիշի մէջ եղած ջրածինը. Յանկարծ սոսկալի պայմանակացաւ, կարծես, թնդանօթ արձակեցին. Շիշը քիչ մնաց որ տրաքէր. Գիտնականները շուտով հասկացան բանն ինչումն է. պայմիւնից յետոյ շիշի մէջ եղած ջրածինը թթուածինի հետ կորել անյայտացել էր, իսկ նրանց փոխարէն շշի բոլոր պատերը ծածկուել էին ջրակաթիւներով. Այդ ջուրը ժողովելով կշռեցին և տեսան այդտեղ մի զարմանալի երեսյթ. Ջրածինը թթուածնի հետ անհետացել էր, նրանց տեղը բռնել էր ջուրը, որ առաջ չկար, իսկ ժողոված ջրի կշիռը ճիշտ քառորդ ֆունտ եղաւ. Այստեղ հասկացան գիտնականները, թէ բանն ինչումն է. հրաշիկացած խողովակիկի մէջ ջուրը չի ոչնչանում, այլ լուծում է երկու գագի՝ ջրածնի և թթուածնի. այդ գագերը նորից կարելի է միացնել իրար հետ, դրա համար պէտք է կրակ մօտեցնել նրանց. իսկ միանալով նրանք դարձեալ ջուր կը դառնան. Եւ կը ստացուի նրանցից այնքան ջուր, որքան առաջ վերցրած էր. Ուրեմն կրակի միշոցով ջուրը լուծւովի՞ է ջրածնի և թթուածնի, նոյն կրակի միջոցով ջրածինը և թթուածինը միանալով կրկին ջուր են դառնում *):


*) Այսպիսի փոխակերպութիւնները կամ փոփոխութիւնները կոչում են գիտութեան մէջ թիմիական փոխակերպութիւններ, իսկ այդ փոխակերպութիւնները սովորեցնող գիտութիւնը կոչւում

Այս կերպով գիտնականներն իրանց սենեակում նըստած իմացան դարձեալ բնութեան մի մեծ գաղտիք, այսինքն՝ թէ որտեղ էր ջուրը, երբ ամբողջ Երկրագնդում սոսկալի տաքութիւն էր տիրում. Այն ժամանակ Երկրի վրայ բնաւ ջուր չկար. չկային ոչ ծովեր, ոչ ովկիանոսներ, ոչ գետեր ու առուներ և ոչ մինչև անդամ ամպեր, այլ նրանց փոխարէն կար ջրածնի և թթուածնի ահագին քանակութիւն։ Եւ ամբողջ Երկիրը, ինչպէս օդով, շրջապատուած էր ջրածնով և թթուածնով։ Տեղ-տեղ կրակի միջով ջրածինը միանում էր թթուածինի հետ, և նրանցից առաջ էին գալիս ջրաշոգի, ամպեր, ջուր։ Բայց սաստիկ տաքութիւնից, որ ունէր այն ժամանակ Երկիրը, ջուրը կրկին չքանում էր և վեր լուծւում ջրածնի և թթուածնի։

Հեղէն ծովերն արեգակի վրայ։

Արգեօք կարելի՞ բան է, որ մի ժամանակ ամբողջ Երկրագնդի վրայ ամեն տեղ հրեղէն ծով եղած լինի։ Արգեօք առասպել չէ դա։ Կարծես, շատ դժուար հասկանալի, և հրաշալի է թւում։ Այն ինչ իրօք դա ոչ դժուար հասկանալի է, ոչ հրաշալի, այլ այսպէս թւում է լոկ անսովոր լինելուց։ Մարդիկ այնքան ընտելացել են իրանց առասպելներին, որ մինչև անդամ օտարացել են ստոյգ ճշմարտութիւնից։ Նրանց համար այժմ դժուար է մոռանալ առասպելները և ընտելանալ ճշմարտութեանը, բայց պէտք է և կարելի է այդ անել և ահա ինչ կերպով. պէտք է նրանք հաւատան իրանց աչքերին և մարդկային խելքին, պէտք է չմոռանան, որ առասպելները միայն մի քանի ճշմարտանց են օդտակար, իսկ ճշմարտութիւնն օդտակար է ամենին։ Գիտնականները մեծ դժուարութեամբ են դըտ-

նում ճշմարտութիւնը, բայց երբ գտնում են նրան, գըրպանում չեն թաղյնում: Նրանք ասում են, «Ահա ճշմարտութիւնը, ահա ինչ միջոցով հասանք մենք նրան: Իմացէք, ինքներդ դատեցէք ու վճռեցէք, ով է ճշմարիտ ա-




Արտավիժման սկիզբը արեգակի վրայ:

Արևի ծայրեղբերը. Նրանց վրայ ահազին դուրս ցցուածքներ են երեսում, ինչու բոցէ լեզուներ: Այդ ցցուածքները վեր նետուած ջրածին է: Մի քանի ցցուածքներ դէպէ կողք են թերուել ասես թէ սաստիկ քամուց: Այստեղ նըկարուած ցցուածքները երեսում էին 1871 թ. սեպտ. 7-ին ցերեկուայ ժամը 12 և կէսին:

սում և ով սուտու: Անսովոր լինելուց, միանգամայն սուտ կարող է երեալ այն, որ իրը թէ երկիրը մի ժամանակ հրահալ լաւայով էր ծածկուած: Միթէ մեր երկրի պէս մի մեծ երկնային մոլորակ կարող է լաւայով ծածկուած լինել:


Ոչ միայն կարող է լինել, այլ հիմա էլ կան այնպիսի հրեղէն ծովեր երկնային զանազան լուսաւորների վրայ: Կան այնպիսի երկնային լուսաւորներ, որ մինչև այժմ հրաշէկ են մնացած: Օրինակ, մի այսպիսի լուսաւոր է մեր արեգակը, որ լուսաւորում և տաքացնում է սաստիկ հրաշիկացած լինելու պատճառով: Երկնքի բոլոր աստղերն էլ նմանապէս այն պատճառով են լուսաւորում, որ սաստիկ հրաշէկ են: Ամեն մի աստղ նոյնպէս արեգակ է,

բայց որովհետեւ աստղերը շատ են հեռու մեզնից, ուստի թոյլ են լուսաւորում և համարեա աննշմարելի կերպով տաքացնում: Կան այնպիսի գործիքներ և խողովակներ, որոնց օգնութեամբ կարելի է զննել, թէ ինչ է կատարւում արեկի վրայ, կամ թէ ինչ է ինքն արել: Արել մի ահազին հրաշէկ գունտ է, այնպէս հրաշէկ, որ նրա մէջ մինչև անգամ եռ են գալիս, հալուամ երկաթը, ոսկին և միւս մետաղները, և նրանցից բարձրանում է երկաթէ, պղնձէ, ոսկէ գոլորշի, և այդ գոլորշին օդի փոխարէն սլատում է հրեղէն ծովի վրայով: Այստեղ ջրի հետք անգամ չկայ: Կէծացած ամպերն այստեղ մետալեղէն շոգիներից են կազմուած: Արեկի վրայ սոսկալի արտավիժումներ են լինում: Բացւում է նրա խորքը և այստեղից սարսափելի բարձրութեամբ վեր են թռչում Այստեղնկարած է արեկ ծայրեղպհի հրաշիկացած ջրածին և ուրիշ գաւը (ներքեւից): Արեկակի խորքից դուրս է թռել շիկացած ջրածնի զեր: Այսպիսի արտավիժումներ մի ահազին սիւն: Այդ ջրածնի համարեա ամեն օր են պատահում: Լեզուները կախուած են արեգակի երկրագնդում տեսանելի են նը վրայ: Այս սիւնի բարձրութիւնը մոտ 300 հազար վերան: Այս ըանք առանձին խողովակների միշտուրս նետուածքը երկրից երեցով: Երեսում է այլևս արեկի վրայ ւում էր 1871 թ. սեպտ. 7-ին բոցի պէս մի բան, կարծես, ահազին հրեղէն լեզուներ են բարձրանում այստեղ, բարձրանում ու թեքւում, կարծես, քամին մի կողմ է թեքում նրանց:




Պայթիւն արեկի վրայ: Այստեղնկարած է արեկ ծայրեղպհի հրաշիկացած ջրածին և ուրիշ գաւը (ներքեւից): Արեկակի խորքից դուրս է թռել շիկացած ջրածնի զեր: Այսպիսի արտավիժումներ մի ահազին սիւն: Այդ ջրածնի համարեա ամեն օր են պատահում: Լեզուները կախուած են արեգակի երկրագնդում տեսանելի են նը վրայ: Այս սիւնի բարձրութիւնը մոտ 300 հազար վերան: Այս ըանք առանձին խողովակների միշտուրս նետուածքը երկրից երեցով: Երեսում է այլևս արեկի վրայ ւում էր 1871 թ. սեպտ. 7-ին բոցի պէս մի բան, կարծես, ահազին հրեղէն լեզուներ են բարձրանում այստեղ, բարձրանում ու թեքւում, կարծես, քամին մի կողմ է թեքում նրանց:

Այսպէս հրաշէկ է արել: Իսկ երկնքի աստղերից ոմանք աւելի են հրաշէկ և աւելի պայծառ են լուսաւորում քան արել: Նրանք հազարաւոր և միլիոնաւոր անգամ մեծ են երկրագնդից և կարող են հրաշիկանալ, և իրօք հրաշիկացած են, տպա երկիրը ի՞նչու չէր կարող հրաշիկանալ:



Դուրս նետուածք արեգակի վրայ, որը երեսում էր 1871 թ. ցերեկուայ 1 ժ. 15 ր.: Արտավիժման վերը այնպիսի լուսաւոր ներ, որոնք արեկից են հրաշիկացած, և նրա պէս կէծացած չեն: Օրինակ, կայ մի լուսաւոր, որ մոլորակ է և կոչւում է իւղիտէր (*): Այդ լուսաւորը համարեա մէկու



իւղիտէր մոլորակը: Աջ ու ձախ նրա չորս մոլորակները: Մոլորակի վրայ երեսում են թանձր շոգու շերտեր, որոնք փաթաթում են ամբողջ մոլորակը:

(*). Մոլորակ կոչւում են այն երկնային լուսաւորներ, որոնք երկրիս նման են և շրջում են որևէ աստղի կամ արեգակի շուրջը: Այսպիսի շրջան անում է և մեր երկիրը. նա էլ նոյնպէս մոլորակ է, ինչպէս իւղիտէրը, միայն փոքր է նրանից և աւելի մօտ արելն:

կէս հազար անգամ մեծ է երկրից: Աստղաբաշխական խողովակի (հեռավիտակ) միջով կարելի է գննել, որ իւղիտէրը մինչև հիմա էլ շատ կէծացած է, բայց այսուամենայնիւ պաղ է արեկից: Արեկի վրայ բնաւ ջուր չկայ, որովհետեւ սաստիկ ջերմութիւնից ջուրը լուծւում է ջրածնի և թթուածնի, իսկ իւղիտէրի վրայ շատ կան ջրաշոգիներ: Նրանք ահազին և թանձր պատանքի նման ծածկում են մոլորակն ամեն կողմից: Խողովակի միջով այդ շոգիները սաղիտակ փայլուն ամպերի պէս են երեսում և շատ բարձր են շրջում մոլորակի վրայով, որովհետեւ ներքեր շատ տաք է, և ջրաշոգիները չեն մնում նոյնութեամք, լուծւում են ջրածնի և թթուածնի: Իսկ վերը, մոլորակից հեռու, պաղ լինելով շոգիները կարողանում են անփոփոխ մնալ: Այդ շոգիների միջով կարելի է մի քիչ գննել, թէ ինչ է կատարւում իւղիտէրի վրայ: Զօրեղ և լաւ կադմուած խողովակի միջով երեսում է, որ ամբողջ իւղիտէր մոլորակը սաստիկ հրաշէկ է, որից մինչև անգամ գեղնակարմիր գոյնով է երեսում:

Մի խօսքով այժմ էլ կան հրաշէկ երկնային լուսաւորներ, որոնք մինչև հիմա փայլում են մեր գլխի վերել—երկնքում: Այսպիսի լուսաւորները կեղծիքներ չեն, ուրեմն կեղծիք չէ և այն, որ երկիրն էլ ժամանակով այնպէս հրաշէկ է եղել, ինչպէս արել, յետոյ այնպէս, ինչպէս իւղիտէրը, վերջապէս աւելի ևս պաղել է: Արեն, աստղերը, իւղիտէրը և միւս լուսաւորները նմանապէս քիչ-քիչ պաղում են:

Իսկ ի՞նչու են նրանք պաղում:

Ի՞նչու է պաղել Երկիրը:

Որովհետև այլ կերպ լինել չէր կարող Երկիրը կէծացած իր իսկ նրա շուրջը՝ Երկինքը պաղ։ Արևի և Երկրի միջև մոլորակներին և աստղերի միջև սաստիկ ցրտութիւն է տիրում։ Այստեղ ոչ օդ կայ, ոչ տաքութիւն, եւ այդ ցրտութեան և գատարկութեան մէջ են շրջում Երկնային լուսաւորները։ Շրջում են այստեղ և քարեր, որոնք երբեմնապէս Երկնքից ընկնում են Երկրիս վրայ։ Այս քարերը նոյնապէս Երկնային լուսաւորներ են, միայն շատ մանր, են և կոչւում են Երկնաքարեր։ Ահա այդ Երկնաքարերից կարելի է իմանալ, թէ ինչ սարսափելի ցրտութիւն է տիրում մեր գլխի վերեր։ Օրինակ, մի այսպիսի դէպք պատահեց։ Մարդկանց աչքի առաջ մի մեծ քար ընկաւ Երկնքից Երկրի վրայ և ընկնելու սաստիկ թափից խոր մտաւ գետնի մէջ և կտոր-կտոր եղաւ։ Մօտ վագեցին մարդիկ, փորեցին շուրջը և ուզում էին դուրս հանել նրան։ Մի մարդ ձեռքը մօտեցրեց քարի կոտրուած տեղին և իսկոյն յետ քաշեց, քարն այնպէս սաստիկ սառն էր, որ մարդու ձեռքն այրեց։ Զուր ածեցին քարի վրայ, ջուրն իսկոյն պաղեց։ Բայց զարմանալին այն էր, որ քարը դրսից շատ տաք էր, իսկ ներսից սաստիկ պաղ։ Վերեկց վայր ընկնելիս նրա դուրսը տաքացել էր, բայց այդ տաքութիւնը քարի ներսը չէր անցել, ու նրա ներսը այնպէս պաղ էր մնացել, ինչպէս Երկնքում եղած ժամանակ։

Որ արեի, Երկրի և մոլորակների միջոցում սոսկալի սառնամանիք է տիրում, այդ բանը ևս մարդիկ իմացան օդապարիկների օգնութեամբ։ Ներկայումս առանձին տեսակի գնդեր են շինում, որոնք կարող են քսան կամ քսանը հինգ վերստ բարձրանալ Երկրից՝ առանց մարդու։

Այսպիսի գնդերին կապում են մի տեսակ արկղիկ՝ որի մէջը դնում են զանազան գործիքներ։ Դնում են նաև ջերմաչափ։ Այդ ջերմաչափին այնպէս է կազմուած, որ ամենասաստիկ ցուրտն անգամ կարող է ցոյց տալ։ Ահա այդպիսի ջերմաչափները ցոյց տուին, որ 25 վերստ բարձրութեան վրայ թէ ամառ թէ ձմեռ 61 աստիճան սոսկալի սառնամանիք է տիրում։ Սոյնանման սաստիկ սառնամանիքներ Երկրի ցուրտ կողմերում անգամ չեն պատահում։

Ուրեմն Երկնային լուսաւորներն ամեն կողմից շրջապատուած են սաստիկ սառնամանիքով, իսկ ցրտում որևէ մարմնից տաքութիւնն այնպէս է դուրս գնում, ինչպէս ինքնաեռից՝ երբ նրան դուրս ես հանում մի ցուրտ տեղ։ Այսպէս էլ քիչ-քիչ պաղում են ցրտում և արել, և աստղերը, և իւպիտէրը, և միւս լուսաւորները։ այսպէս էլ պաղել ու պաղում է և մեր Երկիրը։ Միլիոնաւոր տարիների ընթացքում նրանք ամենքը պազել են՝ որը շատ, որը քիչ։ Մեծ լուսաւորներն, օրինակ արել, շատ արագ չեն պաղում, նրանցից փոքրերն աւելի արագ են պաղում, իսկ ամենափոքրերը՝ խիստ արագ։ Օրինակ, իւպիտէրը, որ շատ փոքր է արեգակից, նրանից աւելի է պաղել, Երկիրս փոքր լինելով իւպիտէրից՝ աւելի շուտ է պաղել։ Մինչդեռ Երկրի հրահալ լաւան այժմ խոր ներսումն է ծածկուած, իւպիտէրի հրեղէն ծովը մինչև օրս էլ նրա մակերևոյթի վրայ է ալեկոծում։

Մի խօսքով՝ ինչ որ մի ժամանակ Երկրի վրայ է եղել, մինչև հիմա էլ կայ Երկնքում։ Երկինքը կարծես, քացարում, մարդու աչքի առջե է դնում Երկրի հեռաւոր անցեալի պատմութիւնը։

Երկրի անցեալ ժամանակները:

Ուրեմն շատ միլիոն տարիներ առաջ ահա ինչ է պատահել երկրին: Նախ և առաջ ամբողջ երկիրը ծածկուած է եղել հրահալ լաւայի հրեղէն ովկիանոսով, որի վրայով ոչ թէ օդ է տարածուած եղել, այլ հրաշէկ գագեր են պատելիս եղել, օրինակ՝ ջրածին, թթուածին և այլ գագեր: Սկզբում ջուր չի եղել: Երկիրը քիչ-քիչ պաղել է, ըստորում տաքութիւնը նրանից դուրս գալով՝ երկինք է բարձրացել: Երկիրը պաղելով՝ ինքնիրան յայտնուել է ջուրը, ըստորում ջրածինը միանալով թթուածնի հետ՝ նըրանից գոյացել է ջուր: Ուրիշ կերպ չէր կարող լինել: Այդ ժամանակից երկրի վերեր մեծ քանակութեամբ ամպեր են յայտնուել, որովհետեւ այժմեան բոլոր լճերը, ծովերը և ովկիանոսներն այն ժամանակ ամպերի տեսքով օդի մէջ են պատելիս եղել *):

Թէպէտ այդ ամպերից անձրև էլ էր գալիս, սակայն երկրին չէր համառում, այլ սաստիկ տաքութիւնից անձրեւակաթիները կրկին լուծուելով ջրածնի և թթուածնի՝ վեր էին բարձրանում և աւելի սառը տեղի հանդիպելով՝ նորից ջուր դառնում: Ամբողջ ջուրը, որ այժմ ժողովւած

*) Արդեօք կարող է լինել, որ բոլոր ովկիանոսներն ամպի տեսքով պատելիս եղած լինեն երկրի վերեր: Ուրիշ կերպ անկարելի էր: Զուրը կրակարանի կէծացած տախտակի վրայ չի կարողանում մնալ, հետևաբար նոյն ջուրը կէծացած երկրի վրայ էլ չէր կարող մնալ: Այժմ մեր գլխի վերեր խիստ շատ ամպեր կան: Եթէնրանց միանգամից ժողովենք ու ջուր դարձնենք, նրանցից էլ մի ամբողջ ովկիանոս կը գոյանայ: Իզուր չէ, որ անձրեներից մեծամեծ հեղեղումն և գետերի վարարումներ են պատահում, —սա ապացոյց է, որ մեր գլխավերեն, ամպերի մէջ, ահազին ծովեր կան:

է երկրի վրայ՝ առուներում, գետերում, ծովերում և ովկիանոսներում, այն ժամանակ պատառում էր հրաշէկ երկրի վերեն ամպերի տեսքով: Այս կերպ անցան շատ միլիոն տարիներ: Այդ ամբողջ ժամանակի ընթացքում երկիրը պաղում էր ու պաղում, իսկ անձրեսկաթիները և շոգին հետզհետէ մօտենում էին հրեղէն ծովին, որը վերջապէս սկսեց պաղել, ինչպէս այժմեան լաւան: Առաջ լաւան երեսից է պաղում, ապա խորքում: Հրահալ լաւայի վրայով ամենից առաջ կեղեւ է կապում: այդ կեղեր կանգնում է երեսին ու լողում, ինչպէս սառուցը ծովի մէջ, ապա քիչ-քիչ ծածկում է լաւայի ամբողջ հեղեղը: Այդպիսի կեղեւ յայտնուեց մի ժամանակ և հրեղէն ծովի երեսին: Բայց կզբում նա մի քանի տեղ միայն երեաց, յետոյ, միլիոնաւոր տարիներ անցնելով, ամբողջ ծովն էլ ծածկեց: Նա պատեց ամբողջ երկրագունդն այնպէս, ինչպէս որ կեղեր պատում է նարինջը կամ խնձորը: Այդ կեղեր երկար ժամանակ խիստ կէծացած էր ու բարակ և անդադար տեղակ ճաքճքում էր. այդ միջոցին ամեն օր սաստիկ արտեղ ճաքճքում էր էին տեղի ունենում երկրի շատ տեղերում: Լաւան ճեղքերից թափում էր երկրի կեղեկի վրայ, բըշտիկներ էր տալիս: Արտավիժումներն այն ժամանակները շատ աւելի սոսկալի և ուժեղ էին լինում, քան թէ այժմ, շատ նրանք ոչ ոքի մաս չէին հասցնում, ըստորում չըկային այն ժամանակ երկրի վրայ ոչ մարդիկ, ոչ կենդապային այն ժամանակ երկրի վերեւ կամաց-կամաց պաղում էր և նիներ, ոչ բոյսեր: Կեղեր կամաց-կամաց պաղում էր և նետպէտէ հաստանում: Վերջապէս սկսան հասպաղելով հետզհետէ հաստանում: Վերջապէս սկսան նրա վրայ նել նրան վերեւ անձրեսկաթիները: Սկզբում նրա վրայ էին, ինչպէս կրակարանի կէծացած տախտակի ընկում էին, ինչպէս կրակարանի կէծացած տախտակի վրայ, և իսկոյն էլ վեր էին թուշում: Բայց հէնց այդ ժամանակից սկսեց ջուրը սոսկալի կոփւ մղել ստորերկրեայ տաքութեան դէմ: Զուրն ամպերից թափուում էր յորդ

անձրեկի պէս կէծացած երկրի վրայ, իսկ ստորերկրեայ տաքութիւնը նորից ջուրը շոգու փոխարկելով՝ կրկին վեր էր ուղարկում գէպի ամպերը։ Բայց այնուամենայնիւ անձրեկի պատճառով աւելի սաստիկ սկսեց պազել երկրի կեղեր։ Յայտնի է, որ կրակարանի կէծացած տախտակն էլ շուտ կը պաղի, եթէ ջրով ոռոգես նրան, և վերջիվերջոյ այսպէս պաղ կը լինի, որ ջուրը կը սկսի մնալ վրան։ Նոյնը պատահել է և երկրի կեղերն։ Նա՝ միլիոնաւոր տարիներ կոխւ է մղել անձրեկի հետ, բայց վերջապէս երկնքի ցուրան ու անձրել յաղթել են, երկրի կեղեր հաստացել է, և դրանից ստորերկրեայ տաքութիւնն այնքան զգալի չի եղել ջրի համար։ Անցել են դարձեալ մի քանի միլիոն տարիներ, և երկրի կեղերի վրայ յայտնուել է ջուրը, ըստորում արգէն ցամաքելիս չի եղել ստորերկրեայ տաքութիւնից։ Սկզբում երկրիս կեղերի վրայ յայտնուել են ջրշիղներ, ապա լճեր և ապա ծովեր և ովկիանոսներ։ Երկրի վերել պտտող ամպերը քչացել են, իսկ ովկիանոսների և ծովերի ջուրը շատացել։ Կէծացած ջուրը սկսել է մաշել և ողողել երկրի կեղեր և իր ուզած ձկը տալ նրան։ Սկսել է նա փշրել պաղած քարը, կաւ ու աւազ գոյացնել նրանից և մի ուրիշ տեղ դարսել նրանց։ Եւ ահա դրանից ինչ է առաջ եկել. վերեկց, դրսից, երկրի կեղեր անդադար ողողուելով՝ հետզհետէ բարակել է, իսկ ներսից անընդհատ աճենավ՝ հաստացել։ Իսկ թէ քանի վերստ հաստութեամբ է կարողացել ջուրը ողողել երկիրը միլիոնաւոր տարիների ընթացքում, — դժուար է ասել։ Միքան միայն կարելի է ասել, որ ջուրը սաստիկ ողողել է երկրային կեղերի թանձրութիւնը, որովհետեւ մեծ քանակութեամբ կաւ ու աւազ է ժողովել ծովերի և ովկիանոսների յատակում։

Ո՞ր քարային տեսակներից է բաղկացած եղել ամե-



նաառաջին երկրային կեղեց։ Այդ մասին ոչինչ յայտնի չէ, ըստորում նախնական կեղեցի հետքն անգամ չի մնացել, միանգամայն ողողուել է։ Գուցէ նա նոյնպիսի լաւա է եղել, որպիսին այժմ բղխում է հրաբուղիներից։ Գուցէ նա եղել է գրանիտ և գնեյս, որոնք վերևից ողողուել են, իսկ ներքեցից աճել։ Գուցէ գրանիտը և գնեյսը միայն ներքեցից են աճել, իսկ նրանց վրայ ընկած են եղել ուրիշ ինչոր տեսակներ։ Միայն մի բան ճիշտ է, որ գրանիտը և գնեյսը յատականիստ տեսակներից առաջ են գոյացել ստորերկրեայ տաքութեան օգնութեամբ, իսկ յատականիստ տեսակները գոյացել են աւելի ուշ՝ հրային տեսակների աւերումից։


Հրեղէն լները Հավայի կղզում։

Մեծ ովկիանոսում մի կղզի կայ, որ բարձրացած է ջրի տակից ովկիանոսի մէջտեղը։ Այդ տեղերում ովկիանոսը շատ խոր է, — չորս ու մինչև անգամ հինգ վերստ։ Կղզում չորս վերստ բարձրութեամբ հրաբղխային լեռներ կան, որոնց նմանը երկրի վրայ ոչ մի տեղ չկայ։

Կղզու անունն է Հավայի, որ հարիւր վերստ երկայնութիւն ունի, նոյնչափ էլ լայնութիւն։ Նրա ամենամեծ հրաբուղինը կոչւում է Մառնա-Լօա, որ չորս վերստ բարձրութիւն ունի, սակայն այդ բարձրութիւնն աննշմարելի է, ըստորում դարիվերը բոլորովին թեք է և երկարութեամբ քառասուն վերստից աւելի։ Մառնա-Լօա սարը համարեա միմիայն լաւայից է կազմուած, իսկ վուլկանական մոխիր և չեչաքար գրեթէ բնաւ չկայ նրա վրայ։ Լաւան բղխում է լեռան նոյն իսկ գագաթից, ուր ահագին վուլկանական կոկորդ է բացուած։ Սա կոկորդ չէ, այլ իսկական լիճ՝ 13 վերստ երկայնութեամբ և 10 վերստ լայնութեամբ։ Այդ լեռան վրայ պատահած ճանապարհորդը պատմում է.

«Մինչև կոկորդը տանող ճանապարհը համարեա հարթ էր։ Ու յանկարծ մենք մեր առաջ տեսանք հարիւր սաժէն խորութեամբ մի անդունդ։ Անդունդի պատերը աստիճանաբար հեռու էին փախչում աչքից և, կարծես, շրջանաձև պատում էին, իսկ շրջանի մէջ սեխն տալիս լիճը, լաւայի լիճը։ Նրա միջի լաւան թէս երեսից քիչ պաղած էր, բայց և այնպէս կէծացած էր և հրաշէկ։ Երբ մթնեց, մենք տեսանք Մառնա-Լօայի կոկորդում կատարեալ հրեղէն լիճ։ Միջի լաւան հրաշէկ-կարմրած էր, տեղ-տեղ նրանից շոգի էր վեր նետուում և հրացոլք խաղում։ Մենք կանգնած կոկորդի եզերքում զուարճանում էինք հրեղէն լճի տեսքով։ Մենք նայում էինք անդունդի, ուրիշ խօսքով ասած, վուլկանի կոկորդի մէջ։ և ինձ թւում էր; թէ ես նայում եմ ոչ թէ վուլկանի կոկորդի մէջ, այլ նոյն իսկ երկրի ներսը, որ բացուած է այդտեղ։ Դարձեալ ինձ թւում էր, որ ես կանգնած եմ հրեղէն ծովի ափին։ Յայտնի է որ մի այսպիսի ծով մի ժամանակ պատել էր ամբողջ երկիրը։ Այն ծովը պաղել է, իսկ այստեղ, Հավայի կղզում, կարծես, մնացել է դեռ ևս մի փոքրիկ տեղ, ուր մինչև այսօր մարդիկ կարող են տեսնել, թէ ինչպէս է եղել այն ծովը։ Եւ ես երկար ու երկար նայում էի Մառնա-Լօայի կոկորդի հրեղէն լճին և չէի կարողանում աչքս դարձնել նրանից»։

Մառնա-Լօա վուլկանը մինչև այժմ գործում է, նրա ահագին կոկորդից արտավիժումներ են լինում։ Այդ արտավիժումներն առանձին տեսակի են։ Նրանք համարեա մշտապէս առանց երկրաջարժի և առանց մոխրի են կատարուում։ Մառնա-Լօան այսպէս է գործում։ կոկորդի ներսում կոտրատում է հրեղէն լճի երեսի նուրբ կեղեց, լաւան վեր է ելնում բարձր ու բարձր, համանում վուլկանի եզերքին և նրանից էլ վեր բարձրանալով՝ ահագին հոսանքով թափուում զարիվայրով։ Լաւան շատ արագ է հոսում



և կոկորդից խիստ առատութեամբ թափւում։ Եղել են այնպիսի դէպքեր, երբ կոկորդից երեսուն և մինչև անգամ քառասուն վերստից աւելի երկարութեամբ հրեղեղներ են հոսուել, իսկ 1859 թուին յիսուն վերստից էլ աւելի։ Մառնա-Լօան մի անգամում այսքան լաւա դուրս վիժեց։ Սաշատ աւելի է քան ինչ որ վեզուվն արտավիժել է Պօմպէյի աւերումից սկսած։

Արտավիժման ժամանակ լաւան եռ է գալիս Մառնա-Լօայի կոկորդում, իսկ բարձր երկնքում հրացոլք է խաղում։ Պատահում է որ սարի թեք վիշերում ծակեր ու ճեղքուածքներ են բացւում և նրանցից լաւա է հոսում։ Երբեմն նա կատարեալ շատրուանի պէս վեր է խփում 150 սաժէն բարձր։ Այդպիսի հրեղէն շատրուաններ միմիայն չափայի կղզումն են լինում։

Մառնա-Լօայի զառիվայրերում մի վուլկան կայ կիլառուէա անունով։ Այդ վուլկանի կոկորդը, որ լայնութեամբ չորս վերստից աւելի է, նոյնպէս նման է լաւայի ահագին լճի։ Ճանապարհորդներն իջնում են նրա մէջ և գիշերում հրեղէն լճի ափին։ Պաղած լաւայի վրայ կարելի է մանգալ առանց այրուելու, ըստորում տաքութիւնը կեղևից շատ գժուարութեամբ է անցնում։ Աւելի զարմանալին այն է, որ կիլառուէայի կոկորդում, հրեղէն լճի մէջ, կարելի է երբեմն տեսնել լաւայի լողացող կղզիներ։ Մի այսպիսի կղզի, օրինակ, երեաց այստեղ 1882 թուին։ Ինչպէս սառցակտորները լողում են ովկիանոսներում, այսպէս էլ պաղած լաւայի ահագին կտորները լողում են հրեղէն ծովի մէջ։ Բազմաթիւ ճանապարհորդներ են դալիս այդ զարմանալի կղզուն նայելու։

Միլիոնաւոր տարիներ առաջ, երբ հրեղէն ծովը ծածկել էր ամբողջ երկիրը, այդ ծովի վրայ լողում էին այդպիսի կղզիներ, իսկ այժմ նրանց միմիայն Մառնա-Լօա-

և կիլառւէա. ահագին վուլկանների կոկորդներում կարելի է տեսնել: Ճիշտ են ասում այդ վուլկանների վրայ եղած ճանապարհորդները. «Երբ նայում ես նրանց կոկորդի մէջ, ակամայ մտածում ես, թէ հրեղէն ծովս առասպել չէ. պաղած լաւայից գոյացած լողացող կղզիները նոյնպէս առասպել չեն: Նրանք իրօք գոյութիւն ունեն, և նրանց կարելի է տեսնել սեփական աչքերով»:

Գ Հ Ո Ւ Խ Ժ.

Ի՞ՆՉՊԵՍ ԿԸ ԼԻՆԻ ԵՐԿԻՐԸ ՄԻԼԻՌՆԱՌՈՐ ՏԱՐԻՆԵՐԻՑ ՅԵՑՈՅ

Ի՞նչ են անում վուլկանները:

Վուլկանները մեծ գործեր են կատարում:

Նրանց առաջին գործն այս է. վուլկանները դուրս են հանում երկրի ընդերքը: Նրանք դուրս են ձգում երկրի միջից լաւայի, մոխրի, քարերի, չեչաքարի և այլ նիւթերի ամբողջ լեռնակոյտեր: Բացի դրանից նրանք դուրս են արձակում ջրաշողու ահագին թխակեր,— եթէ այդ թխակերը միասին ժողովես մի պաղ տեղ, այդ շողուց ջրի ահագին ծովեր կը գոյանան: Երբ նայում ես վուլկանների գործողութեանն, ամենից առաջ աչքի է ընկնում լաւայի, մոխրի և ջրի արտավիժումը, այս պատճառով էլ դա նըրա գործերի մէջ ամենամեծն է երկում:

Ահա ինչ է պատմում էտնա լեռան վրայ պատահած մի ճանապարհորդ. «Էտնան մի ահագին սար է. նրան նայելիս շունչդ բռնւում է: Էտնայի գագաթը խիստ բարձը է ու ամպերի մէջ կորած, իսկ ստորոտը փռուած է

տասնեակ վերստ տարածութեան վրայ: Էտնային նայելիս ես ակամայ մտածում էի, միթէ այդ ամբողջ լեռն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մոխրի, լաւայի, աւազի և, երկրի խորքից դուրս նետուած, ուրիշ նիւթերի մի ահագին կոյտ: Առաջին հայեացքից մինչև անգամ չես հաւատում դրան, բայց իրօք ստոյդ է: Ես շատ անգամ եմ բարձրացել էտնայի գագաթը, շրջել եմ նրա գառիվայրերում, գիտեմ այդ լեռան վրայի բոլոր փոսերն ու ձորերը: Բայց ամեն տեղ էլ տեսնել եմ միայն լաւա, պնդացած մոխր և այլ ամեն տեսակ քարեր, որոնք դուրս են շվետուած գետնի տակից: Կը նշանակէ՝ այդ լեռան վրայի իւրաքանչիւր քարը, իւրաքանչիւր աւազահատիկը մի ժամանակ գետնի տակ են եղել: Մի խօսքով՝ ամբողջ լեռը գետնի տակ է եղել: Ես նայում էի լեռանը և մտածում, ուրեմն որպիսի ահագին գատարկութիւն պիտի մնացած լինի այժմ երկրի խորքում: Էտնան ահագին սար է, բայց նա իր կոկորդից աւելի շատ բան է դուրս ձգել, որովհետև արտավիժման ժամանակ մոխրի մեծ մասը քամին շատ հեռու տեղեր է տանում: Բացի սրանից քիչ լաւա չէ հոսել ծովի մէջ, որ այժմ ընկած է նրա յատակում: Բացի դրանից քամին և անձրեր, առուներն ու սառուցն ամեն օր, ամեն ըովէ տաշում ու մաշում են լեռը և քանդում նրան: Եթէ նրանք տյդ չանէին, սարն աւելի մեծ, կը լինէր: Այդ բոլորից զատ, էտնան իր կեանքում որքան ջրբաշողի, ծծմբային գաղ և այլ նիւթեր է դուրս վիժել իր կոկորդից: Մի խօսքով՝ էտնան իր կեանքում մեծ քանակութեամբ ընդերք է դուրս հանել երկրի միջից:

«Իսկ երկրի վրայ էտնայից էլ բարձր վուլկաններ կան: Օրինակ, կամչատկայում մի հրաբուղս կայ, որ կոչւում է կլիւչնեան Սօպկա: Նա ուղղակի ծովից վեր բարձրանալով՝ կատարեալ հսկայ է երևում: Կլիւչնեան Սօպ-

կան "էլ՝ ամբողջապէս կազմուած է՝ գետնի տակից արտավիժուած՝ զանազան նիւթերից։ Այդ բոլոր նիւթերն էլ մի ժամանակ երկրի խորքումն էին ընկած։ Արդեօք նրանցից յետոյ չգոյացմաւ երկրի խորքում դատարկ տեղ։ Չգոյացմաւ երկրի վրա եղած և միւս վուկաններից յետոյ։ Իսկ նրանք շատ են։ Ամբողջ երկրի վրայ այժմ չորս հարիւր գործող վուկաններ են հաշուում և հազարից քիչ պակաս այնպիսի վուկաններ, որոնցից համարեա հետք չի մնացել, ըստորում ջուրն, անձրևները և քամին շատ վաղուց հաւասարել են նրանց գետնի հետ։ Այդ բոլոր վուկաններից միմիայն լաւա է մնացել. միւս բոլոր նիւթերը ջուրը տարել է. հէնց լաւայից էլ կարելի է իմանալ, որ այս կամ այն տեղ մի ժամանակ վուկան է եղած։

«Այժմ բաւական վուկաններ կան երկրի վրայ, իսկ հին ժամանակներն աւելի շատ էին, ըստորում այն ժամանակ երկրի կեղեն աւելի նուրբ լինելով՝ հեշտ էր պատռուում։

«Մի խօսքով՝ երկրի վրայ զանազան ժամանակներում խիստ շատ են եղել վուկաններ, այնպէս որ նրանց հիմա հաշուել անկարելի է։ Նրանք բոլորն արտավիժել են երկրի խորքից ամենատեսակ նիւթերի մեծ քանակութիւն։ Եթէ այդ բոլոր նիւթերը միասին ժողովելով՝ դարսէինք իրար վրայ, ապա մի քանի հարիւր վերստ բարձրութիւն և մի քանի հազար վերստ տրամագիծ ունեցող կոյտ կը կազմուէր։

«Միթէ այդպիսի կոյտից յետոյ էլ երկրի խորքում ոչ մի դատարկ տեղ չի գոյացել։

Այսպէս էր դատում ու մտածում գիտնականն էտնային նայելով։ Եւ սկսեց նա հաշուել և համեմատել։ Երկար հաշուելուց յետոյ վերջիվերջոյ հետեւեալ եզրակացութեան եկաւ։

Մի բան ճիշտ է, որ վուկաններ շատ են եղել երկրի վրայ։ Նրանք զանազան նիւթեր շատ են դուրս վիժել, — այդ էլ ճշմարիտ է։ Գուցէ այն էլ ճշմարիտ է, որ այդ նիւթերից մի քանի հարիւր վերստ բարձրութեամբ կոյտ կը գոյանար։ Թէպէտ մեծ է այդ կոյտը, բայց մեր երկրն աւելի մեծ է։ Մեր երկիրը տասներկու հազար վերստ տրամագիծ ունի, իսկ չորս հարիւր յիսուն միլիոն քառակուսի վերստ մակերեսոյթ։ Ի՞նչ դուրս կը գայ, եթէ մի այդպիսի կոյտ ամբողջ երկրի վրայով փուենք։ Դուրս կը գայ այն, որ իւրաքանչիւր վերստին ամենաշատը մի քանի արշին հաստութեամբ լաւա, մոխիր և ուրիշ նիւթեր կարող ենք հաշուել, —ոչ աւելի։

Ուրեմն դուրս է գալիս, որ վուկանները շատ միլիոնաւոր տարիներ են գործել, բայց քիչ գործ են առաջացրել։ Երկրի խորքը, կարծես, չի էլ զգացել նրանց աշխատանքը։ Կը նշանակէ՝ վուկանների արտավիժումը շատ մեծ գործ չէ երկրի խորքի համար։

Առաջացե՞լ է արդեօֆ դատարկ տեղ Երկրի մէջ վուկանների գործելուց յետոյ։

Առաջացել է դատարկ տեղ երկրի խորքում վուկանների այդ աշխատանքից յետոյ։ Ոչ մի դատարկ տեղ չի առաջացել և ահա ինչու։ Ստորերկրեայ լաւան նոյն ովկիանուն է։ Ովկիանունի մէջ ջուրը չի կարող բլրածե կանգնել։ Երբ ջուրը մի տեղում պակասի, մի այլ տեղից ջուրը կը գայ նրա տեղը բռնելու։ Նոյնն է պատահում և լաւային գետնի տակ։ Օրինակ, Մատունա-Լօա վուկանը լաւայի ամբողջ ծովեր է դուրս վիժում դէպի լոյս աշխարհ, իսկ ներքեր, գետնի տակ, ուրիշ տեղերից նոր լաւա է հոսում նրա կոկորդի մէջ։ Այս պատճառով ստորերկրեայ ծովում՝ ոչ մի դատարկ տեղ չի կարող լինել։

Վուկանների մի ուրիշ գործը:

Վուկանները մի ուրիշ մեծ գործ էլ են կատարում, նրանք գետնի տակից տաքութիւն են դուրս հանում: Նրանց այս գործն իսկապէս մեծ գործ է: Տաքութիւնը երկրի խորքից դուրս է գնում լաւայի, մոխրի, շոգու և ուրիշ նիւթերի հետ: Այդ այսպէս է կատարում. վուկանն, օրինակ, լաւա և ջրաշոգի է դուրս ժայթքում. լաւան օդում մնալով քիչ-քիչ սառչում է, այսինքն՝ տաքութիւնը լաւայից և ջրաշոգուց օդի մէջ անցնելով՝ այնտեղից էլ երկինք է գնում: Երկինքը սարսափելի ցուրտ է, ուստի տաքութիւնն անդադար երկրից այնտեղ է գնում: Նա գնում է ամեն տարի, ամեն օր, ամեն ժամ, ամեն ըուլէ և ամեն վայրկեան: Երկնային ցրտութիւնից օդը ոչնչով պաշտպանուած չէ: Պատահում է, օրինակ, ամառուան օր, արեւ սաստիկ տաքացնում է հողը, հողից էլ տաքանում է օդը, և վերջապէս ջերմութիւնն օդից անցնում է երկինք: Ամառային արեգակի ջերմութիւնը ձմեռն է դէպի երկինք գնում, իսկ ցերեկուայ արեւի տաքութիւնը—դիշերը: Տաք երկրում եղած ճանապարհորդները պատմում են, թէ ցերեկն այնտեղ խիստ տաք է, իսկ դիշերը—սառնամանիք: Կայ, օրինակ, Աֆրիկայում ահազին աւազուտ անապատ—Սահարան, ուր համարեա երբէք մարդ չի լինում: Երկինքը նրա վերել համարեա միշտ անամպ է: Կը նշանակէ՝ ցերեկն ամպերը չեն արգելում, որ արեւ նրան տաքացնէ, իսկ դիշերը նոյն ամպերը չեն արգելում, որ տաքութիւնը գետնից դէպի երկինք բարձրանայ: Արևն այնտեղ կէսօրին գրեթէ միշտ գագաթումն է կանգնած լինում, ուստի և սաստիկ այրում է: Նա այնքան սաստիկ է տաքացնում աւազը, որ միանգամայն անկարելի է ուստա-

բորիկ քայլել աւազի վրայ: Մի ճանապարհորդ այդպիսի աւազի վրայ պատահմամբ լուցկիներ ձգեց: Հէնց որ լուցկիները դիպան կէծայած աւազին, իսկոյն բռնկեցին: Իսկ դիշերն ամբողջ տաքութիւնն աւազից դէպի երկինք է բարձրանում, ուրիշ խօսքով՝ աւազը պաղում է: Ճանապարհորդների պատմածով, Սահարայում այնպիսի տեղեր կան, ուր գիշերը գետնում թաղած շշի մէջ ջուրը սառչում է: Մի խօսքով՝ տաքութիւնն ամեն տեղ, երկրի ամեն կողմերում, դէպի երկինք է գնում:

Տաքութիւնը երկինք է գնում և գետնի տակից. ահա թէ ինչպէս ստորերկեայ կրակից տաքանում է երկրի կեղևը, այդ կեղեկի մէջ տաքութիւնն անցնում է մի խաւից միւսը, միւսից երրորդը:

Մի խաւով նա արագ է անցնում, միւսով դանդաղ, բայց և այնպիս անցնում է: Երկրի խորքից նրա համար աւելի դժուար է երկինք գնալ, քան թէ օդից կամ գետնից, այնուամենայնիւ շատ միլիոն տարիներ է, որ նա այս կերպով գնում է և երբէք չի դադարում: Եթէ տաքութիւնը երբեկցէ երկինք չերթայ, ապա հրեղէն ծովերը մինչև հիմա կը ծփային երկրի մակերևոյթում: Երկիրը ամեն ժամանակ պաղել է ու պաղել: Նա այժմ էլ քիչ-քիչ պաղում է:

Ահա այսպիսի գործի էլ օգնում են վուկանները: Նրանք տաքութիւնը դուրս են հանում գետնի տակից:

Կարելի՞ է նկատել, թէ ինչպէս է պաղում Երկիրը:

Երկրի պաղելն անկարելի է նկատել, ըստորում նա խիստ դանդաղ է պաղում: Որպէսզի նա գոնէ մի աստիճան պաղի, հարկաւոր է մի միլիոն տարի: Այդ գործը շատ ու շատ ծանը է կատարուում, այս պատճառով մարդս

չի կարողանում տեսնել նրան։ Այդտեղ էլ նոյնն է լինում ինչ որ ժամացոյց սլաքին։ Երբ նայում ես ժամացոյց ոլաքին, տեսնում ես որ անշարժ է, այսուամենայնիւ գիտես ու հասկանում ես, որ նա անդադար առաջ է գնում, թէս այդ շարժումը մարդկային աչքի համար աննկատելի է։ Իսկ այդտեղ նրա մօտ թռչկոտում—շարժում է վայրկենացոյց սլաքը։ Ահա սրանով կարելի է հասկանալ, որ ժամացոյց սլաքն էլ շարժում է։ Վուկանները նոյն վայրկենացոյց սլաքներն են։ Վուկաններին նայելով ամեն ոք հասկանում է, որ տաքութիւնը դուրս է գալիս նրանց կոկորդով երկրի խորքից։ Արտավիժման ժամանակ տաքութիւնը երկրից դուրս է գալիս մարդուս աչքի առջև։ Կը նշանակէ՝ գետնի տակ նա հետզհետէ աւելի քիչ է մնում։ Դարձեալ հասկանում է մարդս, որ տաքութիւնը երկրային խաւերից էլ է դուրս գնում։ Եւ այսպէս անդադար դուրս գնալով՝ կը գայ մի ժամանակ, երբ բոլորովին կը սպառուի։

Ի՞նչ է լինում երկիրը տաքութեան պակասելուց։

Վուկանները երկրի խորքից դուրս են ձգել բաւական քանակութեամբ ամենատեսակ նիւթեր։ Դրանից երկրային միջուկը, թէպէտ միայն մի քանի արշինով, այնուամենայնիւ փոքրացել է, —կարծես, կուչ է եկել, սեղմուել։ Իսկ ջերմութեան պակասելուց երկրի միջուկն աւելի ևս սեղմում է։

Բանն այսպէս է լինում։ ամեն մի դարբին գիտէ, որ շիկացած երկաթի կտորն աւելի երկար ու հաստ է պաղկտորից։ Օրինակ, վերցնենք հէնց անուի շրջանակը։ Դարբիններն անուի շրջանակը հագցնելու համար ձգում են նրան կրակի մէջ և սպառում մինչև շիկանալը։ Երբ շրջա-

նակը շիկացաւ, աւելի երկարանում է։ Այն ժամանակ դարբինը հազցնում է նրան անուի վրայ, կէծացած շրջանակը ազատ շրջապատում է անիւը։ Իսկ յետոյ, երբ պաղում է, կուչ է գալիս և ամուր սեղմում անիւը։ Օրինակ, այսպիսի մի դէպք եղաւ։ գործարանում մի ահազին խողովակ ճաքեց։ Նրան նորից շինել—սարքելը թանգ կարժենար։ Ի՞նչ պէտք էր անել։ Վճռեցին երկաթով սեղմել նրան։ շինեցին առանձին տեսակի մեծ-մեծ երկաթէ մեխեր, շիկացրին նրանց և պտուտակներով ամրացրին խողովակին։ Երբ մեխերը պաղեցան, այն ժամանակ նրանք մօտ քաշելով խողովակի երկու կէսը՝ ամուր կպցրին միմեանց։ Մի խօսքով՝ կէծացած երկաթը պաղելով կուչ է գալիս։ Նոյնպէս են լինում և պղինձը, և ոսկին, և զանազան քարեր։ Կը նշանակէ՝ նոյնն էլ պատահում է երկրի միջուկին, ըստորում այդ միջուկն էլ միննոյն հրահալ քարերից է բաղկացած։

Միլիոնաւոր տարիների ընթացքում այդ միջուկից շատ տաքութիւն է պակասել, կը նշանակէ՝ այդ երկար ժամանակում նա սաստիկ կուչ է եկել։

Ճի՞՞cs է արդեօֆ, որ Երկրի միջուկը կուչ է եկել։

Երկրի միջուկը մի քիչ փոքրացել է առաջուանից, իսկ երկրային կեղեր, որ միջուկի վրան է, գրեթէ նոյնն է մնացել, ի՞նչ որ առաջ *)։

Միլիոնաւոր տարիներ առաջ նա ծածկոց դարձաւ մեծ գնդի վրայ, իսկ յետոյ աւելի փոքր գնդի վրայ։ Առաջ

*) Տաքութիւնը միայն թափանցում է։ Երկրի կեղեր միջով, իսկ կեղերից դուրս չի գնում։ Երկրի կեղեր աւելի քիչ է կուչ եկել, քան թէ միջուկը։

նա պիրկ շրջապատել էր գունդը. իսկ երբ գունդը կուչ եկաւ, երկրային կեղևի վրայ ծալքեր առաջացան:

Կարճ ասած՝ այսպէս, երբ երկրի միջուկը կուչ եկաւ, երկրային կեղևը տեղ-տեղ ցած նստեց, որովհետև կախուած դրութեան մէջ նա չի կարող մնալ: Այն տեղում, ուր որ երկրային կեղևը ցած նստեց, կորութիւն առաջ եկաւ, որ միւնոյն ծալքն է: Այսպիսի կորութիւններ կամ ծալքեր երկրի գանազան տեղերում յայտնուեցին: Ուրիշ խօսքով ասած՝ լեռներ յայտնուեցին երկրի վրայ:

Երկրին էլ այն պատահեց, ինչ պատահում է թղթէ կլոր փամփշտին: Երբ փամփուշտը լաւ է ուոցրած, նրա վրայ ծալքեր—կնճիռներ չկան, իսկ երբ փամփշտի միջից մի քիչ օդ դուրս գայ, —փամփուշտը կը կնճռոտուի, նրա վրայ ծալքեր—խորշոմներ կը գոյանան:

Այս կերպով երկրի վրայ ծալքեր—լեռներ գոյացան: Յայտնուեցին մեծ ու փոքր, սեալ ու թեք կորութիւններ—ծալքեր: Այնտեղ, ուր կորութիւնները սեալ էին, քարային տեսակները ճաքեցին: Երկրային կեղեռում գոյացան ահազին ճեղքուածքներ, որոնք խոր անցան երկրի ներսը: Այդ ճեղքուածքների երկարութեամբ տեղ-տեղ գետինը ցած նստաւ, նստած տեղը ճնշում գործեց հարևան տեղերի վրայ, իսկ հարևան տեղերը—միւս հարևան տեղերի վրայ: Մի խօսքով՝ ակօսացաւ երկրի երեսը լեռներով և այնպէս էլ մուռմ է մինչև այսօր: Երկրի երեսին, որոշ վայրերում, մինչև այսօր լեռներ են բանում, և ստորերկրեայ ոյժերն անդադար դէպի վեր են հրում երկրի թանձրութիւնը, իմկ միւս տեղերում լեռները ցածրանում են ու ցածրանում, նմանապէս ցածրանում են և երկրային ցամաքը, և ովկիանոսների յատակը, և կղզիները: Մինչև այսօր երկրի վրայ լեռների, ցամաքահողերի, ծովերի, ովկիանոսների և կղզիների վերաշինութիւն է


կատարւում: Եւ կատարւում է շատ միլիոնաւոր տարիներ շարունակ և կը շարունակուի անվերջ: Իսկ եթէ այդ վերաշինութիւնը շարունակուում է, ուրեմն փոփոխութիւն է լինում և հրաբուղիների մէջ: Արդէն ասացինք, որ այդպիսի լեռները յայտնուում են լեռնագոտիներից և մեծ ծովերից ոչ հեռու: Լեռնագոտիները քիչ-քիչ, շատ դանդաղ և մարդկանց համար աննկատելի կերպով անհետանում են երկրի երեսից մի տեղում, երևան են գալիս միւս տեղում: Ծովերը նոյնպէս տեղափոխ են լինում երկրի վրայ:

Ուրեմն փոխուում են այն վայրերն էլ, ուր կարող են վուկաններ լինել: Իրօք էլ այդպէս է: Այնտեղ, ուր այժմ ցամաք է, ժամանակով ծովեր են եղել, եղել են ու անհետացել: Այսպիսի մարած վուկաններ այժմ էլ զանազան տեղերում հանդիպում են: Այժմ նրանք ծովափից մի քանի հարիւր, իսկ երեմն մի քանի հազար, վերստերով հեռու են, մինչդեռ եղել է ժամանակ, որ նրանք մօտ են եղել ծովին: Մինչև այժմ էլ զանազան նշաններից կարելի է իմանալ, թէ որտեղ ժամանակով ծով է եղել, որտեղ վուկաններ: Օրինակ, մարած վուկաններ կան Ֆլորանսիայի Օվէրն նահանգում: Նրանց տեսքից իսկոյն կարելի է ճանաչել, թէն այդ տեղերում արտավիժուաններ բնաւ չեն: պատահում: Հնդկաստանում մի քարձրաւանդակ (սարահարթ) կայ, որ Դէկանեան անունն է կրում: Նա համարեա քառասուն հազար քառակուսի վերստ տարածութիւն է բռնում և ծովի մակերեսոյթից երեք վերստից աւելի բարձր է: Այդ ամբողջ սարահարթը մի ժամանակ լաւա է եղել. լաւան այստեղ մեծամեծ սահանքներով դուրս է թափուել երկրի միջից ու պաղել: Այսպիսով երկրի մակերեսոյթի վրայ պաղած լաւայի ահազին խաւ է գոյացել,—քարի մի առանձին տեսակ, որ կոչւում է բա-

գալու (սևակուճ): Այդ բազալտից է կազմուած գրեթէ ամբողջ Դէկանեան սարահարթը: Այժմ նա ծովին մօտ չէ, իսկ ժամանակով մօտ է եղել, որովհետեւ նրանից ոչ հեռու մինչև այսօր էլ պատահում են քարային այնպիսի տեսակներ, որոնք մի ժամանակ ծովաքարից բաժանուելով յատակն են նստել: Այժմ Դէկանեան սարահարթում ոչ մի վուկան չկայ, բայց բազալտեան պաղած լաւայից կարելի է խմանալ, որ ժամանակով եղել են այդտեղ վուկաններ: Այդպիսի հին վուկաններ երկրի միւս վայրերումն էլ կան: Գուցէ միլիոնաւոր տարիներ անցած՝ ծովը դարձեալ կը մօտենայ Դէկանի սարահարթին, այսինքն այդ սարահարթը կը ցածրանայ, իսկ դրանից երկրի թանձրութեան մէջ ծալք կառաջանայ, ծալքից — ճեղքուածք, իսկ ճեղքուածքի միջով նոր լաւա գուրս կը գայ գեանի տակից: Գուցէ այդ ամենը կը կատարուի մի ժամանակ, բայց դրա համար շատ երկար ժամանակ է հարկաւոր: Իսկ եթէ պատահի էլ այդ, ապա բոլորն էլ կը կատարուի բնութեան մեծ կարգի կամ օրէնքի համեմատ, որ բացատրուած է այս գրքոյի մէջ:

Ի՞նչ կը լինի միլիոնաւոր տարիներից յետոյ:

Սաստիկ տաքացնում է ու պայծառ լուսաւորում արեւը երկնքում, բայց նա էլ քիչ-քիչ սառչում է: Զերմութիւնը նրանից անդադար դէպի երկինք է դնում, կը նըշանակէ՝ միլիոնաւոր տարիներ անցնելուց յետոյ երբեկցէ կը սպառուի: Սաստիկ հրաշէկ են երկնային աստղերը, բայց նրանց էլ երբեկցէ նոյնը կը պատահի, ինչ որ արկին: Աստղերն էլ նմանապէս կը մարեն միլիոն միլիոնաւոր տարիներից յետոյ, որովհետեւ նրանցից էլ տաքութիւն է բարձրանում դէպի երկինք: Աւելի շուտ կը պա-



Լուսնի մակերիսը լուսավոր, օդական լինութիւնը, հովանութիւնը ու կլուծը:

տահի այդ բանը իւպիտէր մոլորակին, իսկ Երկրին նրանից էլ շուտու Մեր գլխավերեւը կան և այնպիսի Երկնային լուսաւորներ, որոնցից արդէն շատ վաղուց է անցել ամբողջ տաքութիւնը դէպի Երկինք։ Օրինակ, լուսինն արդէն շատ վաղուց է պաղել, աւելի վաղ քան թէ Երկիրը, որովհետեւ 49 անգամ փոքր է նրանից։ Հեռադիտակով երևում է, որ լուսնի վրայ ոչ ամպեր կան, ոչ ծովեր. կը նշանակէ՝ այնտեղ ջուր չկայ, կամ եթէ կայ, լուսիներսումն է։ Լուսնի վրայ բնաւ օդ չկայ կամ շատ քիչ է, այսինքն շատ նօսր։ Այսպիսի օդում մարդու չի կարող ապրել, որովհետեւ շնչել անկարելի է։ Հեռադիտակով կարելի է պարզ տեսնել, թէ ինչ կայ լուսնի վրայ, որովհետեւ նօսր օդը չի արգելում գննել այն։ Երկրի վրայի օդը երեք հարիւր անգամ աւելի ծանր է կշռում, քան լուսինը։ Երկրի վրայի օդը թոյլ չի տալիս գետինը սառչելու, եթէ նա չլինէր, Երկիրն աւելի շուտ պաղած կըլինէր։ Իսկ լուսնի վրայ համարեա օդ չկայ, այս պատճառով էլ այնտեղի գետինը աւելի շուտ է պաղել։ Հէնց նրանից էլ է, որ լուսնի վրայ սարսափելի ցուրտ է տիրում, որպիսին երբէք և ոչ մի տեղ չի պատահում Երկրի վրայ։ Երկրիս վրայի ամենասաստիկ սառնամանիքները յիսուն—վաթսուն աստիճան են, իսկ լուսնի վրայ—չորս անգամ աւելի։ Այսպիսի ցրտութեան մէջ ամեն ջուր լուսնի վրայ պիտի սառչի։ Հեռադիտակով երևում են լուսնի վրայ ինչոր սպիտակ փայլուն շերտեր, գուցէ հէնց այդ է պաղած ջուրը։ Նոյնպէս երևում են լուսնի վրայ ահագին մեծութեամբ լեռներ, որոնցից ոմանք ութսուն վերստ բարձրութիւն ունեն։ Մեծ լեռների միջոցներում շատ կան և փոքրերը։ Լուսնական լեռներն առանձին տեսակ են, նման վուլկանական կոկորդների կամ սկաւուակների։ Եթէ մեր Երկրից նայելու լինենք նրանց, օդակների նմանութիւն

են տալիս։ Թէ ինչ լեռներ են դրանք,—յայտնի չէ։ Այդ լեռների թւում կան և մարած վուլկաններ, նման մեր Երկրում եղածներին։ Նրանք աւագի մեծ կոյտերի են նման վերեւում բացուած կոկորդով։ Լուսնի վրայ այնպիսի վուլկաններ շատ կան, որոնք Երկրի վուլկանների նման նստուած են բոյների պէս ճեղքուածքների Երկայնքով։ Լուսնի վրայ էլ քիչ չեն խոր ճեղքուածքներ, որոնք մի քանի հարիւր սաժէն խորութիւն, մի քանի վերստ լայնք և մի քանի տասնեակ վերստ Երկայնք ունեն։ Այդ վուլկանների շուրջը նկատելի են ինչոր մոխրագոյն շերտեր, որոնք կոկորդով վիժող շիթերի են նման։ Գիտնականները կարծում են, թէ այդ շիթերը պաղած լաւա են։ Լուսնի լեռները լաւ են պահպանուում, նրանց չեն ողողում անձրեներն ու առուները, դէս ու դէն չի ցըւում քամին, որովհետեւ լուսնի վրայ ոչ անձրեներ կան, ոչ քամի։ Լուսինը պաղած լուսաւոր է, պտտում է Երկնքում ինչպէս մի հսկայական մեռելի ոսկը։ Լուսինը Երկնքի պէս սառն է, ըստորում բոլոր տաքութիւնը դուրս է գնացել նրանից։ Սակայն եղել է ժամանակ, երբ նա տաք է եղել։ Եթէ նրա վրայ կան մարած վուլկաններ, կը նշանակէ՝ նրա մէջ ժամանակով ստորերկրեայ կրակ էլ է եղել։ Լուսնի վրայ լեռներ կան,—ուրեմն մի ժամանակ նրա կեղեղ նոյնպէս կուչ է գալիս եղել և ծալքեր տալիս։ Այդ բոլորը եղել են ու անցել։ Իսկ դրա համար քանի միլիոն տարիներ են հարկաւորուել, —յայտնի չէ։ Մի բան միայն ճիշտ և հաստատ կերպով կարելի է ասել, որ դրա համար ոչ թէ տարիներ են պէտք եղել, ոչ թէ հարիւրամեակներ, ոչ թէ հազարամեակներ, այլ միլիոնաւոր և տասնեակ միլիոնաւոր տարիներ։

Այդ կերպով են պաղում և միւս Երկնային լուսաւոր-

ները, և նրանց համար էլ հարկաւոր կը լինի շատ հազար
միլիոնաւոր տարիներ:

Մթին, մարած աստղեր:

Երկնքում մարած աստղեր էլ կան, որոնք արդէն
այլևս չեն վառւում ու լոյս չեն տալիս: Ոչ մի հեռաղի-
տակով նրանց չես կարող տեսնել: Մարդիկ նրանց գոյու-
թեան մասին ուրիշ միջոցով են տեղեկացել այդ մթին
աստղերը ժամանակ առ ժամանակ իրանցով ծածկում են
ուրիշ լուսաւոր աստղեր:

Երբ որ լուսաւոր աստղի և Երկրի միջև կանգնում է
այսպիսի մթին աստղ, սա իրանով ծածկում է լուսաւոր
աստղը: Այն ժամանակ Երկրից այնպէս է երեսում, թէ այդ
լուսաւոր աստղն աղօտանում—մարում է: Բայց մի քիչ
ժամանակից յետոյ լուսաւոր աստղիկը դարձեալ դուրս է
դալիս մթին աստղի յետեկից և նորից փայլում Երկնքում:
Մի քանի ժամանակից դարձեալ նոյնն է պատահում, կոր-
չում է աստղիկը կամ աղօտանում, ապա նորից յայտնւում
ու առաջուայ պէս փայլում: Այսպիսի փոփոխական աստ-
ղիկներ քիչ չեն Երկնքում: Երբ հեռաղիտակով նայում ես
նրանց, հիանում ես, թէ ի՞նչու է այդպէս կանոնաւոր
փոփոխւում այդ աստղերի փայլը: Ի՞նչու նրանք մերթ
յայտնւում են, մերթ կորչում, մինչդեռ նրանք բնաւ չեն
կորչում և չեն կարող կորչել, այլ այդ աստղիկների շուր-
ջը պատում են ուրիշ մթին, մարած, մեռած աստղեր:

Իսկ թէ որքան են այդպիսի մարած աստղերը Երկն-
քում,—ոչ ոքի յայտնի չեղ Շատ միլիոնաւոր աստղեր են
վառւում Երկնքում, իսկ մարած աստղերը դուցէ նրան-
ցից էլ շատ են:

ՎԵՐՃԱԲԱՆ

Ի՞նչ է պատմուած այս գրքոյի մէջ

Երկրի խորքում, մեր ոտքերի տակ, սոսկալի ոյժ է
թագնուած: Այդ ոյժը տաքութիւնն է:

Նա խոր թագնուած է գետնի տակ,—և լեռների, և
հարթավայրերի ու դաշտերի, և ծովերի, և ովկիանոսնե-
րի տակ: Նա շատ խոր է թագնուած, ուստի մեր ոտքերը
չեն զգում այն:

Ստորերկեայ տաքութեան ոյժը զանազանակերպ է
ցոյց տալիս իրան: Նրա մասին կարելի է իմանալ փորու-
ածքներից և հանքահորերից, շաղափային ջրհորներից, ջերմ
աղբիւրներից, վուլկանների սոսկալի արտավիժումներից:

Լինում են փորուածքներ և հանքահորեր մէկ վերստ
խորութեամբ, կան շաղափային ջրհորներ Երկու վերստ
խորութեամբ: Զերմ աղբիւրները գետնի տակից, մի քա-
նի վերստ խորութիւնից են բղխում, իսկ լաւան բարձրա-
նալով դուրս է թափուում վուլկանների կոկորդից՝ մի քա-
նի տասնեակ վերստ խորութիւնից: Որքան խոր իշնենք
Երկրի մէջ, այնքան աւելի սաստիկ կը զգանք այնտեղ
ստորերկեայ տաքութիւնը:

Այդ տաքութիւնն ահազին ոյժ ունի: Նա աւելի ու-

Ժեղ է ծովից։ Նրա առջև ընկրկում է ծովը և չի կարուղանում մարել նրան Երկրի խորքում։ Սատրերկրեայ տաքութիւնը թափանցում է ծովի և քարեղէն լեռների միջով և վեր ելնում մի այնպիսի բարձրութիւն, որ մի քանի վերսա բարձր է ծովի մակերեսոյթից։ Սատրերկրեայ ոյժը ցոյց է տալիս իրան հրաբուղիս լեռների ահաւոր արտավիժումներով։

Այսպիսի լեռներ կան Երկրի զանազան կողմերում, — և Եւրոպայում, և Ասիայում, և Աֆրիկայում, և Ամերիկայում, և Աւստրալիայում, և կղզիներում, և ցուրտ Երկրներում։

Բոլոր հրաբուղիները, կարծես, կանոնով են գործում։ Արտավիժումների ժամանակ գետինը ցնցւում է, կոկորդից ժայթքում լաւա, մեծ քանակութեամբ ջրաշողի դուրս դալիս, վեր են նետւում մոխրի և աւազի ահազին թրխպեր, վուլկանական ոռումքեր և քարեր։

Երկրի վրայ գործող վուլկանները երեք հարիւրից աւելի են հաշւում, որոնցից զատ կան և շատ մարածներ։ Նրանք բոլորը նմանապէս Երկրի վրայ առանձին կանոնով են գետեղուած։ Նրանք միշտ նստուած են լինում մեծ լեռնագօտիների, ծովերի և մեծ լճերի մօտակայքում։

Հրաբուղիները գտնուում են լեռնագօտիների շուրջն այն պատճառով, որ այդ տեղերում, Երկրի մէջ, ահազին ճեղուածքներ կան, որոնց միջով լաւան վեր է բարձրանում Երկրի խորքից։ Իսկ ուր որ այդպիսի ճեղքեր չկան, այնտեղ նա չի կարողանում վեր բարձրանալ, որտին ստորերկրեայ ոյժերն անձամբ անկարող են խորտակել Երկրի կեղել. այլ պատրաստ ճանապարհով են լաւան դուրս մղում։

Լաւան ինքը ներքեկից չի գնում, այլ ստորերկրեայ ոյժերն են նրան մղում։ Այդ ոյժերից առաջինը քարային

տեսակների ծանրութիւնն է, իսկ Երկրորդը — ջրաշողի։

Քարային տեսակները, ուրիշ խօսքով, Երկրային կեղել, քիչ-քիչ ցած են նստում, ուստի ճնշում են գործում ներսակողմի կամ Երկրի միջուկի վրայ։ Երկրային կեղել կամաց-կամաց ցած է իջնում Երկրի զանազան տեղերում, իջած տեղերում փոսեր են գոյանում, իսկ այդ փոսերի մէջ լցւում է ովկիանոսների և ծովերի ջուրը։ Այդ փոսերի եղերքներում գոյանում են Երկրային խաւերի կորացումներ, իսկ տեղ-տեղ և ճեղքուածքներ։ Ճեղքուածքների, զանազան արանքների և անցքերի միջով ջուրն ովկիանոսներից, ծովերից և լճերից ծորալով հոսում է խոր Երկրի մէջ։ Համնելով ստորերկրեայ կրակին նա շոգիանում է։ Շոգու ոյժը լաւայի համար ճանապարհ է բաց անում դէպի վեր Երկրի կեղելի ճեղքերով։

Ահա այդ պատճառով վուլկանները միշտ նստուած են լինում մեծ լեռնագօտիներից, ովկիանոսներից և ծովերից ոչ հետու և այն տեղերի մօտ, ուր Երկրային թանձրութիւնը ցած է նստում։

Լաւայի և ջրաշողու հետ ջերմութիւնն էլ է դուրս դալիս գետնի տակից վուլկանի կոկորդով։ Այսպէս ասած՝ Երկիրը ներսից քիչ-քիչ սառչում է, այսինքն ստորերկրեայ տաքութիւնը հետզհետէ պակասում է։

Այսպէս գործը շարունակւում է շատ միլիոնաւոր տարիներ։ Այդ ժամանակամիջոցում շատ տաքութիւն է պակասել գետնի տակից և գնացել դէպի Երկինք։ Ցուրտ Երկինքն ամեն կողմից շրջապատում է Երկիրը, իսկ Ջերմութիւնը զանազան ճանապարհներով Երկրից հեռանում, — և օդի միջով, և հողի միջով, և արտավիժումների ժամանակ, և այլ կերպ։

Շատ միլիոնաւոր տարիներ առաջ Երկիրը բնաւ այնպէս չէր, ինչպէս հիմա, որովհետև այն ժամանակ դեռ

շատ տաքութիւն չէր պակասել Երկրից՝ դեռևս նա խիստ կէծացած դրութեան մէջ էր: Այն ժամանակ Երկրի վրայ ոչ կեղե կար, որ ջուր, ոչ ծով, ոչ ովկիանոս, ոչ լեռ, ոչ դաշտ, ոչ բոյս, ոչ կենդանի: Այն ժամանակ հրեղէն ծով էր ծածկել ամբողջ Երկիրը, ինչպէս որ այժմ էլ ծածկել է մի քանի Երկնային լուսաւորներ:

Քիչքիչ տաքութիւնը Երկրից դէպի Երկինք գնալով Երկրային տաքութիւնը պակասեց: Այն ժամանակ թթուածինը միանալով ջրածնի հետ՝ յայտնուեցին Երկրի վերեն ամպեր, ուրիշ խօսքով՝ ջրաշոգի: Դրա համար պէտք եղան մի քանի միջին տարիներ:

Ապա Երկիրն աւելի ևս պաղեց, նրա վրայ լողացող կղզիներ Երեսացին, որպիսիներ այժմ էլ կան Կիլառէայի կոկորդում: Այսպիսի կղզիներ այն ժամանակ լողում էին հրեղէն ովկիանոսի վրայ, ինչպէս ուասցակորորներ ծովում: Միլիոնաւոր տարիներ անցած, Երկիրն աւելի ևս պաղեց և ամբողջապէս ծածկուեց պաղած կեղեով, իսկ այդ կեղեի վրայ յայտնուեց ջուր:

Այդ ժամանակից ջուրը սկսեց ողողել Երկրի կեղեր: Նա միջինաւոր տարիների ընթացքում ողողել է Երկրակեղեի ահագին թանձրութիւններ: Նրանցից մնացել են միայն կաւ և աւազ, իսկ կաւից և աւազից կազմուել են քարեր—կաւային շերտաքար, աւազաքար և քարերի միւս՝ յատականիստ տեսակները: Հէնց այդ քարատեսակներից կարելի է իմանալ, թէ որքան հին է Երկիրը այսինքն ճիշտ և հաստատ կերպով իմանալ, որ Երկիրն իր սկզբնաւորութիւնից ի վեր շատ ու շատ միջինաւոր տարիներ է անցկացրել:

Միլիոնաւոր տարիների ընթացքում այսպիսի հաստ կեղե է աճել Երկրի միջուկի վրայ, որ ստորերկրեայ տաքութիւնը չի կարողանում յաղթել նրան, և որքան Երկար

շարունակուի ժամանակն, այնքան աւելի կը դժուարանայ նրա համար՝ այդ գործը:

Կը դժուարանայ այդ գործն այն պատճառով, որ գետնի տակից անդադար դուրս է զնում տաքութիւնը; և դրանից Երկրային կեղեն աւելի և աւելի հաստանում է, իսկ Երկրի միջուկն անդադար սեղմւում—կուչ գալիս:

Իսկ դրանից ցած է նստում միջուկի վրայ Երկրակեղենի թանձրութիւնը, և կեղենի վրայ գոյանում են ծալքեր—լեռներ:

Լեռներն ու ծովերը Երեսին մշտապէս տեղափոխ են լինում, ուստի տեղափոխ են լինում և վուկանակը, միւս տեղ նրանք մարում են, միւս տեղ յայտնում: Կան մարած վուկաններ, կան և մինչև այսօր գործողները:

Այս կերպով է անցնում Երկրիս կեանքը: Նա ժամացոյց սլաքից էլ աւելի զանդաղ է անցնում: Նրա ընթացքը նշմարել ոչ միայն դժուար, է, այլև անկարելի: Այն ինչ որ եղել է և ինչ որ պիտի լինի, կարելի է միայն հասկանալ, ըմբռնել խելքով, գիտութիւնով և ջանքով: Իսկ դրա համար հարկաւոր է շրջել զանազան Երկրներում,—և սարերի վրայ, և գետնի տակ, և ովկիանոսի յատակում, ամեն տեղ ամեն հնարաւոր բան զննել, աչքի անցկացնել ամեն մի մանրութիւն, դատել, քննել նրանց և հետամուտ լինել, թէ ինչու է այդ ամենն այդպէս կատարւում աշխարհիս վրայ: Մի խօսքով՝ մեծ և դժուար գործ պէտք է կատարել, մաքառումով պէտք է ճշմարտութիւնը ձեռք բերել: Մի այսպիսի գործ սպահանջում է շատ տարիներ, բերել:

Առանց այսպիսի աշխատանքի անկարելի է ճիշտ և հաստատի տեղեկութիւն ունենալ ստորերկրեայ տաքութիւնական Երկրներից, դանազան ազգութիւններից և ժամանակական ներից:

թեան մասին: Իսկ առանց ճշտութեան և հաւաստիութեան, ոչ գիտութիւնն է գիտութիւն, ոչ ճշմարտութիւնն է ճշմարտութիւն:

Ահա այս գրքոյին էլ ցոյց է տալիս, թէ ի՞նչպէս
մարդկային խելքը հետամուտ եղաւ ճշմարտութեան և
դատաւ նրան և ի՞նչպէս վերջ ի վերջոյ հասկացաւ այն,
ի՞նչ որ կար, ի՞նչ որ կայ և ի՞նչ որ կը լինի:



ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆԱ հրատարակութիւնները

1. I. Ռուբէս. Բէն Հուբ. Տ. I թարգմ. անգլ.	
Փ. Վարդանեան	—75
2. Նոյն, Տ. II	—75
3. Շիրվանղաղէ, Արտիստը	—25
4. Մուրացան. Գէորգ Մարզպետունի, պատ-	
մական վէպ.	1—20
5. Ժուլովսկի. Քնած արքայագուստը պատ-	
կերապ. հէքիաթ. փոխադր. Աթ. Խնկոյեան.	—15
6. Սա. Տեր-Աւետիքեան. Պատմւածքներ	—50
7. Նարդոս. Մահը վէպ.	1—20
8. Ն. Բուբակին. Ստորերկրեայ կրտկ. պատկ.	—50

ՀՀ Ազգային գրադարան



NL0265804

11544

26

2.7